



# ARMENIA / JAPAN

Agency for Cultural Affairs Commissioned Project 2022

Մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ  
փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր 2022


Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության  
պահպանման նպատակով մարդկային ռեսուրսների  
գարգացման միջինստիտուցիոնալ փոխանակման ծրագիր

Մագալի ազգային համալսարան



ARMENIA / JAPAN





Մշակութային գործերով գործակալության կողմից  
արտապատվիրված նախագիծ 2022  
Մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ  
փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր

Հայաստանի  
Հանրապետությունում  
մշակութային ժառանգության  
պահպանման նպատակով  
մարդկային ռեսուրսների  
զարգացման միջինստիտուցիոնալ  
փոխանակման ծրագիր

2022-2023 թվականներին իրականացված նախագծի հաշվետվություն

Մագալի ազգային համալսարան  
Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի  
թանգարաններ

---

**Մշակութային գործերով գործակալության կողմից արտապատվիրված նախագիծ 2022**

**Մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր**

**«Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության պահպանման նպատակով սարդկային ռեսուրսների զարգացման միջինստիտուցիոնալ փոխանակման ծրագիր»**

Published date March 31, 2023

Editor ISHII Mie, OGATA Kazuko

Publisher National University Corporation Saga University Faculty of Art and Regional Design

Address 1 Honjyo, Saga, Saga, Japan, 840-8502

Tel. 0952-28-8349

Design and Printing Aoiro Design (EZOE Tetsuya, KARATSU Rina)

© 2022 Saga University

ISBN 978-4-9911698-8-5


All rights reserved.



## Առաջաբան

Նախ և առաջ իմ խորին երախտագիտությունն են հայտում մեր հայ բարեկամներին, հանձինս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Ճապոնիայի հետ սերտորեն համագործակցելու համար: Ճապոնիայի Մշակութային գործերով գործակալության կողմից Սազա համալսարանին վստահվել է իրականացնել մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր, և մենք ուրախ ենք Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների հետ սույն ծրագրի շրջանակներում համագործակցության հնարավորության համար: Աշխարհն այսօր առերեսվել է կորոնավիրուսային վարակի տարածման հետ կապված դժվարությունների, և ստեղծված պայմաններում ուրախ ենք, որ այս տարի առկա ձևաչափով հնարավոր եղավ հաղթահարել սահմանները և համագործակցել մշակութային ժառանգության պահպանման մասնագետների կարողությունների զարգացման շուրջ: Այս գործունեությունը ամենևին հեշտ չէ, սակայն մենք ուրախ ենք, որ այն կարողացանք իրագործել՝ մեկտեղելով բոլորի կամքն ու ցանկությունը: Խորին շնորհակալություն ենք հայտնում Հայ Առաքելական Եկեղեցու Գերաշնորհ Տ. Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիվի և թանգարանների տնօրեն Հոգեշնորհ Տ. Ասողիկ աբեղա Կարապետյանին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը (նախկին ՀՀ Մշակույթի նախարարություն), Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին, Հայաստանի պատմության ազգային թանգարանին, ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատանը ի դեմս ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորիի և դեսպանության երկրորդ քարտուղար Օնոդերա Բիկայի, Տոկիոյի մշակութային արժեքների հետազոտությունների ինստիտուտին և բոլոր նրանց, ովքեր աջակցել են այս ծրագիրը իրականացնելու համար:

Սազա համալսարանի արվեստի և տարածաշրջանային դիզայնի ֆակուլտետի դեկան՝ Մակո Յոշիգոմի



## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների մասին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր կենտրոնն է և գտնվում է մայրաքաղաք Երևանից ավտոմեքենայով մոտ 30 րոպե հեռավորության վրա: 2000 թվականին Զվարթնոցի պատմական հուշարձանը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Վաղարշապատի մյուս եկեղեցիների հետ ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային արժեքների ցանկում: Մայր Աթոռի տարածքում գտնվող Խրիմյան թանգարանը հիմնվել է 1897թ-ին և հանդիսանում է Հարավային Կովկասում բացված առաջին թանգարանը: 1991 թվականին Հայաստանի Հանրապետությունը դուրս է գալիս ԽՍՀՄ-ի կազմից, սակայն կրոնական գործունեության երկարաժամկետ սահմանափակումների հետևանքով գանձերի մեծ մասը պահոցներում փակված վիճակում էին գտնվում: 1982 թվականին բացվում է Մայր Աթոռի գանձատունը, 2007 թվականին վերաբացվում է Խրիմյան թանգարանը, իսկ 2014 թվականին Ռուբեն Սևակ թանգարանի բացումից հետո գանձերը աստիճանաբար հասանելի են դառնում հանրության համար, բայց կան շատ գանձեր, որոնք վերականգնման կարիք ունեն: Ավելին, վերականգնմանը սպասող Հայ առաքելական եկեղեցու գանձեր կան նաև ամբողջ երկրում: Այդ նպատակով թանգարանի նկուղային հարկը վերանորոգվում և կահավորվում է որպես պահպանման և վերականգնման սենյակ, որը նախատեսված է շահագործման հանձնել 2021 թվականին: Վերջինս ծառայելու է որպես Հայաստանի եկեղեցական գանձերի վերականգնման բազային հաստատություն:



Նկար 1. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ

## **Բովանդակություն**

|   |    |
|---|----|
| <b>Նախագծի նպատակը</b> .....  | 6  |
| <b>Իրականացված նախագիծը · Տևողությունը · Հենակետային հաստատությունը</b>                         | 6  |
| <b>Հայ-ճապոնական համագործակցության ձեռքբերումները տեքստիլի պահպանման և վերականգնման գործում</b> | 7  |
| <b>Դասախոսներ · Մասնակիցներ</b> .....   | 8  |
| <b>Ծրագիր</b> .....   | 9  |
| <b>Հեռավար վերապատրաստման վերաբերյալ հարցման արդյունքներ</b> .....                              | 10 |

## **Առկա ձևաչափով վերապատրաստում**

|          |   |    |
|----------|---|----|
| <b>1</b> | <b>Տեքստիլի պահպանման և վերականգնման վերաբերյալ</b> .....                 | 13 |
|          | <b>վերապատրաստման դասընթացներ</b>   |    |
|          | Մին Իշիի Սագա համալսարան  |    |
| <b>2</b> | <b>«Հնագիտություն» թեմայով վերապատրաստման</b> .....                       | 28 |
|          | <b>դասընթացներ</b>  |    |
|          | Հիրո Կանչա Տոկիոյի մշակութային արժեքների հետազոտությունների ինստիտուտ     |    |
| <b>3</b> | <b>Պահպանման գիտության վերաբերյալ</b> .....                               | 41 |
|          | <b>վերապատրաստման դասընթացներ</b>   |    |
|          | Տոնոհիդե Մացուշիմա Կոչի համալսարան  |    |
| <b>4</b> | <b>Հավելված . գիտական հոդվածներ</b> .....                                 | 51 |
|          | Մակոտո Արիմուրա Տոկայ համալսարան Պատմության ֆակուլտետի հնագիտության բաժին |    |



Նկար 2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

## Նախագծի նպատակը

Սագա համալսարանը, ընդունելով Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանները որպես հենակետային հաստատություն և միաժամանակ համագործակցելով Հայաստանի պատմամշակութային ժառանգության կենտրոնի հետ, ներկայիս՝ երրորդ ֆինանսական տարվա մեջ, իրականացնում է թանգարանային նյութերի, մասնավորապես պատմական տեքստիլի և հնագիտական նյութերի պահպանման և վերականգնման վերաբերյալ գիտելիքների և կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում 1. Մշակութային ժառանգության պահպանման պատմությունը և փիլիսոփայությունը, 2. Լուսանկարում, 3. Գիտական վերլուծություն, 4. Գտածոների չափագրում և արձանագրում, 5. Գտածոների արձանագրման թվայնացում, 6. Տեքստիլի պահպանման և վերականգնման գիտություն և տեխնիկա, 7. Տեքստիլի ոչ նյութական մշակութային արժեքների արձանագրում և պահպանում և 8. Թանգարանային նյութերի պահպանում և վերահսկում թեմաների շուրջ, փորձի և գիտելիքների փոխանակման միջոցով նպաստելով Հայաստանում երիտասարդ և միջին օղակի մասնագետների զարգացմանը:

## Իրականացված նախագիծը

Եռամյա ծրագրի երրորդ տարում կազմվեց դասագիրք, որտեղ ամփոփվեցին հեռավար ուսուցման, ճապոնացի դասախոսների դասախոսությունների և հայ մասնակիցների առաջադրանքների նյութերը: Ինչպես նաև, հետևելով կորոնավիրուսային վարակի տարածման տենդենցներին, հնարավոր դարձավ ժամանել Հայաստան և տեղում (07.09-27.09) իրականացնել վերապատրաստման դասընթացներ: Առկա ձևաչափով դասընթացների իրականացումը և՛ հայկական, և՛ ճապոնական կողմի ցանկությունն էր, որը հնարավոր դարձավ իրականացնել վերջին՝ երրորդ ֆինանսական տարում:

## Տևողությունը

19.04.2022 ~ 31.03.2023

## Կոնտակտային տվյալներ

Սագա համալսարանի արվեստի և տարածաշրջանային դիզայնի ֆակուլտետի դեկան՝ Մակո Յոշիգոմի

Հոնշոմաչի 1, ք. Սագա 840-8502, Սագա պրեֆեկտուրա, Ճապոնիա

Հեռ. (+81) 052-28-8349

## Հայկական կողմի հենակետային հաստատություններ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ

Տնօրեն՝ Հայր Ասողիկ աբեղա Կարապետյան

Վաղարշապատ 110, Հայաստանի Հանրապետություն

Հեռ. (+374) 10 51 71 10





Նկար 3, Տոնհիղեն Մացուշիմա, Մին Իշիի, Գերաշնորհ Ս. Նաթան արքեպիսկոպոս Չովհաննիսյան, ՀՀ-ում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան Ֆուկուշիմա Մասանորի, ՀԲԸՄ-ի նախագահ Վազգեն Յակոբյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արխիպի և թանգարանների տնօրեն չոգեշնորհ Ս. Ասողիկ Աբելա Կարապետյան

## Տեքստիլի պահպանման և վերականգնման ոլորտում Հայ-ճապոնական համագործակցության արդյունքները

- 1 Մշակութային գործերով գործակալության կողմից արտապատվիրված նախագիծ 2021  
 Մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր «Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության պահպանման նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման միջինստիտուցիոնալ փոխանակման ծրագիր»  
 Սագայի ազգային համալսարան, Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ
- 2 Մշակութային գործերով գործակալության կողմից արտապատվիրված մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային աջակցության նախագիծ 2021  
 Հայաստանի Հանրապետության մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային աջակցության ծրագիր «Մշակութային ժառանգության արձանագրությունների արխիվի թվայնացման գործընթացի արագացում և «տեղահանված մշակութային արժեքների» հիմնարար հետազոտություն» Սագայի ազգային համալսարան, Հայաստանի պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն, Ռ-ՕԲԵՄՓ մշակութային ժառանգության արժևորման, կառավարման և պահպանության տարածաշրջանային կենտրոն
- 3 Մշակութային գործերով գործակալության կողմից արտապատվիրված նախագիծ 2020  
 Մշակութային ժառանգության ոլորտում միջինստիտուցիոնալ փոխանակման միջազգային համագործակցության ծրագիր «Հայաստանի Հանրապետությունում մշակութային ժառանգության պահպանման նպատակով մարդկային ռեսուրսների զարգացման միջինստիտուցիոնալ փոխանակման ծրագիր»  
 Սագայի ազգային համալսարան, Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ
- 4 2017-2019 թթ. Տոկիոյի մշակութային արժեքների հետազոտությունների ինստիտուտ  
 «Հայաստանի Հանրապետությունում տեքստիլի պահպանմանը և վերականգնմանը նվիրված վերապատրաստում»
- 5 2014 թ. Արվեստի ստեղծագործությունների հետազոտման և կրթաթոշակների հիմնադրամ  
 «Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների տեքստիլի մշակութային ժառանգության հետազոտում և պահպանում»
- 6 2010-2014 թթ. Ճապոնական հիմնադրամի հովանավորությամբ մշակութային համագործակցության ծրագիր  
 «Հայաստանի պատմության թանգարանում տեքստիլի պահպանմանը և վերականգնմանը նվիրված սեմինար»
- 7 2010թ. Հիրայամա Իկուոյի Մետաքսի ճանապարհի արվեստի թանգարանի դրամաշնորհ  
 «Հայկական տեքստիլի պահպանման և վերականգնման վերաբերյալ ուսումնասիրություններ»

## Դասախոսներ

Մին Իշիի, Սագա համալսարան, Արվեստի և տարածաշրջանային դիզայնի ֆակուլտետ  
Հիրո Կանշա, Տոկիոյի մշակութային արժեքների հետազոտությունների ինստիտուտ  
Միդորի Յոկոյամա, Մայտամայի NHK մշակութային կենտրոն  
Տոմոհիդե Մացուշիմա, Կոչի համալսարան

## Ծրագրային գրասենյակ

Կագուկո Օգատա, Սագա համալսարան

## Համակարգում

Ռուզան Խոջիկյան  
Շուիչի Մինամիե  
Հայ-ճապոնական կրթական և մշակութային փոխանակման կենտրոն «Իրոհա»  
<https://irohacenter.com/ja/>

## Մասնակիցներ

### Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քանդարաններ

Սևակ քին Սարիբեկյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /գեղանկար)  
Մարինե Պետրոսյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /տեքստիլ)  
Հրանուշ Պապիկյան (Պահպանման և վերականգնման մասնագետ /մետաղ)

### Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

Ելենա Աթոյանց(Պահպանման և վերականգնման մասնագետ /մետաղ)  
Մերի Սաֆարյան(Հնագետ)  
Մելինե Մինոնյան(Հնագետ)  
Հովհաննես Բավոյան (Հնագիտական արշավախմբերի անդամ/ մասնակից)  
Սիրանուշ Խալիկյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)  
Լիանա Ժամազորժյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)  
Աստղիկ Մելքոնյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)  
Գոհար Ստեփանյան (Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)  
Վլանա Ֆեդորովա (Մետաղ)

### Հայաստանի պատմության քանդարան

Մարո Հարությունյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /տեքստիլ)  
Գևորգ Վարդանյան(Մետաղի վերականգնող)  
Արինա Գրիգորյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)

## Թարգմանիչներ (հայերեն-ճապոներեն)

Ռուզան Խոջիկյան  
Լիլիթ Խանսույան  
Ջարինե Հովակիմյան  
Շուշան Հակոբյան

## Գրավոր թարգմանություն (անգլերեն) –

Մին Իշիի

## Ստեղծված ուսումնական նյութեր

Տերստիլի պահպանման և վերականգնման վերաբերյալ կազմվել են ուսումնական նյութեր երեք լեզուներով:

Լիլի Մամիկոնյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /գորգ)

Ինեսա Ավագյան (Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)

Մարիամ Պապոյան (Պահպանման և վերականգնման մասնագետ/ թղթի հիմք ունեցող առարկաներ)

### ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

Մարիամ Ամիրյան(Հնագետ)

### Պատմամշակութային արգելոց-քանդարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն

Աստղիկ Մինոնյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)

### Հայաստանի ազգային պատկերասրահ

Լիլիթ Ղազարյան(Պահպանման և վերականգնման մասնագետ /կերամիկա)  
Լիլիթ Աղաբեկյան(Արվեստաբան)

### Ռոմանոսկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն

Գեղեցիկ Գյուրջյան (Նկարիչ-վերականգնող)

### Հայաստանիի գորգերը

Աստղիկ Ամիրբեկյան (Գորգ)

### Հովհաննես Շարաբեյանի անվան ժողովրդական արվեստների քանդարան

Սյուզաննա Ավետիսյան (Գորգ)

# Վերապատրաստում Հայաստանում

**Բացման արարողություն (առցանց) 12.05.2022**

**Հեռավար դասընթաց 01 12.05, 26.05, 09.06, 15.06, 2022**

## Տեքստիլի պահանման և վերականգնման գիտություն

Ժամ: 15:00-17:00 (Ճապոնական ժամանակով), 10:00-12:00 (Հայաստանի ժամանակով)

Դասախոս՝ Մին Իշիի (Մագա համալսարան)  
 Բովանդակություն՝ «Լուծիչներ և լուծելիություն», «Չոր, թթուներ և հիմքեր», «Մակերևույթային ակտիվ նյութեր», «Մպիտակեցում»




**Հեռավար դասընթաց 02 21.07, 26.08, 2022**

## Պահպանման գիտության. հեռավար ուսուցում

Ժամ: 15:00-17:00 (Ճապոնական ժամանակով), 10:00-12:00 (Հայաստանի ժամանակով)

Դասախոս՝ Տոնիիդե Մացուշիմա (Կոչի համալսարան)  
 Բովանդակություն՝ «Ֆուրիե ձևափոխման սպեկտրոֆոտոմետրիայի համառոտ բովանդակությունը եւ մշակութային արժեքների չափման օրինակներ»



**Հայաստանում իրականացված վերապատրաստման դասընթացների բացման արարողություն (առցանց) 07.09.2022**



## Վերապատրաստում Հայաստանում 07.09.2022 ~ 27.09.2022

1. Տեքստիլի պահպանման և վերականգնման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

Դասախոս՝ Մին Իշիի



2.«Հնագիտություն» թեմայով վերապատրաստման դասընթացներ

Դասախոս՝ Հիրո Կանշա



3. Պահպանման գիտության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

Դասախոս՝ Տոնիիդե Մացուշիմա



**Փակման արարողություն, 2022թ. 27.09.2022**







# Հարցաթերթիկ



## Հեռավար վերապատրաստման վերաբերյալ հարցման արդյունքներ

Հեռավար դասընթաց 01

Տեքստիլի պահպանման և վերականգնման



## Մշակութային արժեքների գիտական հետազոտության մասին





# 1

Առկա ձևաչափով վերապատրաստում

Տեքստիլի պահպանման և  
վերականգնման վերաբերյալ  
վերապատրաստման  
դասընթացներ



Մին Իշիի

Սագա համալսարան

# 1 Տեքստիլի պահպանման և վերականգնման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

## Դասընթացի բովանդակությունը

Իրականացման վայրը

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ

Դասախոս

Մին Իշիի, Սագա համալսարան

Քարգմանիչ

Շուշան Հակոբյան

Համառոտ բովանդակություն

Իրականացվել է գործնական աշխատանք տեքստիլի գնման և ուսումնասիրման վերաբերյալ ստերեո մանրադիտակի և օպտիկական մանրադիտակի կիրառմամբ: Գործվածքի ամրակայման մեթոդների շարքում կատարվել է կաշվի և փխրուն մանրաթելերի տոսնձով ամրակայման գործնական աշխատանք: Մասնակիցները խորացրեցին իրենց գիտելիքները լուծիչների և լուծման մասին, որոնք անհրաժեշտ են մաքրման տարբեր մեթոդների համար, և կատարեցին գործնական աշխատանք լվացման մեջ կիրառվող ջրի և մակերեսային ակտիվ նյութերի վերաբերյալ:





**Ծրագիր**

|            |                            |  |
|------------|----------------------------|--|
| 07.09.2022 | 10:30-12:00<br>11:00-15:30 | Բացման արարողություն (հեռավար), դասախոսություն, ծանոթություն մասնակիցների հետ<br>Գործվածքի գնում մանրադիտակով  |
| 08.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի գնում ստերեո և օպտիկական մանրադիտակներով  |
| 09.09.2022 | 10:00-14:00                | Սոսնձով ամրակայում գործվածքի վերականգնման և պահպանման ոլորտում և սոսինձների տեսակները (դասախոսություն)   |
| 11.09.2022 | 11:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի և կաշվի ամրակայում սոսնձով<br>Ջերմության և լուծիչների ազդեցությամբ ձևափոխվող արհեստական սոսինձներով պատրասվեցին սոսնձե թաղանթներ: |
| 12.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի և կաշվի ամրակայում սոսնձով  |
| 13.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի և կաշվի ամրակայում սոսնձով  |
| 14.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . թվային մանրադիտակով սոսնձե թաղանթների գնում և գնահատում   |
| 15.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի և կաշվի ամրակայում սոսնձի կիրառմամբ   |
| 16.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . գործվածքի և կաշվի ամրակայում սոսնձի կիրառմամբ   |
| 18.09.2022 | 13:00-15:00                | Ծանոթություն Հադրոթի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում<br>ասեղնագործության և գորգերի դասընթացներին և սերնդեսերունդ փոխանցման գաղափարախոսությանը           |
| 19.09.2022 | 10:30-15:30                | Մարքում, լուծիչներ, մակերևույթային ակտիվ նյութեր (դասախոսություն)  |
| 20.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . pH-ի չափում   |
| 21.09.2022 |                            | Այց Լոռու մարզի եկեղեցիներ<br>Այց Հաղպատ (10-13-րդ դարեր), Մանահին (10-13-րդ դարեր),<br>Օձուն (6-րդ դար), Լոռի բերդ  |
| 22.09.2022 | 10:30-15:30                | Մակերևութային ակտիվ նյութերի կարգավորման եղանակներ (դասախոսություն)  |
| 23.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . լվացում   |
| 26.09.2022 | 10:30-15:30                | Գործնական աշխատանք . լվացում   |
| 27.09.2022 | 14:00-15:00                | Փակման արարողություն<br>Ռուբեն Սևակ թանգարան<br>Էջմիածին   |

**Էքսկուրսիա 1**

**Այց գործվածքի տեխնիկաները հետագա սերունդներին փոխանցող մշակութային հաստատություն Հաղորթի կենտրոն**

Մին Իշիի

2022թ-ի սեպտեմբերի 18-ին այցելեցինք Երևան քաղաքում գտնվող Հաղորթի կենտրոն: Մա 2020 թվականին Հայաստանի և Ադրբեջանի միջև տեղի ունեցած պատերազմի արդյունքում Լեռնային Ղարաբաղի տարածքից տարհանված բնակիչների համայնքային կենտրոն է: Նրանք գործունեություն են ծավալում՝ ժառանգելով ավանդական գորգերի և գործվածքի տեխնոլոգիաները, բարբառի և կենցաղի ավանդույթները: Քանի որ կենտրոնի գործունեությունը հիմնված է ի սկզբանե Լեռնային Ղարաբաղում գործած կենտրոնի գործունեության վրա, կենտրոնն ունի գործունեության լայն շրջանակ, դասընթացներն իրականացվում են անվճար, իսկ կենտրոն կարող են հաճախել ոչ միայն տվյալ տարածաշրջանի երեխաները, այլ նաև բոլոր քաղաքացիները:



## Էքսկուրսիա 2

## Այցելություն Լոռու մարզի եկեղեցիներ և հնավայրեր

Մին Իշիի

2022 թվականի սեպտեմբերի 21-ին մենք ուղևորվեցինք Լոռու մարզ՝ Երևանից մոտ 3 ժամ դեպի հյուսիս, և Հայ Առաքելական Եկեղեցու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քանգարանների տեքստիլի վերականգնող Մարինե Պետրոսյանի ղեկավարությամբ այցելեցինք Հաղպատի (10-13-րդ դարեր) և Մանահինի վանական համալիրներ (10-13-րդ դդ.), որոնք ընգրկված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում, Օձունի եկեղեցի (6-րդ դար) և Լոռի բերդի ավերակներ:

### ① Հաղպատի վանական համալիր

1996 թվականին վանական համալիրը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Հաղպատ հայերենից թարգմանաբար նշանակում է «հաստ պատ»: Հաղպատի վանական համալիրը սկսվել է կառուցվել 970թ.-ին և ավարտին է հասցվել 991թ.-ին, սակայն կրել է երկրաշարժի և 1105թ-ի Սելջուկ թուրքերի հարձակումներից հասցված վնասները: Վանական համալիրի մաս կազմող շինությունները ներառում են Սուրբ Նշան եկեղեցին և գմբեթավոր Սուրբ Գրիգոր եկեղեցին (1005թ.): Այստեղ է գտնվում Հայաստանի ամենահայտնի խաչքարը՝ Հաղպատի «Ամենափրկիչ» խաչքարը, որը քանդակվել է 11-13-րդ դարերում:



Հաղպատի վանական համալիր

② Մանահինի վանական համալիր

2000 թվականին վանական համալիրը ներառվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում: Վանական համալիրի մաս են կազմում 10-րդ դարի գմբեթավոր Սուրբ Աստվածածին եկեղեցին, Սուրբ Ամենափրկիչ (Կաթողիկե) եկեղեցին և 1063 թվականին կառուցված Գրատունը: Մանահինի վանական համալիրը եղել է Հայ Առաքելական Եկեղեցու հետազոտական կենտրոնը:




Օձունի եկեղեցին

③ Օձունի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Եկեղեցին հիմնադրվել է 6-րդ դարում և վերակառուցվել 8-րդ դարում կաթողիկոս Հովհաննես Օձնեցու կողմից: Եկեղեցին կառուցված է վարդագույն ֆելզիտից, իսկ հյուսիսում և հարավում ունի կամարաշար սրահներ:

④ Լոռի բերդ

11-րդ դարի ամրոց, որը կառուցվել է 1065 թվականին Դավիթ Անհողինի կողմից որպես Կյուրիկյանների թագավորության (Տաշիր-Ձորագետի թագավորություն) մայրաքաղաք: 1239 թվականին նվաճվել է մոնղոլական բանակի կողմից: Այցելեցինք եկեղեցի և բաղնիքի ավերակներ: Հայ մասնակիցների հետ քննարկեցինք այստեղ պեղված մանրաթելերի և այլ իրերի պատմական համատեքստը և նույնականացման եղանակը:



Լոռի բերդ

**Հողված վերապատրաստման մասնակցի կողմից**

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ**

**ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՔՍԻԼԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԱԾ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԱՌԱՐԿԱ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանների վերականգնող՝ Մարինե Պետրոսյան  
 Հայաստանի Պատմության թանգարանի ավագ վերականգնող՝ Մարո Հարությունյան

**Հայկական ասեղնագործության դպրոցներ**

Ասեղնագործությունը դեկորատիվ-կիրառական արվեստի տեսակ է: Այն հնագույն ծագում ունի: Ասեղնագործությունը կիրառվում է հագուստները, գլխարկները, ծածկոցները, գուլպաները, Եկեղեցական հագուստները կենցաղային առարկաները գարդարելու, դեկորատիվ պատկերներ ստեղծելու համար: Ասեղնագործ աշխատանքները ստեղծվում են ասեղով, երբեմն՝ հելյունով, ասեղնագործող մեքենայով՝ բամբակե, վուշե, մետաքսե, բրդե թելերով, օգտագործվում են նաև ուլունքներ, մարգարիտ, ոսկեթելեր, դրամներ և այլն:

Սկզբում օգտագործել են բույսի փշերից կամ ձկան ոսկրերից, ապա՝ փայտից, փղոսկրից, մետաղից սարքած ասեղներ: Հայ էթնիկ մշակույթում յուրահատուկ տեղ է գրավում ասեղնագործությունը: Այն սիրված զբաղմունք էր Հայաստանի բոլոր գավառաքաղաքներում, գյուղերում և հայաբնակ գրեթե բոլոր շրջաններում, հատկապես Վան-Վասպուրականում, Շիրակ-Կարինում, Սյունիք-Արցախում, Արարատյան երկրում, Կիլիկիայում, Կեսարիայում, Կոստանդնուպոլսում ու Թիֆլիսում:

Հայտնի են նաև առանձին քաղաքների անուններով հիշատակված ասեղնագործություններ՝ Վանի, Մարաշի, Այնթապի, Կարինի, և այլն: Գյուղերում այն կանանց առօրյա զբաղմունքներից մեկն էր, իսկ քաղաքներում հասել էր արհեստի աստիճանի, որով զբաղվում էին ոչ միայն կանայք, այլև՝ տղամարդիկ: Եկեղեցական ասեղնագործությունը տարբերվում էր ժողովրդական ասեղնագործությունից: Մետաքսաթել, ոսկեթել եկեղեցական բանվածքները պատկերում էին աստվածաշնչան թեմաներ: Ժողովրդական ասեղնագործությունը, կրում էր առօրյա կյանքի ու կենցաղի բնորոշ գծերը, տարբեր պատմա-մշակութային շրջանների

առանձնահատկությունները: XIX դարի երկրորդ կեսին ձևավորվել էին հայկական ասեղնագործության դպրոցներ՝ Վան -Վասպուրականի, Բարձր Հայքի (Շիրակ-Չավախքի), Փոքր Հայքի, Կիլիկիայի, Այրարատի և Սյունիք-Արցախի: Այս դպրոցներից յուրաքանչյուրն ուներ ասեղնագործության իր առանձնահատկությունները, որոնք դրսևորվում էին կիրառվող թելերի որակի, զարդանախշերի և կատարման եղանակի մեջ: Հայկական ասեղնագործությունը բնութագրվում է ավանդական կարատեսակների բազմազանությամբ: Հայկական ասեղնագործությունն առանձնանում է ինչպես կարատեսակների, այնպես և կարատեսակի համար որպես հիմք օգտագործվող նյութերի բազմազանությամբ, կաշի, կտավ, մետաքս, բամբակ և այլն: Հայկական ասեղնագործությանը բնորոշ են երկրաչափական, բուսական ու կենդանական՝ ոճավորված ու ռեալիստորեն պատկերված զարդանախշերը: Բուսական և կենդանական նախշերն արտացոլում են տարածաշրջանի բուսական, կենդանական աշխարհը, մարդկանց ընկալումներն ու զբաղմունքը: Ինքնատիպ են ասեղնագործ տարագամները: Միջնադարից պահպանվել են ասեղնագործ պատառիկներ. Անիի պեղումներով հայտնաբերվել են XII– XIII դարերի զգեստների, ծածկոցների մնացորդներ, ինչպես և ձեռագրերի կազմաստառներ, XV դարից՝ եկեղեցական զարդարանքներ և այլն:

Հայկական ասեղնագործությունը զարգացել է 3 հիմնական ուղղություններով՝ ժողովրդական (գեղջկական տարագ), քաղաքային (առևտրաարհեստավորական կենցաղ) և եկեղեցական (ծիսական հագուստներ): Տարածված զարդակարերից են շարակարը (շուլալակար, շյուղակար (ցողունակար), հարթակարը (լիցք, ուռուցիկ, գծային և

այն), խաչկարը, կողքակարը, թելքաշը եւ այլն:  
Չնայած մեքենայացված ասեղնագործությունը որոշ  
չափով ազդել է նաև հայկական ասեղնագործության վրա,  
այդուհանդերձ, Հայաստանում շարունակվում են հայկական  
ասեղնագործության ավանդույթները: Գործում են այդ  
արհեստն ուսուցանող տարբեր խմբակներ, հրատարակվում  
են պլեյմներ, կազմակերպվում ցուցահանդեսներ: Այժմ  
կցանկանայի նկարների միջոցով ծանոթացնել ձեզ  
հայկական ասեղնագործության մի քանի նմուշների հետ:

## ՄԱՐԱՇ

«Մարաշի կար». Ինքնատիպ և անկրկնելի են Մարաշի  
կարատեսակները: Այն ստեղծվել է Կիլիկիայի տարածքում,  
Մարաշ քաղաքում: Հնագույն ժամանակներից Մարաշը  
հայտնի է որպես արհեստների և արվեստների  
ծաղկյալ կենտրոն: Մարաշի մշակույթի կարևորագույն  
դրսևորումներից է Մարաշի ասեղնագործությունը, որը  
առանձնակի տեղ է գրավում հայկական ասեղնագործական  
արվեստում: Մարաշի գործը եզակի է և բանվածքի և  
գարդանախշերի մշակման տեսակետից գարդարանքներն  
իրենց նրբությամբ, հարուստ, արտահայտիչ տեսքով  
այժմ էլ հիացնում են բոլորին: Այն սերնդե սերունդ  
ավանդաբար փոխանցվելով մինչև օրս պահպանել է իր  
առանձնահատկություններն ու գարդանախշային համալիրը:  
Այն ունի երկու առանձին ճյուղ, առաջինը՝ հարթակարն է,  
երկրորդը՝ գաղտնակարը, որ հատուկ է միայն Մարաշին:  
Մարաշի հյուսված կարը ասեղնագործական արվեստի  
պատմության մեջ հատուկ տեղ է գրավում:




Նկար 1. Անձեռոցիկ. 50\*50սմ,  
Էսքիզը՝ Լուսինե Մխիթարյանի, Գծագիրը՝  
Լ. Գետրգյանի  
Ասեղնագործությունը՝  
Ա. Մանգասարյանի, 13 տարեկան

## ԱՅՆԹԱՊ

Այնթապի կար Այնթապ քաղաքը գրականության մեջ հիշատակվում է 10-րդ դարից:

Այնթապում բնակվում էր ավելի քան 20.000 հայ: Հայերն զբաղվում էին առևտրով և արհեստներով՝ ոսկերչությամբ, նկարչությամբ և դրոշմագարդմամբ (դաշվածք): Հայերի զգալի մասը զբաղվում էր գորգագործությամբ, կարպետագործությամբ և ասեղնագործությամբ: Այնթապի կարի մեջ կարևորագույնը թափանցիկ կտորն է, որից ուղիղ և հատվող թելեր են հանվում, ապա հենքի թելերի հաշվումից հետո գործվում է զարդանախշը: Զարդանախշեր ստեղծելիս օգտագործվում է նաև հարթակար: Հայկական ասեղնագործության մեջ Այնթապը ամենանուրբ տեսակն է:



Նկար 2. Ստեղծման վայրը՝ Բեյրութ Ստեղծման ժամանակաշրջանը՝ 20-րդ դարի 1-ին քառորդ Նյուրթ՝ բամբակ

## ՈՒՐՖԱՅԻ ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Հայկական ասեղնագործության մեջ կարևորագույն տեղ է զբաղեցնում «Ուրֆայի ասեղնագործությունը»: Անվանումը սկիզբ է առել Ուրֆա քաղաքից, որը հին Եդեսիան էր: Տեղական կարն այնքան ընտիր էր, որ հայտնի էր որպես «Ուրֆայի նախշ», «Ուրֆայի ասեղ», կամ «Ուրֆայի հարթակար» անվանումներով: Այս կարը նույնպես թելաքաշ է, հարթակարի հավելումներով: Ուրֆայի հայ կանանց ձեռքի աշխատանքները 19-րդ դարի վերջում 20-րդ դարի սկզբին արտահանվում էին միջազգային շուկա: Ուրֆայի զարդանոտիվներում գերիշխում են տերևազարդ ծաղիկներ, պարզեցված և ոճավորված: Գույները մեղմ են, հաճախ գուգակցված ոսկեթել բանվածքով:



Նկար 3. Ստեղծման վայրը՝ Ուրֆա Ստեղծման ժամանակաշրջանը՝ 19-րդ դարի վերջ Նյուրթ՝ բամբակ, մետաքս, մետաղական թել


## ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՏԵՔՍՏԻԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԿԱՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ

1a, 16, 2, 3 Մաքրակար — այս կարերը օգտագործվում են թափվող կտորների եզրերը կարելու համար:

3 Կցակար կամ օղակակար

4, 5, 6 Գաղտնակար

7 Խաչկար — այն կիրառվում է հաստ, չթափվող կտորների եզրերը կարելու կամ գաղտնակարելու համար:



Նկար 4

Բացի ձեռքի կարերից, կան նաև զարդակարեր, զիգզագակարեր, որոնք կիրառվում են հագուստի արտաքին մասի վրա, որոշ դեպքերում նաև ամրացնելու համար:

### Վերականգնված թանգարանային առարկա

Մայր Աթոռի թանգարաններում իրականացվող տեքստիլ իրերի վերականգնումը իսկապես նոր կյանք և նոր շունչ է տալիս թանգարանում պահվող հնամենի գործվածքին: Հայկական ասեղնագործությունը այնքան մեծ տարածում ունեցող հնագույն արհեստներից է, որ դարերի ընթացքում նույնիսկ ձևավորվել են տեղական ստեղծագործական դպրոցներ: Մեր թանգարանային ստեղծագործություններն այնքան վարպետությամբ և զեղեցիկ են ասեղնագործված, ստեղծված, որ ասես այդ գործվածքին մատներ չեն դիպչել: Թանգարանում ցուցադրվող և ֆոնդերում պահվող գործվածքները ստեղծվել են տարբեր արհեստանոցներում ինչպես Հայաստանում այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս: Գործվածքների զգալի մասը անհատական ստեղծագործություն է և ամենակարևորը կանանց ձեռքի աշխատանք: Թանգարանային առարկան

ընդունվելով վերականգնման բաժին կատարվում է մի քանի հետազոտություններ, նախ ստուգվում է իրի վիճակը, թե ինչ ներկ է օգտագործված, ներկի կայունությունը, թելերի զգայունությունը, խտությունը, մանվածքը, ֆիզիկական վնասվածքները, կեղտոտվածությունը, լաքաների առկայությունը, չափվում և լուսանկարվում է: Անհրաժեշտության դեպքում իրը լվացվում է չեզոք նյութերով, պահպանելով իրի անվտանգությունը: Երբեմն կատարվում է կտորի ներկում համապատասխանեցնելով ցուցանալից գործվածքի հիմքի գույնին և հյուսվածքին: Վերականգնման համար օգտագործվում են բացառապես բնական նյութեր: Այս ամենը արձանագրելուց հետո նոր միայն իրը պատրաստվում է վերականգնման նախապատրաստական փուլին:



**Բազպանների վերականգնման տեխնիկան**

Առաջին իրը, որ ձեզ ցանկանում են ներկայացնել եկեղեցական ծիսական հանդերձանքներից է: Բազպանը պատրաստված է Գաղաթիայում,(1714թ 34.5/34\*25/24.5սմ)  
Նյութը- մետաքս, արծաթաթել, ոսկեթել մետաքսաթել ասեղնագործություն է, մարգարիտ, կիսաթանկարժեք քար: Բազպանները ունեն ծիսական նշանակություն և կիրառում են ծիսական արարողության ժամանակ: Բազպանները կրում են պատարագիչ հոգևորականը:  
Բազպանների վրա կիրառվել է մետաքսաթելով հարթակար ասեղնագործություն: Իսկ ոսկեթել և արծաթաթելը ուռուցիկ հարթակար ոլորքով ասեղնագործություն(ռոկոկո): Բազպանները վերականգնելու համար օգտագործվել է մետաքսե կտոր, մետաքսե և պոլիէսթեր թելեր, աստառը, քուղերը, ժապավենը անրացնելու համար օգտագործվել է գաղտնակար կարատեսակը:  
Այս ամենը ցանկանում են ներկայացնել լուսանկարի միջոցով:



Նկար 5. 1714թ, 34.5/34\*25/24.5 սմ  
Նյութը՝ մետաքս, արծաթաթել, ոսկեթել, մետաքսաթել ասեղնագործություն, մարգարիտ, կիսաթանկարժեք քարեր



Նկար 6


Որպես վերադիր շուրալակարի՝ թե ամրակայող կարածնի, թե տվյալ առարկայի ասեղնակար գեղագարդման տեխնիկական մասի գուգորդման օրինակ՝ կարելի է ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանի նոր և նորագույն պատմության բաժնի իրային ֆոնդում պահպանվող պատմական, գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող այս բաժնոնակի ամբողջական մաքրման, վերականգնման և ամրակայման ընթացքի ավարտական փուլերից մեկի՝ հարուստ և ծավալային վերադիր հարթակարի քանդված, մաշված թելերի ամրակայումը: Բաժնոնակը, որ թվագրվում է 19-րդ դարավերջով, պատկանել է հայ ռազմաքաղաքական, պետական գործիչ Գ. Նժդեհին, մետաքսե ոլորուն թելերով ամբողջությամբ ասեղնագործված է վերադիր հարթակարի տեխնիկայով: Այս թելերի ամրացման համար վարպետն օգտագործել է բաց գույնի բամբակյա բարակ թել, գործածված է վերադիր շուրալակարի տեխնիկան: Քանի որ շատ հատվածներում ասեղնագործությունը քանդված, թելերը թուլացած կամ պոկված էին, կատարվել է այդ հատվածների ամրակայում՝ դարձյալ վերադիր շուրալակարի կիրառությամբ՝ հավատարիմ մնալով թե կիրառված տեխնիկային, թե կարածնի՝ որպես ինքնուրույն ամրակայող կարի գործառնական նշանակությամբ:

Հայկական ասեղնագործության մեջ

գործածվում են գանազան կարածներ գանազան տեխնիկաներով: Շատերը պարզ են, հասարակ ու տարածված, մյուսներն ավելի բարդ, եզակի, հետաքրքիր իրենց տեխնիկական լուծումներով, տարբեր կարածների միաժամանակյա կիրառությամբ: Դրանց տեսակներն ու ենթատեսակները բազմազան են, ուսումնասիրությունը, դասակարգումն ու խմբավորումը՝ թե ձևի, թե կարի տեխնիկայի առումով, բարդ: Թանգարանային նշանակության պատմական գործվածքի վերականգնման և ամրակայման գործում գանազան կարածների կիրառությունն ունի ոչ թե գեղագարդման դեկորատիվ, այլ ամրակայող գործառույթ: Ելնելով մշակութային ժառանգության վերականգնման և ամրակայման գործի հիմնական սկզբունքներից՝ գործվածքի վերականգնման բնագավառում կիրառելի և հարմար կարատեսակները, համապատասխանեցնելով և բավարարելով առարկայի ինդիվիդուալ վերականգնողական խնդիրներին, կարող են լինել հիմնականում պարզ, օրիգինալ հյուսվածքը չժանրաբեռնող, քիչ նկատելի, հեշտ իրագործելի ձևեր: Թերևս պատճառներից մեկը, որ դրանք շատ միանման և միատեսակ ընդհանուր են, վերականգնողական շատ դարձուցների պարագայում:



Նկար 7




Նկար 8

- Օգտագործված լուսանկարների ցանկ
1. Լուսինե Մլիսթայան, «Մարաշի ասեղնագործության գաղտնիքները», 2010 թ., էջ 63
  2. Հրազդան Թորմաճեան, «Այնթապի ասեղնագործություն», 2015 թ., էջ 396
  3. Հրազդան Թորմաճեան, «Ուրֆայի ասեղնագործություն», 2014 թ., էջ 241
  4. <https://voskebilazuk.wordpress.com>
  - 5, 6. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարաններ
  - 7, 8. Հայաստանի Պատմության թանգարան

## Առկա ձևաչափով վերապատրաստման հարցման արդյունքներ

Առկա ձևաչափով վերապատրաստում 1

Տեքստիլի պահանջման և վերականգնման գիտության դասընթաց



### Վերապատրաստման մասին տպավորություններ

- Շնորհակալություն եմ հայտնում բոլոր կազմակերպիչներին և Իշի Սանին հոգատար ու մանրակրկիտ աշխատանքի համար:
- Հաճելի ծանոթություններ և օգտակար ձեռքբերումներ:
- Սեմինարը շատ հետաքրքիր էր և ինֆորմատիվ: Հիանալի ժամանակ անցկացրեցինք, հանդիպեցինք շատ լավ մարդկանց և հետաքրքիր գրույցներ ունեցանք: Շնորհակալ եմք ամեն ինչի համար:
- Սեմինարը շատ հետաքրքիր էր: Շնորհակալ եմ կազմակերպիչներին նոր գիտելիքների և ինֆորմատիվ սեմինարի համար:
- Շատ կարևոր և օգտակար էր:



# 2

Առկա ձևաչափով վերապատրաստում

«Հնագիտություն» թեմայով  
վերապատրաստման  
դասընթացներ



**Հիրո Կանչա**

Տոկիոյի նշակութային արժեքների  
հետազոտությունների ինստիտուտ

# 2 Հնագիտության վերապատրաստման դասընթացներ

## Դասընթացի բովանդակությունը

|                         |  |
|-------------------------|--|
| Իրականացման վայրը       | Հայաստանի պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն  |
| Դասախոս                 | Հիրո Կանչա, Տոկիոյի մշակութային արժեքների հետազոտությունների ինստիտուտ   |
| Քարգմանիչ               | Ռուզան Խոջիկյան  |
| Քարգմանչի օգնական       | Ջարինե Հովակիմյան  |
| Համառոտ բովանդակություն | Հնագիտության բաժնում իրականացվեց թվային հայելային ֆոտոխցիկի միջոցով հնագիտական գտածոների լուսանկարման եղանակների և թվային արխիվի մասին դասախոսություն և գործնական աշխատանքներ: Գործնական աշխատանքները իրականացվել են 2021 թվականին JICA-ի կողմից Հայաստանի պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին տրամադրված ֆոտոխցիկների միջոցով: Դասախոսության ժամանակ խոսեցինք թվային արխիվի, մասնավորապես հնագիտական արխիվային նյութերի անալոգային տվյալները թվայնացնելու ու հանրությանը հասանելի դարձնելու կարևորության, ինչպես նաև տվյալների խաչաձև հղումների և ձևաչափի, ինֆորմացիան պարբերաբար թարմացնելու և հետագա սերունդներին փոխանցելու անհրաժեշտության մասին: Զննարկումներ եղան նաև հնագիտության ոլորտում արձանագրությունների թվայնացման նշանակության վերաբերյալ: |



**Ծրագիր**

|            |              |  |
|------------|--------------|--|
| 07.09.2022 | 10:30 -11:00 | Բացման արարողություն (հեռավար), դասախոսություն, ծանոթություն մասնակիցների հետ  |
|            | 13:00 -15:30 | <p>Հնագիտության և բնական գիտությունների մասին ներածություն (դասախոսություն)</p> <p>Թվային հայելային ֆոտոլսցիկի առանձնահատկությունների ու կառուցվածքի մասին (դասախոսություն)</p>  |
| 08.09.2022 | 10:30 -15:30 | <p>Գործնական աշխատանք . թվային հայելային ֆոտոլսցիկի օգտագործմամբ գտածոների լուսանկարում</p> <p>Գործնական աշխատանք . գտածոների լուսանկարում</p> <p>Գործնական աշխատանք . հորիզոնական ուղղությամբ լուսանկարելու եղանակները, բացվածքի մեծության և լուսավորության դիրքի կարգավորումներ</p>  |
| 09.09.2022 | 10:30 -15:30 | <p>Գործնական աշխատանք . գտածոների լուսանկարումը վերևից</p> <p>Գործնական աշխատանք . նմուշների ուղղահայաց ուղղությամբ լուսանկարելու եղանակները տարբեր լուսանկարման պայմաններում</p> <p>Գործնական աշխատանք . լուսանկարների մշակում և խմբագրում</p> <p>Գործնական աշխատանք . լուսանկարների խմբագրում լուսանկարների խմբագրման ծրագրի միջոցով</p> |
| 10.09.2022 | 10:00 -15:00 | <p>Այց հուշարձան</p> <p>① Վերին Նավեր, մ.թ.ա 2000, արքայական դամբարան</p> <p>② Վերին Նավեր, մ.թ.ա 800, դամբարան</p> <p>③ Այցելություն Աղցքի հուշարձան, Հայաստանի ամենաախին եկեղեցու ավերակներ</p>  |
| 12.09.2022 | 10:30 -15:30 | <p>Լուսանկարման գործնական աշխատանքների վերաբերյալ լրացուցիչ բացատրություն (դասախոսություն)</p> <p>Գիտական հոդվածի և հաշվետվության գրելան (դասախոսություն)</p> <p>Թվային արխիվը հնագիտության ոլորտում (դասախոսություն)</p>  |



Էքսկուրսիա 3

# Այց հնավայր

Հիրո Կանչա

2022 թվականի սեպտեմբերի 10-ին Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի նախկին փոխտնօրեն Հակոբ Միսնյանը մեզ ուղեկցեց Վերին Նավերում գտնվող մ.թ.ա. 1700 թ.-ի թվագրվող դամբարան, Ուրարտու դարաշրջանի դամբարան (9-6 դարեր), Աղձքում գտնվող եկեղեցի և հայկական թագավորական դամբարանի պեղավայր:

### ① Վերին նավեր

Վերին Նավերը մոտ 450 հա մակերես զբաղեցնող տարածք է, որտեղ այս անգամ այցելեցինք երկու դամբարան:

### Դամբարան 1 (մ.թ.ա. 1700թթ.)

Առաջին վայրը շուրջ 15 մ տրամագծով շրջանաձև քարե գերեզման է, մ.թ.ա. 1700թթ.: Դատելով դրա չափերից՝ ենթադրվում է, որ այն տեղի ցեղապետի գերեզմանն է: Բացի մարդկային ոսկորներից, կենտրոնական քարե խցիկից պեղվել է փայտե մահճակալի մի մասը, որը, ենթադրաբար, օգտագործվել է հանգուցյալին տեղափոխելու համար: Մի քանի նիզակներ խրված են եղել մարդու ոսկորների մեջ, և ենթադրվում է, որ նա գոհվել է մարտում: Ստացված ԴՆԹ-ից պարզ է դառնում, որ ստացված արդյունքները նույնական են ներկայիս հայերի ԴՆԹ-ի հետ, և արդյունքները հրապարակվել են Science ամսագրում (Lazardis, I., et al. 2022. The Genetic History of the Southern Arc: A Bridge between West Asia and Europe, Science 377 (6609):) Ծրջակայքում կառուցվել են մի շարք փոքր շրջանաձև քարե դամբարաններ, որոնք, ենթադրաբար, պատկանում են ցեղապետի ժառանգներին:

### Դամբարան 2, Ուրարտու դարաշրջան (մ.թ.ա. 9-6-րդ դարեր)

Երկրորդ վայրը գտնվում է բլուրի հարավային լանջին, որտեղ տեղակայված էին 7-8 մետր տրամագծով շրջանաձև






երկու դամբարան (Ուրարտու դարաշրջան, մ.թ.ա. 9-6-րդ դարեր): Հիմնաժայռի մեջ փորված քարե խցիկներից պեղվել են արծաթյա զարդեր: Մովորաբար քարե խցիկի երկար առանցքը ուղղված է հյուսիս-հարավ, սակայն այստեղ այն ուղղված է արևելք-արևմուտք, ինչը հազվադեպ է հանդիպում:



② Աղձը

**Եկեղեցու ավերակները և չայկական թագավորական դամբարանը**

Այն գտնվում է համանուն գյուղի բլրում: Պեղումները իրականացվում են չորս կողմից մոտ 30 մետր չափով: Ժամանակի ընթացքում կենցաղային շերտ է կուտակվել և ամենաներքևի շերտը մոտ 1 մ-ի հասնող շրջանաձև հոր է: Քանի որ տեղում գտնվել են Հին հելենիզմի դարաշրջանի կառույցներ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ժամանակաշրջանի տներ և այլ քարե շինություններ, այն ունի բարդ շերտագրություն: Եկեղեցու ավերակները հայտնաբերվել են հյուսիսային կողմից, և ենթադրվում է, որ այն Քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց հետո եղել է ամենաառաջին եկեղեցիներից մեկը: Խորանից պեղվել է մի սարկոֆագ, որում թաղված է եղել տվյալ ժամանակի հայ արքաներից, ով կոչվել է Պարսկաստանի դեմ:



Հողված վերապատրաստման մասնակցի կողմից

## Հայաստանի Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի գործունեության մասին

Ելենա Աթոյանց (Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն)

ՀՀ ԿԳՄՄ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ը այսօր հանդիսանում է հուշարձանների ոլորտում ամենից ակտիվ գործունեություն իրականացնող կազմակերպություններից մեկը: Կենտրոնի կարևոր և առաջնային գործառույթներից մեկը Հայաստանի ողջ տարածքով ավիված հսկայական քանակությամբ հուշարձանների վկայագրումն ու գոտիավորումն է: Ամեն տարի այս առաքելությամբ կազմված խմբերը գործողվում են Հայաստանի տարբեր ուղղություններով՝ համալրելու հուշարձանների առանց այդ էլ հարուստ ցանկը: Դրա արդյունքում կազմակերպությունն ունի հուշարձանների վկայագրերի ու գոտիների մեծ արխիվ, որոնք հազեցած են դրանց վերաբերյալ տեղեկատվությամբ: Բացի դրանից կազմակերպությունը տարիներ ի վեր իրականացնում է հուշարձանների հնագիտական պեղումների, հետազոտական և վերականգնման աշխատանքներ: Դրանց ընթացքում պեղվել և ուսումնասիրվել են տասնյակ հուշարձաններ, որոնք գիտության համար տվել են նորանոր տվյալներ: Պեղված հուշարձանների թվում են այնպիսի նշանավոր հնագիտական և ճարտարապետական հուշարձաններ, ինչպիսիք են Շենգավիթ բնակատեղին՝ Երևանում, Ծիծեռնավանքը՝ Արցախի Քաշաթաղի շրջանում, Ներքին Նավեր դամբարանադաշտը և Աղցքի արքայական դամբարանը՝ Արագածոտնի մարզում, Չիչխանավանքը և Լոռեբերդ

ամրոցը Լոռու մարզում և այլն: Տարիներ ի վեր ծավալած աշխատանքների արդյունքում կազմակերպությունը թողել է վիթխարի ժառանգություն՝ գրքերի, հողվածների, գիտաժողովների և գեկույցների տեսքով: Պեղումներից կուտակված գտածոները ենթարկվել են լաբորատոր մշակման և վերականգնման հենց կենտրոնի լաբորատորիայում և բազմաթիվ նմուշներ այսօր զարդարում են Հայաստանի տարբեր թանգարանների ցուցասրահները: Ներկայումս կենտրոնը շարունակում է իր ակտիվ գործունեությունը՝ համալրվելով աշխատողներով և հատկապես՝ երիտասարդ կադրերով: Ակտիվորեն շարունակվում են հուշարձանների վկայագրերի կազմումն ու գոտիավորումը: Ավելի լայն թափ են հավաքել հուշարձանների պեղման և վերականգնման աշխատանքները: Միայն 2022 թ. պեղումներ են կատարվել Ներքին Նավեր դամբարանադաշտում, Աղցքի արքայական դամբարանում, Սանահին վանական համալիրում, Սրվելի վանքում, Քրդիկանցի միջնադարյան եկեղեցում և այլ հուշարձաններում, որոնց զուգահեռ փրկարարական մանր պեղումներ են իրականացվել Հայաստանի տարբեր մարզերում: Հատկապես նշանակալի էին Լոռեբերդ ամրոցում մի քանի ամիս տևած լայնամասշտաբ պեղումները: Բարեկարգվել և բարձր մակարդակի է բերվել կենտրոնի նյութերի վերականգնման լաբորատորիան, որը հազեցել է ժամանակակից բարձրակարգ տեխնիկայով:

Հողված վերապատրաստման մասնակցի կողմից


## Հնագիտական նյութի վավերագրումը

(Մոթք 2, Արտանիշ 9, 29, Նորաբակ 1 հնավայրերի օրինակով)

Մարիամ Ամիրյան (ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ)

Հնագիտությունն ուսումնասիրում է հին հասարակությունները նյութական աղբյուրների միջոցով: Նման սկզբնաղբյուրներ են դիտարկվում ցանկացած նյութական օբյեկտները (մանր առարկաներից մինչև ճարտարապետական համալիրներ և օրգանական նյութերից մինչև շրջապատող միջավայր), որոնք ինչ-որ կերպ առնչվում են մարդու գործունեության հետ: Ստորև կներկայացվի դրանց վավերագրման ձևաչափերը «Ուշկիանի» ծրագրի շրջանակներում հայ-գերմանական արշավախմբի կողմից պեղված մի քանի հնավայրերի օրինակներով: Դրանք են Մոթք 2, Արտանիշ 9 բնակատեղիները, Արտանիշ 29 և Նորաբակ 1 դամբարանադաշտերը:


Չորս հուշարձաններն էլ նորահայտ են (հայտնաբերվել են հնագիտական հետախուզական աշխատանքների արդյունքում) և դրանց հետազոտությունը սկսվել է դեռ մինչդաշտային աշխատանքներով: Հնավայրերը քարտեզագրվել են (նկ. 1), իրականացվել է վերգետնյա նյութերի վերլուծություն, կատարվել են երկրաֆիզիկական (նկ. 2, 4), օդալուսանկարային (նկ. 3) հետազոտություններ:




նկ. 1



նկ. 2



նկ. 3




նկ. 4


Քանի որ հուշարձանները ներկայացնում են հնավայրերի տարբեր տեսակներ, ապա դրանց պեղումներն իրականացվել են համապատասխանաբար: Այսպես, Մոթք 2 բնակատեղին ուսումնասիրվել է առանձին 5x5 մ կամ 5x8 մ չափերի պեղավայրերով (նկ. 4), որոնք նպատակ ունեին ճշգրտելու կանխավ ստացած երկրաֆիզիկական հետազոտությունների տվյալները, պարզելու հնավայրի տարբեր հատվածների մշակութային իրողությունները և ընդլայնել արդեն պեղված հատվածներից ստացված ինֆորմացիան: Աշխատանքի ընթացքում պեղավայրում սահմանվել են միավորներ, ենթամիավորներ, շերտեր, կառույցներ: Մրանք հետագայում վերարտադրվել են Հարրիսի մատրիցայի:

Քանի որ թեոդոլիտ չի օգտագործվել, ապա ստացած ցանկացած ինֆորմացիա արտացոլվել է գծագրական թղթի վրա (հատակագիծ): Խորությունները տալու համար պեղավայրի անկյուններից ամենաբարձրն ընտրվել է որպես գրոյական կետ, որտեղից և իրականացվել են բոլոր չափագրումները, իսկ հետագայում՝ գծագրերի թվայնացմամբ, տվյալները համապատասխանեցվել են բացարձակ թվերին (նկ. 5, 6): Յուրաքանչյուր գտածոյին/նմուշին տրվել է անձնագիր համապատասխան տվյալներով, իսկ ապա առկա գտածոները հաշվառվել են (նկ. 7):

Արտանիշ 9 հնավայրում կրկնվել է վերոնշյալ մեթոդիկան, սակայն փաստագրման մեջ ավելացվել են քառակուսիներ: Այստեղ, ի տարբերություն Մոթք 2-ի, պեղավայրերը համապատասխան իրավիճակի լայնացվել են և այդ լայնացված հատվածները՝ քառակուսիները, համարակալվել են: Նաև թեոդոլիտի առկայությունը թույլ է տվել գտածոները, քառակուսիները, միավորները ֆիքսել բացարձակ թվերով (նկ. 7, 8): Բացի այդ դրոնի ամենօրյան օգտագործումը հեշտացրել է նաև ամենօրյա գծագրման աշխատանքները:



նկ. 5



նկ. 6


| Artanish 9, 2022 |                                    |
|------------------|------------------------------------|
| Date             | -                                  |
| Trench           | -                                  |
| Square           | -                                  |
| Unit             | -                                  |
| Layer            | -                                  |
| Structure        | -                                  |
| X-Y              | -                                  |
| Depth            | -                                  |
| Object           | -                                  |
| Notes            | - © Ushkiani Project Photo Archive |

նկ. 7



նկ. 8

Արտանիշ 29 դամբարանադաշտում պեղվել են երկու դամբարաններ, որոնցից N1 դամբարանի վավերացման առանձնահատկությունը կայանում էր այնտեղ փաստագրած թաղման ծեսի մեջ: Այստեղ իրականացվել էր խմբային թաղում ոչ անատոմիական ամբողջականությամբ, ուղեկցող նյութը ևս ամբողջական չէր: Մարդկային և կենդանիների ոսկորների, գտածոների ճիշտ տեղադրությունը վավերագրելու և հետագայում ճիշտ վերականգնում կատարելու նպատակով, դամբարանախուցը հորիզոնական (քառակուսի) և ուղղահայաց (շերտ) հարթություններում բաժանվել է չորս մասի (նկ. 9, 10): Արտանիշ 29 դամբարանադաշտում մինչև պեղումները իրականացվել են նաև երկրաքիմիական հետազոտություններ, որոնց ստուգմանն էին ուղղված դամբարան N1 պեղումները: Նորաբակ 1-ը, լինելով կրոնիկոսով դամբարանաբլուր, իր մեջ ներառում էր առանձին չորս դամբարանախցեր: Ողջ կրոնիկոս իր արտաքին գրահով դիտարկվել է մեկ տեղամաս, իսկ ապա այն խաչաձև բաժանվել է չորս պեղավայրերի (նկ. 11): Բացելով դամբարանների սալաքարերն ու գրահները՝ տեղամասի կենտրոնում առկա խաչաձև եզրագծերը հեռացվել են և ապա դամբարանները պեղվել են առանձին միավորներով (նկ. 12):



նկ. 9



նկ. 10




նկ. 11




նկ. 12

Բոլոր հնավայրերի պեղավայրերը վավերագրվել են և՛ հորիզոնական հարթությունում (մակարդակ, հատակագիծ; նկ. 5, 6) և՛ ուղղահայաց (շերտ, կտրվածք; նկ. 13): Սոթք 2-ի՝ չափերով փոքր առանձին պեղավայրերը կոնկրետ տարածքում թույլ են տվել ունենալ մի քանի կտրվածքներ, իսկ Արտանիշ 9-ում դրանց քանակն ապահովվել է քառակուսիների միջոցով (պեղաշրջանի վերջում արվել է ամբողջ պեղավայրի բոլոր կտրվածքների փաստագրումը): Դամբարանների դեպքում վավերագրվել են ինչպես խցերի, այնպես էլ ամբողջ դամբարանաբլրի կտրվածքները (նկ. 14, 15):


Դաշտային աշխատանքների ընթացքում վավերագրման անմասն բաղադրիչն է կազմել պեղավայրերի ընդհանուր և մանրամասնային լուսանկարումը, ինչպես նաև օդալուսանկարումը (սրանց հիման վրա ապա կատարվել են նաև 3D մոդելավորումներ, նկ. 16-18): Բացի այդ առանձին գրանցվել են բնագիտական հետազոտությունների համար նախատեսված նմուշները: Դամբարանների դեպքում հնագիտական նյութի և մարդու կմախքի մնացորդների նկարագրությունն ու գրանցումը կատարվել է նախ առանձին, իսկ ապա ընդհանուրի համատեքստում:



նկ. 13




նկ. 14




նկ. 15



նկ. 16



նկ. 17




նկ. 18

Ետդաշտային ուսումնասիրությունները բոլոր հնավայրերի համար իրականացվել են նույնությամբ: Ողջ դաշտային «փաստաթղթերն» էլեկտրոնայնացվել են, գտածոները հաշվառվել են, գրանցվել (նկ. 19) և ապա առանձին հետազոտվել: Յուրաքանչյուր հուշարձանի համար կազմվել է տվյալների բազա, որի մեջ ներառվել են գտածոների անձնագրային տվյալները, նկարագրությունը, լուսանկարները, գրչանկարները և բնագիտական հետազոտություններից առկա տվյալները (նկ. 20-22):

| Statistics<br>Trench H (2013) |             |                  |    |        |       |                     |                                  |
|-------------------------------|-------------|------------------|----|--------|-------|---------------------|----------------------------------|
| Ամսաթիվ                       | Միավոր/Շերտ | Հողաստոր խեցեղեն | ՎԸ | ՄԲ-ՈւԷ | Վեկտ. | Փոքր գտածոներ       | Նշումներ                         |
| 13.08.                        | 0/0         | 50               | 4  | 20     | 20    | 1 սարքի թևեր        |                                  |
| 14.08.                        | 1/1         | 44               | 3  | 15     | 14    | 1 գունազարդ խեցեղեն |                                  |
| 15.08.                        | 1/1         | 225              | 20 | 55     | 39    | -                   |                                  |
|                               | 1/1         | 48               | 2  | 15     | 6     | -                   |                                  |
| 16.08.                        | 2/1         | 25               | 1  | 11     | 4     | -                   |                                  |
|                               | 3/1         | 12               | 1  | 5      | 6     | -                   |                                  |
|                               | 1/1         | 20               | 1  | 15     | 7     | -                   |                                  |
| 17.08.                        | 2/1         | 5                | -  | 1      | 3     | -                   |                                  |
|                               | 3/1         | 53               | -  | 32     | 7     | 1 գունազարդ խեցեղեն |                                  |
|                               | 1/1         | 1                | -  | 1      | -     | -                   |                                  |
| 18.08.                        | 2/1         | 6                | -  | 3      | -     | -                   |                                  |
|                               | 3/1         | 7                | -  | 3      | 2     | -                   |                                  |
|                               | 4/1         | 1                | -  | 1      | -     | -                   |                                  |
|                               | 1/1         | 21               | 2  | 2      | 3     | -                   |                                  |
|                               | 2/1         | 11               | -  | 4      | 3     | -                   |                                  |
| 21.08                         | 3/1         | 13               | -  | 10     | 7     | -                   | © Ushkiani Project Photo Archive |

նկ. 19



նկ. 20

| Քիվ                    | Քնկեր        | Չնարան | Ներքին գույն   | Արտաքին        | Հաստություն    | Արտապատկեր | Բաղադրություն | Սկզբ                                | Պատրաստում | Չափեր     | Տարրախառնուր              | Շարժիչ | Նշումներ     | Փ    |
|------------------------|--------------|--------|----------------|----------------|----------------|------------|---------------|-------------------------------------|------------|-----------|---------------------------|--------|--------------|------|
| 00: Sotk 2 քնիակտոր    | 4 rim        | closed | dark gray 7.5  | dark gray 7.5  | dark gray 7.5  | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 35 x 15 x |                           | 180    |              | ⓪(0) |
| 01: S2 խեցեղեն ասար... | 5 rim        | closed | gray 5YR 5/1   | reddish gray   | reddish brow   | smoothed   | coarse        | <input type="checkbox"/>            | slow whe   | 42 x 37 x |                           | 150    | +6           | ⓪(0) |
| 01a: S2 խեցեղեն/խեց... | 6 rim        | closed | dark reddish   | dark reddish   | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 56 x 50 x | horizontal lines and circ | 100    | +5           | ⓪(0) |
| 02: S2 Սետաղեն ասար... | 7 rim        | closed | light reddish  | pink 5YR 7/1   | light reddish  | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | slow whe   | 49 x 35 x | relief belt ornament um   | 130    |              | ⓪(0) |
| 03: S2 Քարե ասարևա...  | 8 rim        | closed | pink 7.5YR 7   | dark gray 7.5  | dark gray 7.5  | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | slow whe   | 30 x 26 x |                           | 90     |              | ⓪(0) |
| 04: S2 Կանաչաթան աս... | 9 rim        | closed | brown 7.5YF    | reddish gray   | brown 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | slow whe   | 23 x 21 x |                           | 90     |              | ⓪(0) |
| 05: S2 Ուղեղ ասարևա... | 10 rim       | closed | gray 2.5Y 6/   | black 10YR     | black 7.5YR    | polished   | medium        | <input checked="" type="checkbox"/> | hand       | 47 x 35 x | oblique parallel lines bc | 130    |              | ⓪(0) |
| Копия 00: Sotk 2 քն... | 11 body      | -      | pink 5YR 8/4   | pink 5YR 8/4   | pink 5YR8/4    | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | hand       | 35 x 34 x |                           | 110    |              | ⓪(0) |
|                        | 12 rim       | closed | reddish yellow | light reddish  | red 2.5YR6/6   | smoothed   | fine          | <input type="checkbox"/>            | hand       | 47 x 46 x |                           | 110    |              | ⓪(0) |
|                        | 13 rim       | closed | gray 5YR 5/1   | dark gray 2.5  | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | slow whe   | 60 x 40 x |                           | 90     |              | ⓪(0) |
|                        | 14 rim       | closed | light gray 7.5 | pink 7.5YR7    | light gray 7.5 | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | hand       | 21 x 20 x |                           | 40     |              | ⓪(0) |
|                        | 15 rim       | closed | pink 5YR 7/2   | reddish yellow | black 7.5YR    | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | hand       | 43 x 34 x | crucible (for which spe   | 90     |              | ⓪(0) |
|                        | 16 rim       | closed | very dark gr   | black 10YR     | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 34 x 31 x |                           | 40     |              | ⓪(0) |
|                        | 17 base      | -      | dark reddish   | weak red 2.5   | dark reddish   | smoothed   | medium        | <input type="checkbox"/>            | hand       | 59 x 39 x |                           | 140    |              | ⓪(0) |
|                        | 18 base      | -      | weak red 2.5   | dark reddish   | reddish gray   | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 35 x 27 x |                           | 80     |              | ⓪(0) |
|                        | 19 rim       | opened | light reddish  | reddish gray   | dark reddish   | smoothed   | medium        | <input checked="" type="checkbox"/> | hand       | 42 x 39 x |                           | 140    |              | ⓪(0) |
|                        | 20 rim       | closed | gray 5YR 6/1   | black 7.5YR    | black 7.5YR    | smoothed   | medium        | <input checked="" type="checkbox"/> | hand       | 55 x 38 x |                           | 180    |              | ⓪(0) |
|                        | 21 rim       | closed | weak red 2.5   | black 10YR     | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | slow whe   | 56 x 40 x |                           | 40     |              | ⓪(0) |
|                        | 22 rim, body | closed | pinkish gray   | black 10YR     | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 65 x 54 x |                           | 40     |              | ⓪(0) |
|                        | 23 base      | -      | pink 5YR 7/4   | black 10YR     | black 7.5YR    | polished   | fine          | <input checked="" type="checkbox"/> | hand       | 56 x 36 x |                           | 260    | ներսից ևս փա | ⓪(0) |
|                        | 24 rim       | -      |                |                |                |            |               |                                     |            |           |                           |        |              | ⓪(0) |

նկ. 21

| Group           | Object Number | Passport Date | General Description | General Description Details     | Classification Details |
|-----------------|---------------|---------------|---------------------|---------------------------------|------------------------|
| Ceramic object  | Vessel        |               | - preservation      | Further elaboration of specific | Comments on object     |
|                 | Others        |               | - coordinate        | descriptive information         | types and chronologies |
| Metal object    |               |               | - measurements      |                                 |                        |
| Stone object    |               |               | - colors            |                                 |                        |
| Obsidian object |               |               | - description       |                                 |                        |
| Bone object     |               |               | - ornamentation     |                                 |                        |
| Others          |               |               |                     |                                 |                        |

© Ushkiani Project Photo Archive

նկ. 22

**Օգտագործված լուսանկարների ցանկ**

1. Ուշկիանի ծրագրի շրջանակներում իրականացրած հետախուզական աշխատանքների արդյունքում փաստագրած հնավայրերի քարտեզ, 2010 թ.  
Map of the sites fixed as a result of the survey carried out within the framework of Ushkian project, 2010
2. Երկրաֆիզիկական հետազոտություններ, Սոքք 2, 2011 թ., Սոքք, Գեղարքունիքի մարզ, ՀՀ  
Geophysical research, Sotk 2, 2011, Sotk, Gegharkunik province, RA
3. 3D mesh model, Արտանիշ 9, 2021 թ., Արտանիշ, Գեղարքունիքի մարզ, ՀՀ  
3D mesh model, Artanish 9, 2021, Artanish, Gegharkunik province, RA
4. Տոպոհանույթ, Սոքք 2, 2015. ներված են նաև պեղավայրերը  
Topographic map, Sotk 2, 2015: trenches are also included
5. Դաշտային գծագիր, 20.08.2012, պեղավայր E, Սոքք 2, 2012 թ.. արտագույված են միավորները, գտածոները, քարերը, խորությունները  
The hand-drawn daily field situational plan, 20.08.2012, trench E, Sotk 2, 2012: units, finds, stones, depths are reflected here
6. Ինտրամուրալ թաղման թվային վերականգնում դաշտային գծագրերի հիման վրա, պեղավայր E, Սոքք 2, 2012 թ.  
Digital reconstruction of an intramural burial based on field drawings, Trench E, Sotk 2, 2012
7. Գտածոների, նմուշների անձնագրի ձևօրինակ, Արտանիշ 9, 2020-2022 թթ.  
An example of a label for finds and samples, Artanish 9, 2020-2022 թթ.
8. Չափագրում թեոդոլիտի միջոցով, Արտանիշ 29, 2022 թ.  
Measurement by theodolite, Artanish 29, 2022
9. Արտանիշ 29 դամբարանադաշտի N1 դամբարանախցի II շերտի փաստագրումը 4 քառակուսիների միջոցով, 2019 թ.  
Documentation of layer II of the chamber N1 of Artanish 29 necropolis by 4 squares, 2019
10. Արտանիշ 29 դամբարանադաշտի N1 դամբարանախցի I շերտը, 2019 թ.  
Layer I of the chamber N1 of Artanish 29 necropolis, 2019
11. Դամբարանաթմբի պեղումներ, N1 դամբարանաթմբ, Նորաբակ 1, 2012 թ.  
Excavation of kurgan, kurgan N1, Norabak 1, 2012
12. Դամբարանաթմբը պեղումներից հետո, N1 դամբարանաթմբ, Նորաբակ 1, 2012 թ.  
Kurgan after excavation, kurgan N1, Norabak 1, 2012
13. Ինտրամուրալ թաղման տարածվածությունն արևմտյան կտրվածքի վրա, պեղավայր E, Սոքք 2, 2012 թ.  
Distribution of intramural burial on the western profile, trench E, Sotk 2, 2012
14. Դամբարանի կտրվածքներ, N1 դամբարան, N1 դամբարանաթմբ, Նորաբակ 1, 2012 թ.  
Profiles of tomb N1, kurgan N1, Norabak 1s, 2012
15. Դամբարանաթմբի հատակագիծ և կտրվածք, N1 դամբարանաթմբ, Նորաբակ 1, 2012 թ.  
Plan and profile of kurgan N1, Norabak 1, 2012
16. Ինտրամուրալ թաղում, պեղավայր E, Սոքք 2, 2012 թ.  
Intramural burial, trench E, Sotk 2, 2012
17. Օդայութանկար, պեղավայր A, Արտանիշ 9, 2021 թ.  
Orthophoto, trench A, Artanish 9, 2021
18. Եռադիմենսիոնալ վերականգնում, Սոքք 2, 2011-2015 թթ.  
3D model of Sotk 2 site, 2011-2015
19. Գտածոների քանակական տվյալներ, պեղավայր H, Սոքք 2, 2013 թ.. նշված է ամսաթիվը, միավորը, շերտը, խեցեղենի ընդհանուր քանակը և քանակն ըստ ժամանակաշրջանների, վանակատի քանակը, փոքր գտածոները  
Statistics of the finds, Trench H, Sotk 2, 2013: date, unit, layer, total quantity and quantity of pottery by periods, quantity of obsidian, small finds are indicated
20. Անձնագրավորված խեցեղեն բեկորի լուսանկարներն ու գրչանկարը, պեղավայր H, Սոքք 2, 2013 թ.  
Photos and drawing of a marked sherd, Trench H, Sotk 2, 2013
21. Արտեֆակտների տվյալների բազա, Սոքք 2, 2011-2015 թթ.. ներառված են արտեֆակտների և՛ անձնագրային, և՛ մանրամասն տվյալները  
Artifact database, Sotk 2, 2011-2015: both label and detailed data of artifacts are included
22. Արտեֆակտների տվյալների բազայի ընդհանուր սխեմա, Սոքք 2, 2011-2015 թթ.  
Artifact database general schema, Sotk 2, 2011-2015




# Հարցաթերթիկ

## Հայաստանում անցկացված վերապատրաստման վերաբերյալ հարցման արդյունքներ

### Առկա ձևաչափով վերապատրաստում 2

### Հնագիտության վերապատրաստման դասընթացներ



### Վերապատրաստման մասին տպավորություններ

- Շատ լավ:
- Դասընթացը ժամանակային առումով թեև կարճ էր, այնուամենայնիվ Կանչա սահին հաջողվեց մեզ ծանոթացնել գտածոների լուսանկարման նրբություններին:  
Ծնորհակալություն ճապոնական կողմին:
- "Ես տպավորված եմ: Հիանալի աշխատանքային թիմ համբերատար ու գիտակ մարդիկ :  
Միրով կսպասենք Ձեզ :
- Շատ շնորհակալություն ամեն ինչի համար:
- Հիանալի
- Փորձի փոխանակման հնարավորություն



# 3

Առկա ձևաչափով վերապատրաստում

Պահպանման գիտության  
վերաբերյալ  
վերապատրաստման  
դասընթացներ



**Տոնոհիդե Մացուշիմա**

Կոչի համալսարան

# 3 Պահպանման գիտության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ

## Դասընթացի բովանդակությունը

Իրականացման վայրը

Հայաստանի պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

Դասախոս

Տոնոհիդե Մացուշիմա, Կոչի համալսարան

Քարգմանիչ

Լիլիթ Խանսույան

Քարգմանչի օգնական

Ջարինե Հովակիմյան

Համառոտ բովանդակություն

Հայաստանի պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնում 2021 թվականին JICA-ի կողմից տրամադրված սարքավորումների կիրառմամբ անց է կացվել մշակութային արժեքների գիտահետազոտական մեթոդների վերաբերյալ դասընթաց: Մասնակիցներին ներկայացվել են մշակութային արժեքների ուսումնասիրության նպատակներն ու նշանակությունը, անցկացվել են դասախոսություններ տարբեր սարքավորումների միջոցով վերլուծության և դրանց անվտանգ օգտագործման սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև կատարվել են գործնական աշխատանքներ սարքավորումների կիրառմամբ:



Ծրագիր

|            |             |   |
|------------|-------------|---|
| 07.09.2022 | 10:30-12:00 | Բացման արարողություն (հեռավար), դասախոսություն, ծանոթություն մասնակիցների հետ   |
|            | 13:00-15:30 | Ներածություն վերլուծության վերաբերյալ, վերլուծական սարքավորումների ստուգում   |
| 07.09.2022 | 10:30-15:30 | Ֆուրիե ձևափոխման ինֆրակարմիր սպեկտրոֆոտոմետրի (FTIR) կարգավորում  |
| 09.09.2022 | 10:30-15:30 | Ռենտգենաֆլյուորոսցենտային վերլուծության սարքավորման (XRF) կարգավորում   |
| 12.09.2022 | 10:30-15:30 | Բարձր խոշորացման մանրադիտակի (RH-2000) կարգավորում  |
| 13.09.2022 | 10:30-15:30 | Ներածություն մշակութային արժեքների վերաբերյալ (դասախոսություն և քննարկում)  |
| 14.09.2022 | 10:30-15:30 | Ներածություն քանդարանների վերաբերյալ (դասախոսություն և քննարկում)<br>Բացատրություն մշակութային արժեքների՝ մանրադիտակով հետազոտման մեթոդների և բարձր խոշորացման մանրադիտակի (RH-2000) վերաբերյալ |
| 15.09.2022 | 10:30-15:30 | Մշակութային արժեքների փրկության և ճգնաժամային կառավարման վերաբերյալ (դասախոսություն և քննարկում)<br>XRF-ով չափման կարգավորում   |
| 16.09.2022 | 10:30-15:30 | Գործնական աշխատանք . pH չափման սարքով չափում<br>XRF-ի անվտանգության վերահսկում (դասախոսություն)<br>XRF-ի կառավարման դեմոնստրացիա  |
| 19.09.2022 | 10:30-15:30 | Գործնական աշխատանք . XRF-ով վերլուծություն  |
| 20.09.2022 | 10:30-15:30 | XRF-ով տվյալների վերլուծություն (դասախոսություն)<br>Գործնական աշխատանք . XRF-ով վերլուծություն  |
| 22.09.2022 | 10:30-15:30 | Գործնական աշխատանք . XRF-ով վերլուծություն  |
| 23.09.2022 | 10:30-15:30 | Հարցեր և քննարկումներ XRF-ի կարգավորումների և վերականգնման աշխատանքների վերաբերյալ  |
| 26.09.2022 | 10:30-15:30 | Գործնական աշխատանք . XRF վերլուծական տվյալների մանրամասն վերլուծություն   |
| 27.09.2022 | 14:00-15:00 | Փակման արարողություն<br>Ռուբեն Սևակ քանդարան<br>Էջմիածին  |

**Հեռավար դասախոսության բովանդակությունը**

# **Մշակութային արժեքների սպեկտրոսկոպիկ վերլուծություն. Ֆուրիե ձևափոխման ինֆրակարմիր սպեկտրոսկոպիա (FTIR)**

Տոնիհիդե Մացուշիմա (Կոչի համալսարան)

Ի՞նչ է արդյոք իրենից ներկայացնում արևից ցած ճառագող լույսը, կամ տնային պայմաններում կիրառվող լյումինեսցենտային լամպի լույսը, մի խոսքով՝ մեզ շրջապատող լույսը: Որպես պատասխան կարող ենք ասել, որ «լույսը որոշակի տիրույթում գոյություն ունեցող էլեկտրամագնիսական ալիք է»: Իսկ ի՞նչ է իրականում իրենից ներկայացնում էլեկտրամագնիսական ալիքը: Ըստ բառարանի էլեկտրամագնիսական ալիքը հանդիսանում է «տարածության մեջ էլեկտրական և մագնիսական դաշտերի փոփոխության արդյունքում ձևավորվող ալիք», որն «առաջանում է, երբ նյութը դեպի դուրս էներգիա է արձակում»: Այլ կերպ ասած, լույսը հանդիսանում է նյութի դուրս արձակած էներգիա, նույն ինքը՝ էլեկտրամագնիսական ալիք:

Էլեկտրամագնիսական ալիք Գոյություն ունեն էլեկտրամագնիսական ալիքների տարբեր տեսակներ, որոնք դասակարգվում են ըստ էներգիայի (ալիքի երկարություն, տվյալ դեպքում՝ օդում ալիքի երկարությունը): Մարդու աչքին երևացող տիրույթում գոյություն ունեցող լույսը անվանում են տեսանելի լույս: Տեսանելի լույսից փոքր ինչ կարճ ալիքը հանդիսանում է ուլտրամանուշակագույն լույսը, իսկ փոքր ինչ երկարը՝ ինֆրակարմիր լույսը: Նյութի մեջ առկա ատոմների և մոլեկուլների էլեկտրոնները՝ իրավիճակից կախված, ստանում են ընդհատվող էներգետիկ վիճակ: Այս երևույթը կոչվում է էներգիայի վիճակի քվանտացում, իսկ յուրաքանչյուր ընդհատված վիճակը՝ էներգիայի մակարդակ: Երբ էլեկտրոնի էներգետիկ վիճակը փոխվում է, այն արտանետում կամ կլանում է որոշակի քանակությամբ էներգիա: Որպես օրինակ կարող ենք բերել այն երևույթը, երբ ցածր էներգիայի վիճակում

գտնվող մոլեկուլը կլանում է որոշակի երկարություն ունեցող լույս (էներգիա) և անցում կատարում գրգռված վիճակի:

Օրինակ՝ էլեկտրական լուսավորությունը և երկնքի աստղերը՝ էներգիայից կախված, արձակում են տարբեր գույնի լույս: Եթե ալիքի երկարությունը մոտ 450 նմ է, ապա կապույտ լույս է, իսկ 550 նմ դեպքում՝ կարմիր: Նայելով այս լույսին՝ մենք ալիքի երկարության տարբերությունը ընկալում ենք որպես գույն:

Այսպիսով եկեք հասկանանք, թե լույս չարձակող նյութի գույնը ինչի՞ց կախված կարող է երևալ: Նյութը կլանում է որոշակի քանակությամբ էներգիա (այստեղ՝ լույս): Օրինակ՝ կարմիր խնձորը կլանում է մոտ 400-600 նմ լույս: Մյուս կողմից, 600-700 նմ (կարմիր) լույսը չի կլանվում, այլ ցրվում և արտացոլվում է: Ուստի, 600-700 նմ ցրված և արտացոլված լույսը՝ մեր աչքի մեջ մտնելու արդյունքում մենք խնձորը տեսնում ենք կարմիր:

Սպեկտր և ինֆրակարմիր սպեկտրոսկոպիա Ի՞նչ է սպեկտրը: Եկեք մտածենք՝ որպես օրինակ վերցնելով «ծիածանը»: Ծիածանի ձևավորման գործոններից մեկը մթնոլորտում առկա ջրի կաթիլներն են: Լույսը մթնոլորտում կախույթային վիճակում գտնվող ջրի կաթիլների միջով անցնելիս բեկվում է: Բանն այն է, որ բեկման ցուցիչը՝ ալիքի երկարությունից կախված, տարբեր է: Լույսի շարժման անկյունը, ալիքի երկարությունից կախված փոխվում է, լույսը բաժանվում է տարբեր երկարության ալիքների (սպեկտր) և որպես արդյունք ձևավորվում է ծիածան: Առաջին սպեկտրոֆոտոմետրներում սպեկտրոսկոպի վրա տեղադրվում էր պրիզմա, որը լույսը բաժանում էր սպեկտրների՝ օգտագործելով բեկման ցուցիչ

տարբերությունը:

Մպեկտրոֆոտոմետրը դա սարք է, որը չափում է լույսի թափանցելիության աստիճանը տարբեր ալիքների երկարության բաժանված լույսը նմուշի միջով անցկացնելու միջոցով: Որպես օրինակ կարող ենք բերել երեք տեսակի գունավոր ֆիլտրերը: Կարմիր ֆիլտրի դեպքում թափանցում է ավելի քան 600 նմ լույս, կանաչ ֆիլտրի դեպքում՝ 500-600 նմ, իսկ կապույտ ֆիլտրի դեպքում՝ 400-ից 500 նմ: Այստեղ մենք կարող ենք տեսնել ալիքի երկարության և թափանցելիության միջև կապը: Ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայում կիրառվում է 600 նմ-ից բարձր ինֆրակարմիր լույս: Այսպիսով, արդյոք ի՞նչ ինֆորմացիա կարող ենք ստանալ մոտիկ ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի միջոցով չափումներ կատարելիս:

Մշակութային արժեքների ոլորտում ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի կիրառմամբ հնարավոր է շատ օգտակար արդյունքներ ստանալ, հատկապես օրգանական նյութերից կազմված նյութերի կազմության վերլուծության համար:

Նախ, եկեք տեսնենք, թե ինչպես է օբյեկտը չափվում ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի միջոցով: Ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայում չափման ենթակա օբյեկտը ճառագայթում է ինֆրակարմիր ճառագայթներով: Քանի որ ինֆրակարմիր ճառագայթները «լույս» են, չափվող օբյեկտի վրա ընկնելով կարող են արտացոլվել կամ կլանվել նրա կողմից: Մակայն, լույսի մի մասն անցնում է առարկաների միջով՝ առանց կլանվելու: Ինֆրակարմիր ճառագայթի կիրառմամբ սպեկտրոսկոպիան այս եղանակով չափում է լույսը, որն արտացոլվում կամ անցնում է օբյեկտի միջոցով և ուսումնասիրում է յուրաքանչյուր օրգանական նյութին հատուկ սպեկտրը: FTIR-ում ամենահաճախ կիրառվող ինֆրակարմիր ճառագայթը միջին ինֆրակարմիր տիրույթն է (2,5-25 մկմ): Այս տիրույթում կլանվող սպեկտրը կոչվում է նաև վիբրացիոն սպեկտր, քանի որ գոյություն ունեցող մոլեկուլային վիբրացիայի մեջ այն գոյանում է դիպոլային մոմենտում փոփոխությունների հետևանքով առաջացած վիբրացիայի շնորհիվ:

Երբ մոլեկուլը ճառագայթվում է միջին ինֆրակարմիր

ճառագայթներով, ինֆրակարմիր ճառագայթների վիբրացիայի ցիկլի և ատոմի վիբրացիայի ցիկլի համընկնման դեպքում, յուրաքանչյուր ատոմ կամ ատոմային խումբ էներգիա է կլանում յուրաքանչյուր ցիկլին համապատասխան, և վիբրացիան հիմնական վիճակից փոխվում է գրգռված վիճակի: Այս կլանումը ի հայտ է գալիս որպես ինֆրակարմիր ճառագայթի սպեկտրի կլանում: Քանի որ ատոմներն ունեն մոլեկուլային կառուցվածքին համապատասխան սպեցիֆիկ վիբրացիա, սպեկտրը վերլուծելով հնարավոր է տեղեկատվություն ստանալ նրանց մոլեկուլային կառուցվածքի մասին: Բայց կան նաև դժվարություններ: Ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի միջոցով վերլուծելիս անհրաժեշտ է փոքր քանակությամբ նմուշառում կատարել: Չետևաբար, այն ոչ կործանարար վերլուծական մեթոդ չէ: Այս պարագայում կարևոր է, որ ուսումնասիրության մեջ ներգրավված անձնակազմի բոլոր անդամները միասին քննարկեն և որոշեն, թե նյութի որ հատվածից է կատարվում նմուշառումը և կատարեն արձանագրություններ վերլուծության վերաբերյալ: Բացի այդ, Ինֆրակարմիր սպեկտրոսկոպիան կարող է տրամադրել միայն «ինֆորմացիա լույսի մասին»: Ուստի, եթե ցանկանում եք նույնականացնել մշակութային արժեքի նյութական կառուցվածքը, ձեզ անհրաժեշտ կլինեն «նյութերը նույնականացրած չափման արդյունքները (տեղեկանք)»: Չափումների արդյունքները համեմատելով տեղեկանքի հետ՝ որոշում ենք, թե դա ինչ տեսակի նյութ է: Անհրաժեշտ տվյալներ ձեռք բերելու համար ձեզ պետք կլինի գոյություն ունեցող տվյալների բազայի և տվյալների օրինակների հիման վրա արդյունքի մասին եզրահանգում անելու ունակություն:

Մշակութային արժեքները կազմող նյութերը ինֆրակարմիր սպեկտրոսկոպիայի միջոցով վերլուծության ենթարկելու համար կարևոր է հասկանալ սպեկտրոսկոպիկ վերլուծության սկզբունքները, սովորել, թե ինչպես գործածել սարքավորումները, ինչպես կատարել չափումներ տեղեկանքի համար, ինչպես ուսումնասիրել մշակութային արժեքները և վերլուծել արդյունքները, ինչպես արձանագրել և այլն:

Հողված վերապատրաստման մասնակցի կողմից

## Գեղանկարչությունը Հայաստանում

Լիլիթ Ղազարյան (Հայաստանի ազգային պատկերասրահ)

Հնում ավատատիրական կարգերի հաստատումն ու քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն գեղանկարչությանը հաղորդել են նոր ձև և բովանդակություն, գլխավոր պատվիրատուն դարձել է եկեղեցին, որը որոշակի պահանջներ է դրել նկարիչ-կատարողների առջև: Հելլենիզմի դարաշրջանից մեզ հասած գեղանկարչության դասական օրինակ է Գառնիի ամրոցի բաղնիքի խճանկար հատակը (III դար): Միջնադարյան եկեղեցիների որմնանկարները և առանձին ձեռագրերի մանրանկարներ գեղարվեստական ու պատմամշակութային խոշոր արժեքներ են:

XVII–XVIII դարերի սոնումենտալ և հաստոցային գեղանկարչությունը զարգացել է Հովնաթանյան տոհմի նկարիչների, Նոր Զուղայի դպրոցի (Մինաս, Հովհաննես Մրքուց) գործունեության շնորհիվ:

Նոր ժամանակաշրջանի հայկական գեղանկարչության նշանավոր ներկայացուցիչներ Հակոբ Հովնաթանյանի և Հովհաննես Այվազովսկու մի շարք գործեր գույնի անսովոր դրսևորման շնորհիվ դարձել են այդ շրջանի արվեստի լավագույն նմուշներից:

XX դարի սկզբին Հայաստանում և արտերկրում ստեղծագործող մի խումբ նկարիչներ՝ Վարդգես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, Փանոս Թերլեմեզյանը, Մտեփան Աղաջանյանը, Եղիշե Թադևոսյանը, Վարդան Մախոխյանը, Էդգար Շահինը և ուրիշներ, գեղանկարչությունը հարստացրել են բարձրարժեք գործերով:

XX դարի 1-ին կեսին հայկական կերպարվեստի ազգային ավանդույթների և գեղանկարչության զարգացման իր բացառիկ արվեստով նպաստել է Մարտիրոս Սարյանը: Այդ շրջանում գեղանկարչության առաջընթացին իրենց լուրջ նպաստն են բերել նաև Սեդրակ Առաքելյանը, Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանը, Սեդրակ Ռաշնաճյանը, Վահրամ Գայֆեճյանը և ուրիշներ:



Fig. 1 Հովհաննես Այվազովսկի «Օռվերի ցատուք» (1886)



Fig. 2 Մարտիրոս Սարյան «Գազելներ» (1926)



Fig. 3 Մարտիրոս Սարյան «Հայաստան» (1923)



Հայկական գեղանկարչությունն առանձնակի վերելք է ապրել 1960-ական թվականներին՝ Հարություն Կալենցի, Մինաս Ավետիսյանի, Գրիգոր Խանջյանի, Մարիամ և Երանուհի Ասլամազյանների, Հովսեփ Փուշմանի, Գառգուի, Շարքի, Ժանսենի և ուրիշների ստեղծագործություններով։ Արդի հայ գեղանկարչության ճանաչված դեմքերից են Մկրտիչ Մեղրակյանը, Ռուբերտ և Հենրի Էլիբեկյանները, Կարեն Սմբատյանը, Ռուդոլֆ Խաչատրյանը, Ալեքսանդր Գրիգորյանը, Ջուլիոս Գրիգորյանը, Արկադի Բաղդասարյանը, Էմիլ Գազազը, Ռուբեն Ադայանը, Վալմարը, Փարավոն Միրզոյանը, Սարգիս Համալբաշյանը, Ռուբեն Աբովյանը, Արկադի Պետրոսյանը և ուրիշներ։ Հայկական գեղանկարչությունը բազմիցս ներկայացվել է արտերկրում, կազմակերպվել են ցուցահանդեսներ, հայկական արվեստի օրեր և այլ միջոցառումներ։ Հայկական գեղանկարչության սկզբնավորումը շատ հին է։ Օրգանական և անօրգանական ներկանյութերի առատությունն ու հարուստ գունաշարը նպաստել են գույների ակտիվ օգտագործմանը պաշտամունքային, կիրառական և գեղարվեստական նպատակներով

Օգտագործված գրականության ցանկ

Fig. 1  
[https://en.wikipedia.org/wiki/The\\_Wrath\\_Of\\_The\\_Seas](https://en.wikipedia.org/wiki/The_Wrath_Of_The_Seas)  
 Artist : Ivan Aivazovsky  
 Year : 1886  
 Medium : Oil-on-canvas  
 Dimensions : 70.1 cm x 110 cm (27.6 in x 43 in)

Fig. 2  
<https://www.wikiart.org/en/martiros-sarian/gazelles-1926>  
 Gazelles  
 Martiros Sarian  
 Original Title: Газели  
 Date: 1926; Armenia  
 Style: Symbolism  
 Genre: animal painting  
 Media: oil, canvas

Fig. 3  
<http://www.arthistoryarchive.com/arthistory/soviet/images/MinasAvetisyan-Memory-1973.jpg>  
 Minas Avetisyan - Memory - 1973

Fig. 4  
<https://www.wikiart.org/en/martiros-sarian/armenia-1923>  
 Armenia  
 Martiros Sarian  
 Original Title: Армения  
 Date: 1923; Armenia  
 Style: Symbolism  
 Genre: symbolic painting  
 Media: oil, canvas  
 Dimensions: 138 x 103 cm

Fig. 5  
<https://prabook.com/web/sedrak.arakelyan/3743032>  
 Yerevan yard  
 Sedrak Arakelovich Arakelyan

Fig. 6  
<https://yourtourinfo.com/armenia/armenian-painters/jean-carzou/>  
 Jean Carzou (Karnik Zouloumian)  
 Bust of Lady, 1966

Fig. 7  
[https://commons.wikimedia.org/wiki/File:Armenia\\_Museum\\_of\\_Art\\_and\\_History.jpg](https://commons.wikimedia.org/wiki/File:Armenia_Museum_of_Art_and_History.jpg)

Fig. 8  
<https://m.mamul.am/hy/news/218360>



Fig. 4 Մինաս Ավետիսյան «Հիշողություն» (1973)



Fig. 5 Մեղրակ Առաքելյան, «Երևանի բակը», 1927



Fig. 6 Գառգու, «Palais de la Méditerranée», (1966)

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Հայկական կերպարվեստի հավաքածուով պատկերասրահը Հայաստանի խոշորագույն և աշխարհի ամենամեծ թանգարանն է: Բաժինը ստեղծվել է 1921 թվականին:

Նախ գործել է հայկական կերպարվեստի, ապա՝ գեղանկարչության բաժնի կազմում, 2004-ից առանձին բաժին է: Բաժնի ֆոնդերում պահպանվում է ավելի քան 7000 ցուցանմուշ, որոնց կազմում են հին և միջնադարյան որմնանկարների և մանրանկարների վավերագրական պատճեններ, 17-19-րդ դարերի եկեղեցական նկարներ, Նոր և Նորագույն շրջանների ստեղծագործություններ:



Fig. 7 Հայաստանի ազգային պատկերասրահ




Fig. 8 Հայաստանի ազգային պատկերասրահ

# Հարցաթերթիկ

## Հայաստանում անցկացված վերապատրաստման վերաբերյալ հարցման արդյունքներ

Առկա ձևաչափով վերապատրաստում 3

Պահպանման գիտության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ



### Վերապատրաստման մասին տպավորություններ

- Նմանօրինակ հնարավորությունները շատ օգտակար են իմ ու ընդհանրապես բոլոր վերականգնող մասնագետների համար: Հպարտորեն կօգտագործեմ գիտելիքներս, հուսալով, որ վերապատրաստման դասընթացները կլինեն շարունակական, շնորհակալություն:
- Շնորհակալ եմ վերապատրաստումը կազմակերպելու և իրականացնելու համար: Դասընթացները հետաքրքիր էին և բովանդակալից, մենք պարզաբանեցինք բազմաթիվ անհասկանալի հարցեր:
- Շատ տպավորված եմ դասընթացներից: Շնորհակալ եմ շատ:
- Հիանալի
- Շատ շնորհակալություն ամեն ինչի համար:
- Շատ լավ
- Հաճելի միջավայրում, շատ օգտական դասընթաց էր: Մացուշիմա սանը գիտագործնական դասընթացը վարում էր շատ անմիջական, թեթև: Փորձի փոխանակման և կիրառական գիտելիքներ ձեռք բերելու առումով դասընթացը հաջողված է: Շնորհակալություն ճապոնական կողմի մասնագետներին:
- Շատ լավ



# 4

Հավելված

Գիտական հոդված

Մակրոտո Արիմուրա Տոկայ

համալսարան Պատմության

Ֆակուլտետի հնագիտության բաժին



# Քարեդարյան հնագիտության ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում: Անցած ուղին և հեռանկարները

Բորիս Գասպարյան և Մակոտո Արիմուրա

## 1. Նախաբան

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում՝ տեղակայված Աֆրիկա և Եվրասիա մայրցամաքների միջև եղած միջանցքում: Այդ պատճառով, Հայաստանը կարևոր նշանակություն կունենա մարդկային բնակավայրերի սկզբնական փուլերի և Մերձավոր Արևելքում և դրանից դուրս հնագույն քաղաքակրթությունների ձևավորումը հասկանալու համար: Հայաստանի տարածքում Քարե դարի նմուշների գոյությունը հայտնի է դարձել 19-րդ դարի վերջերից: Դրանք ցույց են տալիս, որ այդ տարածքը գրավել է Քարե դարաշրջանի բնակիչներին՝ սկսած վաղ հումինոիդներից մինչև Էնեոլիթ դարի վաղ բարդ կառույցով հասարակություններ: Մարդկանց բնակության մասին այս հարուստ արձանագրությունների պատճառը հավանաբար բխում է տարածաշրջանի հարուստ բնական ռեսուրսներից (կենդանական ու բուսական աշխարհ, օգտակար հանածոներ, ջուր և այլն) և դրա էկոլոգիական գոտիների հորիզոնական և ուղղահայաց բազմազանությունից: Չնայած խորհրդային ժամանակաշրջանի հնէաբանները արձանագրել էին երկրում քարեդարյան բազմաթիվ կայանների մասին (օրինակ՝ Պյոտրովսկի 1949; Չամյատնին 1947; 1950; Պանիչկինա 1950; Սարդարյան 1954; 1967; Լյուբին 1970; 1984; 1989; 1998; 1998; Երիցյան 1970; 1975; Ղազարյան 1986; 1991; Մարտիրոսյան 1967; 1969; 1971; 1974; Թորոսյան 1971; 1976; Մունչան 1975; 1982; Կորոբկովա 1987; Կուչնարևա 1997 և այլն. Նկար 1), այս հետազոտությունների մեծ մասը տպագրված են կա՛մ հայերեն կա՛մ ռուսերեն լեզուներով և հիմնված են շատ քիչ թվով պեղված շերտերի վրա: Այս և այլ պատճառներով, Հայաստանի տարածքի Քարե դարը քիչ է հայտնի արևմտյան գիտնականների շրջանում և Էական ներդրում չի ունեցել վերջին ժամանակների տարածաշրջանային և համատարածաշրջանային սինթեզների մեջ:

## 2. Վերջին ժամանակների հետազոտությունները

Չնայած դեռևս մեր գիտելիքներում առկա բազմաթիվ «բացերին», այժմ հետազոտության նոր տեղաշարժ է նկատվում տեսական, ժամանակագրական և հնամիջավայրային ամուր հիմք հիմնելու՝ երկրի Քարե դարի տեղանքների ուսումնասիրության համար: Սա հիմնականում պայմանավորված է համակարգված նախագծերի շրջանակներում երկարաժամկետ համատեղ առաքելությունների միջազգային համագործակցությամբ և հաստատմամբ: Սկսած 1999 թվականից, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը Քարե դարի տեղանքների ուսումնասիրություններ է իրականացրել յոթ նման համատեղ արշավախմբերով՝ հայ-ֆրանսիական, երեք հայ-ամերիկյան, հայ-գերմանական, հայ-բրիտանա-իռլանդական, ինչպես նաև հայ-ավստրիական (Sagona 2010; Avetisyan and Bobokhyan 2012): Այս նախագծերը հետապնդում են երկու նպատակ: Նախ՝ կիրառել ժամանակակից հնագիտական և վերլուծական մեթոդներ Հայաստանի Քարե դարի տեղանքների ուսումնասիրության համար,

և երկրորդ՝ վերապատրաստել հայ գիտնականների հաշորդ սերունդը՝ նրանց անմիջական ներգրավմամբ նախագծին: Այս արշավախմբերի ջանքերով բացահայտվել են Քարե դարի կայաններ կենտրոնական Հայաստանում՝ Քասաղ գետի կիրճում և Ապարանի խոռոչում, Հրազդան գետի կիրճում և Հրազդան-Կոտայք սարահարթում, Արարատյան խոռոչում, Հայաստանի հյուսիսում՝ Աղստև գետի կիրճում և նրա վտակներում, Ախուրյան գետի ավազանում և Շիրակի խոռոչում, Դեբեդ գետի ավազանում, Լոռու խոռոչում ու Տաշիրի սարավանդում, և, վերջապես, Հայաստանի հարավում՝ Արփա ու Որոտան գետերի ձորերում: Այս համագործակցությունը մեծացրել է Հայաստանում գտնվող Քարե դարի տեղանքների ժամանակագրական և մշակութային բաշխման վերաբերյալ մեր գիտելիքները (Աղյուսակ 1, Նկար 2):

### 3. Պալեոլիթի ժամանակաշրջան

Համագործակցային նախագծերի կարևորագույն նպատակներից է իրականացնել Ստորին պալեոլիթի շերտի հնագիտական տեղանքների որոնումն ու պեղումը: Այս ուղղությամբ արդեն իսկ ունենք որոշակի արդյունք, քանի որ հայտնաբերվել են նախաաշելյան տեղանքներ Դեբեդ գետի հովտում (հայ-ամերիկյան համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Բ. Գասպարյան, ՀՀ ԳԱԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտ, և Չ.Պ. Էգելանդ, Հյուսիսային Կարոլինայի համալսարան, Գրինսբորո), Արարատյան խոռոչում (հայ-ամերիկյան համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Բ. Գասպարյան, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, և Դ.Ս. Ադլեր, Կոնեկտիկուտ համալսարան), Արփա գետի հովտում (հայ-ամերիկա-իռլանդական համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Բ. Գասպարյան, ՀԱԻ, Ռ. Փինհասին, Քորքի ազգային համալսարան, և Գ. Արեշյան, Լոս Անջելեսի կալիֆոռնյան համալսարանի Կոտսենի հնագիտության ինստիտուտ) և Շիրակի խոռոչում (հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Շ. Շաթեներ, Maison de l'Orient et de la Méditerranée, Լիոն, և Ն. Խաչատրյան, Շիրակի երկրագիտական թանգարան): Հայտնաբերվել են նաև Աշելյան հուշարձանների նոր տվյալներ, հատկապես օբսիդիանի և դաջիտի հունքերի հարևանությամբ գտնվող տարածքում: Հատկապես ուշագրավ են Արարատյան խոռոչում գտնվող Աղավնատուն տեղանքների խումբը և Կոտայքի սարավանդի Հատիս խումբը (հայ-ավստրիական համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Ն. Ավետիսյան, Երևանի պետական համալսարան, Բ. Գասպարյան, և Դ. Շեֆեր, Ինսբրուքի համալսարան): Թերևս ամենանշանակալից բացահայտումներն արել է հայ-ամերիկա-իռլանդական համատեղ արշավախումբը (համանախագահներ՝ Բ. Երիցյան և Բ. Գասպարյան, ՀԱԻ, Դ.Ս. Ադլեր, Կոնեկտիկուտի համալսարան, և Ռ. Փինհասին, Քորքի ազգային համալսարան), որն ուսումնասիրել էր Հրազդան գետի կիրճի և Հրազդան-Կոտայք սարավանդի պալեոլիթի տեղանքները, ինչը կապված էր Նոր Գեղի-1 բացօթյա տեղանքի հայտնաբերման և ուսումնասիրման հետ: Հրազդան գետի կիրճում գտնվող այս շերտավորված և հաստատուն կերպով Միջին պլեյստոցենին թվագրված տեղանքը (> 300 հզ) պարզաբանում է Հայաստանում Աշելյան ուշ ժամանակաշրջանից Միջին պալեոլիթի անցման մասին մեր ըմբռնումը, որտեղ տեսնում ենք տեղական տեխնոլոգիաների փոխարինումը քարե հատիչներից և ձեռքի կացիններից՝ Լևալլուական տեխնիկայի միջոցով պատրաստված գործիքներով (Gasparian 2007; Egeland et al. 2010; Gasparian 2010; Adler et al. 2012): Արձանագրվել են նաև լավ շերտավորված Միջին պալեոլիթի (ՄՊ) հնագիտական տեղանքներ, ինչը թույլ տվեց մեզ բաժանել Հայաստանի տարածքի Միջին պալեոլիթը երեք ժամանակագրական փուլերի՝ վաղ, միջին և ուշ: Վաղ Միջին պալեոլիթի (վՄՊ) տեղանքներից են Դեբեդ գետի

հովտում գտնվող Բագրատաշեն-1-ը և Արարատյան խոռոչում գտվող Աղավնատուն-1-ը: Երկու տեղանքներն էլ բացօթյա են, և նախնական վերլուծություններով ենթադրվում է, որ դրանք կարող են ներկայացնել գլխավորապես դացիտի հումքի վրա հիմնված քարե գործիքների արդյունաբերության բազմանպատակ ճամբարներ: Նման վայրերը շատ հազվադեպ են հարավային Կովկասում, և կարելի է գուգահեռներ տեսնել կովկասյան ՄՊ տեղանքների «Ջրուշուլա-Կուդարյան» մշակութային կառույցների հետ: Բագրատաշեն-1 տեղանքի տարիքը, ամենայն հավանականությամբ, ընկնում է Նախավերջյան սառցադաշտային ժամանակաշրջանի մեջ (MIS 7-6): Մի փոքր ուշ՝ Միջին պալեոլիթին պատկանող հնավայրերի հետքեր գրանցվել են Հովք-1-ի բացարձակ բարձրության վրա գտնվող քարայրային տեղանքում, որտեղ ցրված լիթիկական հավաքածուն վկայում է վաղ սառցադաշտային ժամանակաշրջանում մարդու կարճաժամկետ այցի մասին (MIS 5): Հովք-1 քարայրը ներկայումս Հայաստանում հայտնի միակ Միջին պալեոլիթի (մՄՊ) տեղանքն է, և հավանական է, որ մարդիկ այդպիսի բացարձակ բարձրության էկոլոգիական խորշերը շահագործում են սեզոնային որսի համար: Անցյալ տասնամյակի ընթացքում հայտնաբերված կամ նորից պեղված ուշ Միջին պալեոլիթի (ուշՄՊ) տեղանքները՝ Լուսակերտ-1 քարայր (հայ-ամերիկա-իռլանդական համատեղ արշավախումբ), Անգեղակոթ-1-ի քարանձավը, Կալավան-2 բացօթյա տարածքը (հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Բ. Գասպարյանը և Շ. Շաթեներ), Բարոժ-12 և Պտղավան-4 բացօթյա տեղանքները (հայ-ամերիկյան համատեղ արշավներ) ունեն ավելի լայն աշխարհագրական և ֆունկցիոնալ բաշխում: Համընկնելով MIS 4-ի և MIS 3-ի սահմանների հետ՝ դրանք տարբերվում են բնապահպանական բազմազանությամբ, հումքի աղբյուրի շահագործման ստրատեգիայով և սոցիալ-տնտեսական վարքով, ինչը մեզ թույլ է տալիս վերծանել ուշՄՊ հոմինինների ապրելակերպը Հայաստանի տարածքում (Fourloubey et al. 2003; Liagre et al. 2006; Pinhasi et al. 2008; 2011; 2012; Ghukasyan et al. 2011; Bar-Oz et al. 2012).

Կարևոր առաջխաղացումներ են եղել նաև Հայաստանի տարածքում Վերին պալեոլիթի հայտնաբերման և ուսումնասիրման գործում, որն այժմ ներկայացված է առնվազն երկու լավ շերտավորված տեղանքներով (Աղիտու-3 քարայր և Կալավան-1 բացօթյա տեղանք): Մինչ վերջերս ենթադրվում էր, որ Հայկական լեռնաշխարհը բնակեցված չէր առավելագույն Վերջին սառցադաշտային ժամանակահատվածում՝ իր բացարձակ բարձրության միջավայրի և ցուրտ կլիմայական պայմանների պատճառով: Հայ-գերմանական համատեղ արշավախմբի (համանախագահներ՝ Բ. Գասպարյան և Ա. Վ. Կանդել, Հայդելբերգի գիտությունների և հումանիտար գիտությունների ակադեմիա՝ Թյուբինգենի համալսարանում) կողմից պեղված Աղիտու-3 քարայրային տեղանքը մեզ ապահովում է լավ պահպանված 40,000-ից 24,000 Cal BP (վաղ և միջին վերին պալեոլիթի) բնապահպանական և մշակութային շերտագրական տեղեկություններ: Մարդ բանականը սկսեց օգտագործել քարայրը MIS-3-ի վերջում, իսկ MIS-2-ի ընթացքում՝ աճող հաճախականությամբ: Վանակատից (օբսիդիան) և կայծքարային ապարներից պատրաստում էին քարե գործիքներ, որսում էին միջին չափի կճղակավորներ և ձիեր, իսկ հագուստի համար օգտագործում էին ոսկորներ: Այս էկոլոգիական խորշը, որը գտնվում էր Որոտան գետի հովտում 1,601 մ բարձրության վրա, սեզոնային ճամբար էր՝ ժամանակի ընթացքում օգտագործման հաճախականության աճով: Կալավան-1 բացօթյա տեղանքը, որը գտնվում է Արեգունու լեռնաշղթայի հյուսիսային լանջերին, Սևանա լճից հյուսիս-արևելք, պեղվել է հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից: Ծովի մակարդակից 1,630 մ բարձրության վրա գտնվող տեղանքը ռադիոածխածնային հետազոտմամբ թվագրվել է մ.թ.ա. 16,000-15,000 թվականներին: Այն մեզ տրամադրեց լավ պահպանված պալեոսոլային շերտ,



որը պարունակում էր բնակավայրի կառուցվածքի մասին տեղեկություններ, մասնավորապես ֆաունայի մնացորդներ, լիթիկներ, օջախներ և գործունեության տարածքներ: Կալվան-1-ը սեզոնային որսորդական ճամբար էր, որը ցույց էր տալիս, որ Հայաստանի ու Ուշ պալեոլիթի բնակիչները ունեին Առավելագույն Վերջին սառցադաշտային ժամանակահատվածի ավարտից ի վեր ողջ Հարավային Կովկասում տարածված Էպիգրավետյան մշակութային կառույցների նման որոշ մշակութային առանձնահատկություններ (Pinhasi et al. 2008; Liagre et al. 2009; Kandel et al. 2011; Chataigner et al. 2012; Montoya et al. 2013).

#### **4. Մեզոլիթ (Միջին քարե դար) և Նեոլիթ (Նոր քարե դար) դարաշրջաններ**

Ժամանակակից Հայաստանի տարածքում և առհասարակ հարավային Կովկասում նեոլիթացման ասպեկտները շարունակում են քննարկվել՝ Ուշ Պլեյստոցենի/Վաղ Հոլոցենի հնավայրերի վերաբերյալ մեր գիտելիքների մեծ բացի պատճառով: Ամենավաղ գյուղացիական համայնքները հայտնի են մ.թ.ա. 6-րդ հազարամյակի սկզբից և վերագրվում են Ուշ նեոլիթի այսպես կոչված «Առատաշեն-Շուլավերի-Շոնուտեպե» մշակութային կառույցներին: Վերջին տասնամյակում կատարված ուսումնասիրությունները հայտնաբերել են ուշ Պլեյստոցենի Էպիպալեոլիթի և վաղ հոլոցեն մեզոլիթի Հայաստանում առաջին տեղանքները (Ափնագյուղ-8 / Կոլո-2 քարանձավ, Քուչակ-1 քարանձավ և Գեղարոտ-1 բացօթյա տեղանքը Ապարանի խոռոչում՝ պեղված և ուսումնասիրված Հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից: Ինչպես նաև Ենոքավան-2 քարայրը Աղտև գետի հովտում, որը փորձնական պեղել է հայ-իռանդական համատեղ խումբը և այլոք): Այս ամենը ցույց է տալիս որսորդների և հավաքողների շարժական բնակչության առկայությունը, որոնք ապրում էին գետի կիրճերում, ինչպես նաև բարձր լեռնային խոռոչների գետային դարավանդներում և սարավանդներում առկա քարայրներում: Հիմնականում վանակատի հումքից լիթիկական առատ հավաքույթները ցույց են տալիս բազմաթիվ աղբյուրների շահագործում՝ գերադասելով դրանցից մեկը կամ երկուսը: Այդ տեղանքների համեմատաբար բարակ մշակութային նստվածքները չունեն հարուստ կենսահնագիտական տեղեկություններ: Այնուամենայնիվ, սահմանափակ կենսահնագիտական նյութերից կարելի է ենթադրել վայրի կենդանիների որսի (ոչխարներ, այծեր, եղնիկներ և կուլաններ) և վայրի բույսերի հավաքի մասին: Ընտելացման և սննդամթերք արտադրող տնտեսության հետքերը բացակայում են, ինչը թույլ չի տալիս մեզ Հայաստանի Վաղ հոլոցենի տեղանքները տեղավորել Նեոլիթի ժամանակաշրջանում, այլ անհրաժեշտ է դարձնում, որ այդ տեղանքները դիտարկվեն որպես մեզոլիթ և/կամ պրոտո-նեոլիթ՝ թվագրվելով մ.թ.ա. 12,000–7,500 թթ. ժամանակահատվածին (ելնելով ռադիոածխածնային հետազոտությունից հավաքված նախնական տեղեկությունից): Այսպիսով, այս և ուշ նեոլիթյան տեղանքների միջև առկա է խնդրահարույց ժամանակագրական և մշակութային տարբերություն (աղյուսակ 1): Այս տեղանքների լիթիկական հավաքույթները ներառում են մեծ թվով երկրաչափական միկրոլիտներ (սկալներ, ճոպանաձև ուղղանկյուններ), ինչպես նաև շատ հատուկ՝ ճնշման շերտավորման տեխնոլոգիայով կողային եզրերին շարունակական գուգահեռ ռետուշավորմամբ պատրաստված գործիքներ: Այս եզակի գտածոները, որոնք տարբեր հրապարակումներում կոչվում են «Կոլոյի տիպ» գործիքներ, նշում են ժամանակաշրջանի մշակութային առանձնահատկությունները: Դրանք տեսքով նման են Մերձավոր Արևելքի նախախեցեգործական նեոլիթյան տեղանքների այսպես կոչված «Չատոնու տիպի» գործիքներին, բայց տարբերվում են տեխնո-մորֆոլոգիական դիզայնի շատ առումներով, և Հայաստանում հայտնվել են ամենաքիչը մ.թ.ա. IX հազարամյակի առաջին կեսից: Այս գործիքների գործառույթը դեռ պետք

Է պարզաբանվի: Ավելի հարուստ կենսահնագիտական հաջորդականություն ունեցող «Կմլո տիպի» տեղանքների նոր պեղումները, որոնք, հավանաբար, տեղակայված են Հայաստանի՝ օրգանական նյութերի պահպանմանը առավել նպաստավոր հյուսիսի կարստային միջավայրերում, որոնք պետք է որ լրացուցիչ տեղեկություն տան այս խնդրի մասին: (Arimura et al. 2009; 2010; 2012; Chataigner et al. 2012)

Հայաստանի ուշ նեոլիթյան երեք հնավայրերում՝ Առատաշեն, Ակնաշեն-Խաթունարխ (հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Ռ. Բադալյան, ՀԱԻ և Շ. Շաքեներ) և Մասիս Բլուր (հայ-ամերիկյան համատեղ արշավախումբ, համանախագահներ՝ Պ. Ավետիսյանը, ՀԱԻ, և Գ.Ե. Արեշյանը, ԼԱ կալիֆոռնյան համալսարանի Կոտսենի հնագիտության ինստիտուտ), կատարված վերջին հետազոտությունները բացահայտեցին մի շարք կարևոր հայտնագործություններ: Արաքս գետի ավազանում տեղակայված այս հնավայրերը կլոր արհեստական բլուրներ են և թվագրվում են մ.թ.ա. 6-րդ հազարամյակի առաջին կեսին (ըստ ռադիոածխածնային հետազոտության, այն թվագրվում է մ.թ.ա. 6000–5.500 թթ.): Դրանք ներկայացնում են Հայաստանի տարածքում սննդարտադրության տնտեսության ամենավաղ փաստաթղթավորումը և պահպանում ճարտարապետության, կերամիկայի և մետաղի արտադրությունը: Այս հնավայրերի բնակիչները հողագործներ և հովիվներ էին, որոնք կառուցում էին կլոր հատակագծով բնակելի կառույցներ (3-5 մ տրամագծով) ցեխից աղյուսներից կամ հողագնդերից: Առատաշենի և Ակնաշեն-Խաթունարխի կերամիկական հավաքածուները իրենցից ներկայացնում են խեցեգործության անկախ արտադրություն՝ հանքային, օրգանական կամ միասնական՝ հանքային-օրգանական խառնվածքով: Դրանք էլ երբեմն գարդարված են հորատումներով, փորվածքներով և կոփված սպասքի դեպքում՝ ապլիկացիայի տարրերով (օրինակ՝ բռնակները): Երկու քարե կնիքների գտածոները (Ակնաշեն՝ Հորիզոն VII և Մասիսի բլուր) նոր երևույթ են նշում Հայաստանում Ուշ նեոլիթի նյութական մշակույթում: Տարածված էին ոսկորից, եղջյուրներից և եղջերուների եղջյուրից պատրաստված առարկաներ, սակայն քանակի և բազմազանության նկատելի անկում կար Առատաշենի և Ակնաշեն-Խաթունարխի դեպի վերին հորիզոններ հատվածում: Վանակատից պատրաստված գործիքների հիմնական ներկայացուցիչներն են կողմնակի հարվածներով և ճնշումն օգտագործելով շերտավորման (հենակով և լծակով) տեխնիկայով արտադրված շեղբով գործիքները: Բացի այդ, չնայած Առատաշենում միկրոլիտներ չեն գտնվել, երկրաչափական միկրոլիտները (նետերի գլխիկները) շատ են ինչպես Ակնաշեն-Խաթունարխում, այնպես էլ Մասիս բլուրում: Այս տեղանքների որոշ հիմնական հատկանիշները նկատելի են: Շինարարական տեխնիկայի, կերամիկական և լիթիկային արտադրության, և այլ նյութական մշակույթի այլ ասպեկտները, այնուամենայնիվ, առկա են և կարող են բացատրվել սպառողական տնտեսության մեջ նրանց տարբեր գործառույթներով: Ընդհանուր առմամբ, Հայաստանի Ուշ նեոլիթյան հուշարձանները ցույց են տալիս մշակութային միասնություն Արաքս և Կուր գետերի ավազանների տեղանքների հետ և ձևավորում են այսպես կոչված «Առատաշեն-Շուլավերի-Շոնոտեպե» մշակութային կառույցները, ինչն էլ ընդգծում է ակնհայտ կապեր Մերձավոր Արևելքի գյուղատնտեսական բնակչությունների միջև: Վերոհիշյալ տեղանքները պարունակում են բազմաթիվ մշակութային շերտեր և շարունակական պեղումների պարագայում հնարավորություն կա հայտնաբերել նոր շերտա-ժամանակագրական մասեր, որոնք կլրացնեն Արարատյան դաշտի նեոլիթյան հուշարձանների և Վաղ հուլոցների տեղանքների միջև ներկայումս առկա որոշ բացերը: Բացի այդ, այս հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են նեոլիթյան

մակարդակների վրա գտնվող էնոլիթային հուշարձանների մնացորդներ, չնայած դրանք, ցավոք, խիստ վնասվել էր Էրզրոմի և արդի գյուղատնտեսական համահարթեցման գործողությունների պատճառով: Այնուամենայնիվ, այն բոլոր հնավայրերում, որտեղ էնոլիթային շերտերը գտնվում են նեոլիթից վեր, երկու հուշարձանների միջև կարծես առկա է առնվազն 400-500 տարվա անփոփոխ ժամանակագրական բաց, և Էնոլիթը հավանաբար սկսվել էր մ.թ.ա. 4800 թվականի մոտակայքում: Մակայն, Էնոլիթի ժամանակաշրջանի սկզբնական փուլերը արտացոլող հնագիտական տեղանքները, որոնք ամենայն հավանականությամբ եղել են մ.թ.ա. 5200–4,800 թվականների միջև, դեռ անհայտ են: (Badalyan et al. 2004b; 2007; 2010; Lombard and Chataigner 2004; Palumbi 2007; Chabot et al. 2009; Arimura et al. 2010; Chabot and Pelegrin 2012).

## 5. Էնոլիթի ժամանակաշրջան

Վերջին տասնամյակի գիտական ուսումնասիրությունները զգալի առաջընթաց են գրանցել Հայաստանում Էնոլիթի ժամանակաշրջանի՝ հատկապես նրա միջին և ուշ (կամ վերջնական) փուլերի ուսումնասիրության ուղղությամբ՝ հայտնաբերելով բազմաթիվ հնագիտական տեղանքներ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 4800-3400 թթ.: Այդ տեղանքներից ամենանշանակալիներից են Արարատյան խոռոչի Մուշական-4 բնակավայրը (պեղել են ՀԱԻ-ի խումբը՝ Բ. Գասպարյանի առաջնորդությամբ), Ներքին Գողեճոր հնավայրը՝ Որոտան գետի հովտում, Հայաստանի հարավը (պեղել է հայ-ֆրանսիական համատեղ արշավախումբը, համանախագահներ՝ Պ. Ավետիսյանը, ՀԱԻ, և Շ. Շաթեներ) և Արենի գետի հովտում գտնվող Արենի-1 քարայրը (պեղվել է հայ-իտալիական ամերիկյան արշավախմբի կողմից, գլխավորել է Բ. Գասպարյանը, համանախագահներն են՝ Ռ. Փինհասին և Գ.Ե. Արեշյանը): Մուշական-4-ում փորձնական պեղումները ցույց են տալիս առնվազն երկու Էնոլիթի հորիզոնների առկայություն, որոնք ներկայացված են կերամիկայով, լիթիկական արդյունաբերությամբ, մետաղական իրերով և խեցուց ուլունքներով: Մակայն, երկու հորիզոնների միջև առկա է ակնհայտ ժամանակագրական բաց: Վերին հորիզոնում գտնված խեցեգործական ամանների բեկորներն ու լիթիկական նմուշները հատկանշական են այսպես կոչված Սիոնի մշակութային համալիրին, որը հայտնի է Վրաստանի արևելքում գտնվող Էնոլիթի տեղանքի պեղումներից: Երկրորդ հորիզոնը պարունակում է խեցեգործության օրինակներ, որոնք բնորոշ են այսպես կոչված «Ադաբլուր» մշակութային կառույցին, որը հայտնի է Արարատյան դաշտում պեղված Ադաբլուր նույնանուն տեղանքից: Ամենայն հավանականությամբ, Մուշական-4-ը պատկանում է հարավային Կովկասի միջին Էնոլիթի հաջորդականությանը և պետք է որ ընկնի մ.թ.ա. 4800–4,300 թվականների միջև: Վերջերս հայտնաբերված Ակնալիճի դամբարանը և գույքը, որն, ի դեպ, նման է Մուշական-4-ի Վերին հորիզոնին, թվագրվում է մ.թ.ա. 4,400–4,100 թթ: Այս թվականների վերին սահմանը համարվում է ամենահավանականը:

Հայաստանում Էնոլիթի ժամանակաշրջանի վերջին փուլի հաջորդականության մեջ հաջորդ քայլը արտացոլվում է Արենի-1 քարայրի պեղումներում, որոնք արձանագրել են երեք Էնոլիթի հորիզոնների գոյությունը՝ բաշխված մ.թ.ա. 4300-3400 ժամանակահատվածում: Հորիզոն III-ը, որը նկատելի զուգահեռներ ունի Մուշական-4 խեցեգործական համալիրի հետ, թվագրվում է մ.թ.ա. 4300–4000 թթ., Հորիզոն II-ը՝ մ.թ.ա. 4000–3,800 թթ., և Հորիզոն I-ը՝ 3,700–3,400 մ.թ.ա. և համապատասխանում է Ներքին Գողեճոր հնավայրի Էնոլիթի շերտերի հետ: Բացի այս հաստատուն թվագրված հաջորդականությունից, տեղանքը եզակի է ոչ մնայուն

օրգանական նյութերի բացառիկ պահպանմամբ (հնէաբուսաբանական մնացորդներ, տեքստիլ և գամբյուղագործություն, կաշվե, ոսկորից և փայտե իրեր, մարդու և այլ օրգանական մնացորդներ) և իր ծիսական գործառույթով: Բացահայտելով տեղական նյութական մշակույթի տարբեր ասպեկտները (կերամիկայի և մետաղի արտադրություն, լիթական արդյունաբերություն), այն նաև լույս է սփռում Հայաստանի Էնեոլիթի բնակչության կրոնական սովորությունների, ինչպես նաև նրանց արհեստների և տեխնոլոգիական հմտությունների, գյուղատնտեսության զարգացման մակարդակի վրա և պատասխանում է սննդամթերքի արտադրության վերաբերյալ տարբեր հարցերի, որոնք հիմնված էին նախկինում անհայտ գտածոների վրա և պատկանում են մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջին քառորդից մինչև մ.թ.ա. 4-րդ հազարամյակի առաջին կեսն ընկած ժամանակահատվածին: Աշխարհի ամենահին կաշվե կոշիկի և գինու արտադրական համալիրի հայտնաբերումը այս նոր բացահայտված դասակարգերի շարքում է: Արենի-1-ը նաև աչքի է ընկնում Վաղ Բրոնզե դարի Կուր-Արաքսյան մշակութային խմբերին պատկանող մի շարք իրերի առկայությամբ: Այս գտածոն Կուր-Արաքսյան երևույթի շերտը դնում է մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջից մ.թ.ա. 4-րդ հազարամյակի սկիզբ, ինչը պահանջում է ներկայումս ընդունված ժամանակագրության վերագնահատում և թույլ է տալիս նկարագրել դրա ծագման տարածքը:

Կուր-Արաքս մշակութային երևույթի տեղական ծագման հարցի վերաբերյալ նմանատիպ դիտարկումներ արվում են Ներքին Գողեճորի պեղումներից, որն իրենից ներկայացնում էր կենդանիների հոտերի հետ կյանքի վրա հիմնված կենսունակ տնտեսությամբ կիսամյակային կամ սեզոնային բնակավայր: Ճարտարապետական մնացորդների սակավությունը, հոտի կազմը, գյուղատնտեսության սահմանափակ դերը, վանակատի փոխանակման ապացույցները, բնակավայրի տեղակայումը միգրացիոն ուղիների մոտով և երկրորդական ապրանքների (օրինակ՝ կաթ, բուրդ) շահագործման վրա հիմնված ներքին արտադրությունը վկայում են այն մասին, որ հարավային Հայաստանում քոչվորությունը և պաստորալիզմը զարգացան Էնեոլիթյան ժամանակաշրջանի վերջում (ըստ ռադիոածխածնային հետազոտությունների, Գողեճորից մի շարք թվագրումներ ընկնում են մ.թ.ա. 3700-3400 թթ): Գողեճորի բազմաթիվ գտածոների շարքում (լիթիկներ, ոսկորից գործիքներ, պղնձի իրեր) առկա է տեղական արտադրության խեցեգործությունը, որը ներկայացված է անհարթ, ձեռագործ կաթսաներով, որոնցում գերակշռում է կոփված սպասքը, ինչպես նաև ներկված բեկորների փոքր քանակով նմուշների առկայությունը, որոնց փոքր մասը նման են Ուբաիդյան ժամանակաշրջանի մշակութային կառույցներին, իսկ մեծամասնությունը բարենպաստորեն համեմատվում է Ուրմիա լճի ավազանից հայտնաբերված նմուշների հետ: Տեղական Էնեոլիթային սպասքի որոշ օրինակներ ձևաբանական նմանություններ ունեն Կուր-Արաքսյան խեցեղենի հետ: Ուրմիայից և Ուբաիդիից ներկված խեցեղենի առկայությունը և շարժական անցուղու ապացույցը վկայում են Գողեճորի բնակիչների և Իրանի հյուսիս-արևմտյան տարածքները գրավող մարդկանց միջև լայն փոխազդեցության մասին: Սա Ներքին Գողեճորի հնավայրը դարձնում է Ուբաիդի փոխգործակցության շրջանի ամենահյուսիսային կետը: Տեղական կենսաբանական հարուստ տնտեսության բացի, հավանաբար, վանակատի և պղնձի բազմաթիվ հանքանյութերի առկայությունն էր, որ այդ խմբերին ձգեց Սյունիքի լեռնաշխարհ և խթանեց միջքաղաքային կապերը: Միևնույն ժամանակ, Արենի-1-ի կերամիկական համալիրի ուսումնասիրությունը ցույց է տալիս սերտ կապեր հարավային Կովկասի և դրանից դուրս նմանատիպ տեղանքների հետ (Օվշուլար Տեպեսի, Մենթեշ Տեպեն Լեյլաթեփե տեղանքները Ադրբեջանում, Բերիքլեբին՝ Վրաստանում, Թիլքի թեփեն՝

Վանա լճի ավազանում և Մայկոպյան մշակույթը), ինչը ցույց է տալիս աճող փոխգործունեություն տարածաշրջանում:

Ուշ էներլիթի փոքր մասշտաբով որսորդական ճամբարները, ինչպիսիք են Ծաղկահովիտ-1 քարանձավը, Բարեպատ-1 և Գետահովիտ-2 քարայրները, Հովք-1 և Հովք-3 քարանձավները և այլն, նույնպես արձանագրվել և պեղվել են Ադտն գետի հովտում և Արագած լեռան լանջերին (պատկանող մ.թ.ա. 4,300–4,000 միջակայքին) հայ-ֆրանսիական և հայ-իտալական համատեղ արշավների կողմից: Երբեմն առատորեն լիթիկային առարկաներով (հիմնականում նետերի գլխիկներով) լցված, երբեմն էլ քիչ լիթիկային գտածոներով և կենդանական աշխարհի ներկայացուցիչների մնացորդների կուտակումով, այս տեղանքները բացահայտում են նախկին որսորդների և հավաքողների ապրելակերպը շարունակող փոքր խմբերի գոյությունը, գուգահեռ գյուղատնտեսական և հովիվային տնտեսություն ունեցող հասարակությունների հետ: Ընդհանուր առմամբ, Հայաստանում էներլիթային տեղանքների ուսումնասիրության ներկայիս կարգավիճակը ցույց է տալիս տեղական հասարակական կազմակերպման շատ բարդ պատմություն՝ տարբեր մշակութային և տնտեսական սովորություններով և լանդշաֆտային կազմակերպմամբ, սկսած բարդ հասարակություններին բնորոշ տարրերից վերջացրած առաջին քոչվորների ապրելակերպով: (Avetisyan et al. 2006; Chataigner and Barge 2010; Chataigner et al. 2010; Pinhasi et al. 2010; Barnard et al. 2011; Areshian et al. 2012; Arimura et al. 2012; Kalantaryan et al. 2012; Wilkinson et al. 2012).

## 6. Արխեոնեոլիթի զարգացումը

Հնագիտական ուսումնասիրություններից բացի, վերջին երկու տասնամյակների ընթացքում աճ է նկատվել Հայաստանի և դրա սահմաններից դուրս գտնվող վանակատի աղբյուրների համակարգված ուսումնասիրության և դրանց շահագործման մեջ՝ պալեոլիթի ժամանակաշրջանից մինչև Երկաթե դար: Արդյունքում, ժամանակի ընթացքում, տարբեր հասարակական և մշակութային խմբերի կողմից առաջարկվել են տարբեր մոդելներ վանակատ ձեռք բերելու և նրանով հարուստ լանդշաֆտների շահագործման վերաբերյալ: Առաջնային և երկրորդային աղբյուրների ընտրությունը և վանակատի հումքի շահագործման ժամանակա-տարածքային տատանումները տրամադրում են հավելյալ տեղեկատվություն տնտեսական սահմանների և տեղական ու համատարածային փոխազդեցության բարդության վերաբերյալ: Այս ընթացքում ընթանում են վանակատի աղբյուրի նույնականացման նոր վերլուծական մեթոդներ:

Ջուգահեռ կատարվել է նաև Հայաստանի տարածքի Նեոլիթից մինչև Բրոնզե դարի պղնձե գտածոների մետալոգրաֆիկ գնման և երկրաքիմիական և իզոտոպային բնութագրման աշխատանքներ և դրանց հնարավոր կապը տեղական և տարածաշրջանային պղնձի հանքանյութերի հետ: Այս ուսումնասիրությունները ցույց են տալիս մետաղագործության վաղ տեսքը Հայաստանում և Հարավային Կովկասում, որը, հավանաբար, կապված է պղնձե և բազմամետաղային հանքանյութերի առատության հետ: Սա է, որ տարածաշրջանը հատկապես կարևոր է դարձնում հնագիտական մետաղագործության ուսումնասիրությունների համար: Հատկապես վերջին տասնամյակում, վաղ մետաղագործության կարևոր ապացույցներ են հայտնաբերվել ուշ նեոլիթյան և էներլիթյան մի շարք տեղանքներում, ինչպիսիք են Առատաշեն, Ակնաշեն-Խաթունարխ, Արենի-1, Ներքին Գոտեձոր և Մուշական-4, որոնց ուսումնասիրությունը բացահայտում է Հայաստանում պղնձի համաձուլվածքների արտադրության վաղ զարգացումը: (Blackman et al. 1998; Oddone et al. 2000);

Karapetyan et al. 2001; 2010; Chataigner et al. 2003; Badalyan 2010; Badalian et al. 2001; 2004a; Cherry et al. 2008; 2010; Courcier et al. 2008; Meliksetian et al. 2007; 2008; 2011; Arimura et al. 2010; Chataigner and Barge 2010; Gasparian 2010; Varoutsikos and Chataigner 2012; Chataigner and Gratuze 2013a; 2013b; Montoya et al. 2013; Courcier 2014; Frahm et al. 2014).

## 7. Հնամիջավայրային ուսումնասիրություններ

Քանզի կլիման համարվում է Էվոլյուցիայի գլխավոր շարժիչ գործոնը և փոփոխում է կենսաապահովման ռեսուրսների առկայությունը՝ ազդելով բնակեցված տարածքների բուսականության և կենդանիների բաշխման վրա, բազմաթիվ նախագծեր են հիմնվել Հայաստանում և հարակից շրջաններում, որոնք փորձում են վերակառուցել Պլեյստոցեն և Հոլոցեն ժամանակաշրջանների կլիմայական պայմանները, բուսականության զարգացումը և շրջակա միջավայրի պատմությունը: Ուսումնասիրություններ են իրականացվել Որոտան գետի հովտում գտնվող Միսիանի գոյացության դիատոմիտային լճային նստվածքների (թվագրված 1,4–0,9 մլն) և Հայաստանի հոլոցենի ժամանակաշրջանի երկրաբանական շերտերի (Աշոցքի խոռոչում գտնվող Ջարիշատի ճահիճ, տրավերտինային շերտ և այլն) վերաբերյալ: Գեոմորֆոլոգիական և թվագրման ուսումնասիրությունների հետ համատեղ անց է կացվել բույսերի և կենդանիների բրածոների պալինոլոգիական վերլուծություն: Նախնական արդյունքները ցույց են տալիս, որ պլեյստոցենի և հոլոցենի ժամանակաշրջանի կլիմայական պայմանները ժամանակի ընթացքում լայնորեն տատանվել են, ինչն իր հերթին ուժեղ ազդեցություն է թողել Հայաստանի տարածքի բնակավայրերի բնապահպանական միջավայրի վրա: (Bruch and Gabrielyan 2002; Joannin et al. 2011; 2013; Ollivier et al. 2011)

## 8. Ժայռապատկերների ուսումնասիրություններ

Վերջին տասնամյակը նշանավոր էր նաև Արագած լեռան հարավային լանջերի և Քասաղ գետի կիրճի վրա ժայռապատկերներով ապաստարանների հայտնաբերմամբ: Դրանք ավելացվել էին Արագած լեռան լանջերի և Սյունիքի լեռնաշխարհի (նախագիծը դեկավարեց Բ. Գասպարյանը և Ա. Խեչոյանը, ՀԱԻ, համագործակցելով ֆրանսիացի և բրիտանացի գործընկերների հետ) վրա առկա այլ ժայռապատկերային հուշարձանների համակարգավորված փաստաթղթման: Այս ժայռավետտի, ինչպես նաև մոտակա հուշարձանների ուսումնասիրություններում, գուգորդվելով մոտակա հուշարձանների հետ, այժմ թույլ են տալիս ավելի ճշգրիտ գնահատել այդ երևույթների ժամանակաշրջանը և մշակութային պատկանելիությունը: Հիմնվելով այս վերջին աշխատանքի վրա՝ որպես Հայաստանում ժայռավետտի (ներկայացված ժայռապատկերներով) ամենավաղ ապացույց հավանաբար կարելի է ընդունել վաղ հոլոցենի և Նեոլիթի ժամանակաշրջանների մշակույթներին: Այս նկարներից որոշները, ինչպես ամբողջ Հայաստանում հայտնաբերված փորագրանկարների մեծ մասը, հիմնվելով հարաբերական ժամանակագրության վրա, պետք է թվագրվեն Էնեոլիթի ժամանակաշրջանի ավարտից մինչև երկաթե դար, մ.թ.ա. 4–1-ին հազարամյակներ: Հետազոտությունները ցույց են տալիս, որ ժայռապատկերների երևույթը գոյատևել է հելլենիստական ժամանակաշրջանի միջով և նույնիսկ հասել միջնադար (Feruglio et al. 2005; Khechoyan et al. 2007).

## 9. Ապագա հետազոտություններ

Չնայած այս հոդվածը ընդգրկում է վերը նշված ձեռքբերումներից շատերը, միայն մեկ հոդված

պարզապես չի կարող անդրադառնալ այս ընթացիկ աշխատանքի բոլոր ասպեկտները: Կան, և հավանաբար միշտ կլինեն բազմաթիվ հետազոտական հարցեր, որոնք պահանջում են լրացուցիչ ուսումնասիրություններ: Դրանցից ամենահրատապան հարցերն են. Հայաստանի տարացքում սկզբնական բնակության վայրերը, Հայաստանում և հարավային Կովկասում Միջին պալեոլիթից անցումը Ուշ պալեոլիթ, Պլեյստոցենի վերջին փուլերում Էպիպալեոլիթի հուշարձանները, Վաղ հոլոցենի ընթացքում նեոլիթիզացման գործընթացը, Էնեոլիթյան ժամանակաշրջանի սկզբնական քայլերը և այլ շատ հարցեր:

## **Վերջաբան**

Նկարագրված բոլոր նախագծերը հնարավոր են եղել ի շնորհիվ ՀՀ Կառավարության (Հնագիտության և ազգագրության ինստիտուտ) ֆինանսավորման և օտարերկրյա աջակցության, որոնց թվում են Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարությունը, Ազգային աշխարհագրական կազմակերպությունը, Կոնեկտիկուտի համալսարանը (Նորյան հայագիտական ծրագրեր, Ազատ արվեստի և գիտությունների քոլեջ), Ազգային գիտական հիմնադրամը, Հումանիտար և հասարակական գիտությունների Իռլանդական հետազոտական խորհուրդը, Մեծ Բրիտանիայի Շրջակա միջավայրի հետազոտման խորհուրդը, Լիքի հիմնադրամը, Հայդելբերգի բնական և հումանիտար գիտությունների ակադեմիան, Volkswagen հիմնադրամը, Շտայնմեծ ընտանեկան հիմնադրամը, Chitjian հիմնադրամը, JSPS-KAKENHI (Օժանդակություն երիտասարդ գիտնականների համար [B]. Դրամաշնորհ No.19720207, 22720301), Եվրոպական համայնքի 7-րդ Շրջանակային ծրագրի շրջանակներում Մարի Կյուրի միջազգային կրթաթոշակը, մասնավոր հիմնադրամներ: Ամերիկյան կազմակերպություն Gfoeller հիմնադրամի աջակցությունը, որը 2001 թվականից համակարգված հովանավորել և կազմակերպել է հնագիտական գործունեություն Հայաստանում, շատ կարևոր է եղել ի կատար ածելու նկարագրված ծրագրերից շատերը:



Գծագիր \ Նկար

Figure 1– Նկար 1

Photos of excavations during the Soviet period (provided by B. Yeritsyan).—  
Սովետական շրջանի ընթացքում արված պեղումների լուսանկարներ  
(տրամադրող՝ Բ. Երիցյան):

1. Excavations of Yerevan-1 cave in 1969;
1. 1969 թ. Երևան-1 քարայրի պեղումներ:
2. First visit to the Lusakert-1 and 2 caves in 1968.
2. Առաջին այցելությունը Լուսակերտ-1 և 2 քարայրներ 1968 թ.-ին:

| Period                      | Sub-Period     | Phase  | Date                     | Cultural-Historical Entity (Tradition)    | Key sites   |   |
|-----------------------------|----------------|--------|--------------------------|---|---|---|
| Chalcolithic                | Late           | late   | 3,700 – 3,400 BC         | "Godetsov" tradition                      | Arteni-1 cave, Horizon I, Nerkin Godetsov settlements   |   |
|                             |                | middle | 4,000 – 3,700 BC         | "Arteni" tradition                        | Arteni-1 cave, Horizon II, Teghut settlement  |   |
|                             |                | early  | 4,300 – 4,000 BC         |   | Arteni-1 cave, Horizon III, Tsaghakavot-1 rock-shelter  |   |
|                             | Early – Middle |        | 5,200 – 4,300 BC         | "Aghabur" and "Sioni" traditions          | Azatsken, Horizon 0, Aknashen, Horizon I, Masis Shir, Upper Horizons, Aghabur, Artashat, Mtsakani-4 settlements |   |
| Neolithic                   | Late           |        | 6,000 – 5,200 BC         | "Arntashen-Shalavert-Shomutsqa" tradition | Azatsken, Aknashen, Masis Shir settlements  |   |
|                             | Early          |        | 7,500 – 6,000 BC         |   |   |   |
| Mesolithic (Early Holocene) |                |        | 10,000 – 7,500 BC        |   | Արագած-Ց-Կնու-2 cave, Kuchak-1 rock-shelter, Gegharn-1 open-air   |   |
| Paleolithic                 | Upper          | epi-   | 12,000 – 10,000 BC       |   | Արագած-Ց-Կնու-2 cave, Karkner open-air  |   |
|                             |                | late   | 23,000 BP – 12,000 BC    |   | Kalvan-1 open-air   |   |
|                             |                | middle | 31,000 – 23,000 BP       |   | Aghin-3 cave  |   |
|                             |                | early  | 40,000 – 31,000 BP       |   | Aghin-3 cave  |   |
|                             | Middle         | late   | 71,000 – 40,35,000 BP    |   | Yerevan-1,2, Lusaker-1,2, Anapghakot-1 caves, Borech-1,2, Kalvan-2 open air                                     |   |
|                             |                | middle | 128 000 – 71 000 BP      |   | Hovk-1 cave   |   |
|                             |                | early  | 300 270,000 – 128,000 BP |   | Bugramtshe-1, Aghavannu-1 open-air  |   |
|                             | Lower          |        |                          | 2,000,000 – 300 270,000 BP                | Oldovan (Pre-Acheulian), Acheulian  | open-air sites of the Arax, Simk and Lori Depressions, Nor Geghi-1 open-air |

Table 1– Աղյուսակ 1

Chronological chart of the Stone Age in Armenia with ages based on radiometric dating (After B. Gasparyan, M. Arimura, R. Badalyan, P. Avetisyan and A. Bobokhyan).

Հայաստանում Քարե դարի ժամանակագրական աղյուսակ, որտեղ դարերը հիմնված են ռադիոմետրիկ թվագրման վրա (Բ. Գասպարյանի, Մ. Արիմուրայի, Ռ. Բադալյանի, Պ. Ավետիսյանի և Ա. Բոբոխյանի անվ.):

Date—Թվական

Cultural-Historical Entity (Tradition)— Մշակութային պատմական կառույց (ավանդույթ)

Key sites—Կարևոր տեղանքներ

Chalcolithic—Էնեոլիթ

Neolithic—Նեոլիթ

Mesolithic (Early Holocene)—Մեզոլիթ (վաղ հոլոցեն)

Paleolithic—Պալեոլիթ

Late—Ուշ

Middle—Միջին

Early Middle—վաղ միջին

Early—վաղ

Epi- —Էպի-

Upper—Վերին

Middle—Միջին

Lower—Ստորին

BC—մ.թ.ա.



BP— (before present)—մինչ մեր օրերը

“Godedzor” tradition—«Գոդեձորի» մշակութային կառույցները  
Areni-1 cave, Horizon I, Nerkin Godedzor settlement—Արենի-1 քարայրը,  
Հորիզոն I, Ներքին Գոդեձորի հնավայր

“Areni” tradition—«Արենիի» մշակութային կառույցները  
Areni-1 cave, Horizon II, Teghut settlement—Արենի-1 քարայրը, Հորիզոն II,  
Թեղուտ հնավայր  
Areni-1 cave, Horizon III, Tsaghkahovit-1 rock-shelter— Արենի-1 քարայրը,  
Հորիզոն III, Ծաղկահովիտ-1 քարանձավ

“Adablur” and “Sioni” traditions—«Աղաբլուր» և «Սիոնի» մշակութային  
կառույցները  
Aratashen, Horizon 0, Aknashen, Horizon I, Masis Blur, Upper Horizons,  
Adablur, Artashat, Mushakan-4 settlements—Առաստաշեն, Հորիզոն 0,  
Ակնաշեն, Հորիզոն I, Մասիս բլուր, Վերին Հորիզոններ, Աղաբլուր,  
Մուշական-4 հնավայրեր

“Aratashen-Shulaveri- Shomutepe” tradition—«Առաստաշեն—Շուլավերի—  
Շոմուտեպի» մշակութային կառույցները  
Aratashen,—Առաստաշեն  
Aknashen—Ակնաշեն  
Masis Blur settlements—Մասիսի բլուրի հնավայրեր

Arnagyugh-8/Kmlo-2 cave, Kuchak-1 rock-shelter, Gegharot-1 open-air—  
Ափնագյուղ-8 կմ/ Կմլո-2 քարայր, Քուչակ-1, քարանձավ, Գեղարոտ-1,  
բացօթյա տեղանք

Kalavan-1 open-air—Կալավան-1, բացօթյա տեղանք  
Aghitu-3 cave—Աղիտու-3 քարայր

Yerevan-1,2, Lusakert-1,2, Angeghakot-1 caves Barozh-12, Kalavan-2 open  
air—Երևան-1, 2, Լուսակերտ-1, 2, Անգեղակոթ-1 քարայրներ, Բարոձ-12,  
Կալավան-2 բացօթյա տեղանք

Hovk-1 cave—Հովք-1 քարայր

Bagratashen-1, Aghavnatun-1 open-air—Բագրատաշեն-1, Աղավնատուն-1  
բացօթյա տեղանք

Oldowan (Pre-Achulian), Acheulian—Օլդովան (մինչ Աշելյան), Աշելյան  
open-air sites of the Ararat, Shirak and Lori Depressions, Nor Geghi-1 open-  
air,—բացօթյա տեղանքներ Արարատի, Շիրակի և Լոռիի խոռոչոց, Նոր  
գեղի-1 բացօթյա տեղանք



Figure 2– Նկար 2

Map of Armenia showing location of sites mentioned in the publication.

Հայաստանի քարտեզը, որը ցույց է տալիս հոդվածի մեջ նշված տեղանքների գտնվելու վայրերը:

Legend—Բացատրագիր

Open-air site—բացօթյա տեղանք

Settlement—հնավայր

Rock painting—ժայռանկարչություն

Burial—դանբարան

Obsidian source—վանակատի աղբյուր

Flint source—կայծքարի աղբյուր

Lower Paleolithic—Ստորին Պալեոլիթ

Middle Paleolithic—Միջին Պալեոլիթ

Upper Paleolithic—Վերին Պալեոլիթ

Early Holocene and Neolithic—Վաղ Հոլոցեն և Նեոլիթ

Chalcolithic—Էնեոլիթ

Populated places—Բնակեցված վայրեր

Lakes and Reservoirs—Լճեր և ջրամբարներ

Rivers—Գետեր

Mountains—Լեռներ

Terms

Occupation-հուշարձան

Depression-խոռոչ

Settlement-հնավայր, բնակավայր

High altitude-բացարձակ բարձրություն

Rock shelter-քարանձավ

Lithic assemblage—լիթիկական հավաքույթները

Canyon-կիրճ

Terrace-դարավանդ

Plateau -սարավանդ

Obsidian-վանակատ

Artifact-գտածո, նմուշ

Ores-հանքանյութ

Metalworking-մետաղամշակում

հնամիջավայրային

Tradition—մշակութային կառույց

Cave—քարայր

Perforation—հորատում

Implement—գործիք

Chalcolithic—էնեոլիթ

Perishable—անցավոր

## Օգտագործված գրականություն

- Adler, D.S., Yeritsyan, B., Wilkinson, K., Pinhasi, R., Bar-Oz, G., Nahapetyan, S., Mallol, C., Berna, F., Bailey, R., Schmidt, B.A., Glauberman, P., Wales, N. and Gasparyan, B. (2012) The Hrazdan Gorge Palaeolithic project, 2008-2009. In: Avetisyan, P. and Bobokhyan, A. (eds.), *Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan*. Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Publishing House, pp. 21-37.
- Areshian, G.E., Gasparyan, B., Avetisyan, P.S., Pinhasi, R., Wilkinson, K., Smith, A., Hovsepyan, R. and Zardaryan, D. (2012) The Chalcolithic of the Near East and south-eastern Europe: discoveries and new perspectives from the cave complex Areni-1, Armenia. *Antiquity* 86, pp. 115-130.
- Arimura, M., Gasparyan, B. and Chataigner, C. (2012) Prehistoric sites in Northwest Armenia: Kmlo-2 and Tsaghkahovit. In: Matthews, R. and Curtis, J. (eds.), *Proceedings of the 7th International Congress of the Archaeology of the Ancient Near East, 12 April - 16 April 2010, The British Museum and UCL, London, Volume 3: Fieldwork and Recent Research Posters*. Wiesbaden: Harrassowitz Verlag, pp. 135-149.
- Arimura, M., Badalyan, R., Gasparyan, B. and Chataigner, C. (2010) Current Neolithic Research in Armenia. *Neo-Lithics* 1/2010, pp. 77-85.
- Arimura, M., Chataigner, C. and Gasparyan, B. (2009) Kmlo-2, An Early Holocene Site in Armenia. *Neo-Lithics* 2/2009, pp. 17-19.
- Avetisyan, P. and Bobokhyan, A. (2012) *Archaeology of Armenia in Regional Context: Achievements and Perspectives*. In: Avetisyan, P. and Bobokhyan, A. (eds.), *Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan*. Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Publishing House, pp. 7-20.
- Avetisyan, P., Chataigner, C. and Palumbi, J. (2006) The results of the excavations in Nerkin Godedzor (2005-2006). Preliminary report. *Aramazd* 1, pp. 6-18, 263-264, 282-283.
- Badalian, R., Bigazzi, G., Cauvin, M.-C., Chataigner, C., Jrbashyan, R., Karapetyan, S.G., Oddone, M. and Poidevin, J.-L. (2001) An international research project on Armenian archaeological sites: fission-track dating of obsidians. *Radiation Measurements* 34, pp. 373-378.
- Badalyan, R.S. (2010) Obsidian in the Southern Caucasus: The use of the raw-materials in the Neolithic to Early Iron Age. In: Hansen, S., Hauptmann, A., Motzenbäcker, I. and Pernicka, E. (eds.), *Von Maikop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4.-2. Jt. v. Chr. Beiträge des Internationalen Symposiums in Berlin vom 1.-3. Juni 2006*. Bonn: Habelt Verlag, pp. 27-38.
- Badalyan, R., Chataigner, C. and Kohl, Ph. (2004a) Trans-Caucasian obsidian: The exploitation of the sources and their distribution. In: Sagona, A. (ed.), *A view from the Highlands. Archaeological studies in honor of Charles Burney*. *Ancient Near Eastern Studies Supplement* 12. Herent: Peters, pp. 437-465.
- Badalyan, R.S., Harutyunyan, A.A., Chataigner C., Le Mort, F., Chabot, J., Elie Brochier, J., Balasescu, A., Radu, V. and Hovsepyan, R. (2010) The settlement of Akashen-Khatunarkh, A Neolithic site in the Ararat Plain (Armenia): Excavation results 2004-2009. *TÜBA-AR* 13, pp. 185-218.
- Badalyan, R., Lombard, P., Avetisyan, P. and Chataigner, C. (2004b) The Neolithic and Chalcolithic phases in the Ararat Plain (Armenia): The view from Aratashen. In: Sagona, A. (ed.), *A view from the Highlands. Archaeological studies in honor of Charles Burney*. *Ancient Near Eastern Studies, Supplement* 12. Herent: Peters, pp. 399-420.
- Badalyan, R., Lombard, P., Avetisyan, P., Chataigner, C., Chabot, J., Emmanuelle, V., Hovsepyan, R., Willcox, G. and Pessin, H. (2007) New data on the late prehistory of the southern Caucasus. The excavations of Aratashen (Armenia): Preliminary report. In: Lyonnet, B. (ed.), *Les Cultures du Caucase (VIe-IIIe millénaires avant notre ère). Leurs relations avec le Proche-Orient*. Paris: CNRS Editions, pp. 37-61.

- Barnard, H., Dooley, A.N., Areshian, G., Gasparyan, B. and Faull, K.F. (2011) Chemical evidence for wine production around 4000 BCE in the Late Chalcolithic Near Eastern highlands. *Journal of Archaeological Science* 38, pp. 377-384.
- Bar-Oz, G., Weissbrod, L., Gasparyan, B., Nahapetyan, S., Wilkinson, K. and Pinhasi, R. (2012) Taphonomy and zooarchaeology of a high-altitude Upper Pleistocene faunal sequence from Hovk-1 Cave, Armenia. *Journal of Archaeological Science* 39, pp. 2452-2463.
- Blackman, J., Badaljan, R., Kikodze, Z. and Kohl, Ph. (1998) Chemical characterization of Caucasian obsidian geological sources. In: Cauvin, M.-C., Gourgaud, A., Gratuze, B., Arnaud, N., Poupeau, G., Poidevin, J.-L. and Chataigner, C. (eds.), *L'Obsidienne au Proche et Moyen Orient. Du volcan à l'outil*. BAR International Series 738. Oxford, pp. 205-231.
- Bruch, A.A. and Gabrielyan, I.G. (2002) Quantitative data on the Neogene climatic development in Armenia and Nakhichevan. *Acta Universitatis Carolinae - Geologica* 46 (4), pp. 41-48.
- Chabot, J., Badalyan, R. and Chataigner, C. (2009) A Neolithic obsidian industry in the Southern Caucasus region: origins, technology and traceology. In: Moreau, J.-F., Auger, R., Chabot, J. and Herzog, A. (eds.), *Proceedings of the 36th Symposium on Archaeometry*. Quebec: CELAT, pp. 151-160.
- Chataigner, C., Avetisyan, P., Palumbi, J. and Uerpman, H.-P. (2010) Godedzor, A late Ubaid-related settlement in the Southern Caucasus. In: Carter, R.A. and Philip, G. (eds.), *Beyond the Ubaid. Transformation and integration in the late prehistoric societies of the Middle East*. Studies in Ancient Oriental Civilization, Volume 63. Chicago-Illinois: The University of Chicago Press, pp. 391-409.
- Chataigner, C., Badalian, R., Bigazzi, G., Cauvin, M.-C., Jrbashian, R., Karapetyan, S.G., Norelli, P., Oddone, M. and Poidevin, J.-L. (2003) Provenance studies of obsidian artefacts from Armenian archaeological sites using the fission-track dating method. *Journal of Non-Crystalline Solids* 323, pp. 167-171.
- Chataigner, C. and Barge, O. (2010) GIS (Geographic Information System) and obsidian procurement analysis: pathway modelisation in space and time. In: Hansen, S., Hauptmann, A., Motzenbäcker, I. and Pernicka, E. (eds.), *Von Maikop bis Trialeti. Gewinnung und Verbreitung von Metallen und Obsidian in Kaukasien im 4.-2. Jt. v. Chr. Beiträge des Internationalen Symposiums in Berlin vom 1.-3. Juni 2006*. Bonn: Habelt Verlag, pp. 1-14.
- Chataigner, C., Gasparyan, B., Montoya, C., Arimura, M., Melikyan, V., Liagre, J., Petrosyan, A., Ghukasyan, R., Colonge, D., Fourloubey, K., Arakelyan, D., Astruc, L., Nahapetyan, S., Hovsepyan, R., Balasescu, A., Tome, K., and Radu, V. (2012) From the Late Upper Palaeolithic to Neolithic in North-Western Armenia: Preliminary results. In: Avetisyan, P. and Bobokhyan, A. (eds.), *Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan*. Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Publishing House, pp. 52-63.
- Chataigner, C. and Gratuze, B. (2013a) New data of the exploitation of obsidian in the Southern Caucasus (Armenia, Georgia) and Eastern Turkey, Part 1: Source characterization. *Archaeometry*, pp. 1-23 (doi: 10.1111/ arcm. 12006).
- Chataigner, C. and Gratuze, B. (2013b) New data of the exploitation of obsidian in the Southern Caucasus (Armenia, Georgia) and Eastern Turkey, Part 2: Obsidian procurement from the Upper Palaeolithic to the Late Bronze Age. *Archaeometry*, pp. 1-22 (doi: 10.1111/arcm. 12007).
- Cherry, J.F., Faro, E.Z. and Minch, L. (2008) Field exploration and instrumental neutron activation analyses of the obsidian sources in Southern Armenia. *IAOS (International Association for Obsidian Studies) Bulletin No. 39, Summer*, pp. 3-6.
- Cherry, J.F., Faro, E.Z. and Minch, L. (2010) Field survey and geochemical characterization of the Southern Armenian obsidian sources. *Journal of Field Archaeology* 35/2, pp. 147-163.
- Courcier, A. (2014) Ancient Metallurgy in the Caucasus from the Sixth to the Third Millennium BCE. In: Roberts, B.W. and Thornton, C.P. (eds.), *Archaeometallurgy in Global Perspective*. New York: Springer Science+ Buiseness Media, pp. 579-664.
- Courcier, A., Kuparadze, D. and Pataridze, D. (2008) Archaeometallurgical Researches on the Early Beginnings of Metallurgy (VI-III Millennia BC) in the Caucasus: An Example of Interdisciplinary Studies. *Metalla (Bochum)* 15/1, pp. 35-50.

## Հայաստանի Հանրապետության Վաղ հոլոցենի վայրեր.

### Մշակութային բաշխում և ժամանակագրության վերաբերյալ հարցեր

Արթուր Պետրոսյան, Մակոտո Արիմուրա, Բորիս Գասպարյան,  
Սամվել Նահապետյան և Քրիստին Շաթեներ

#### 1. Նախաբան

Մինչ վերջերս Հայաստանում գտնված ամենավաղ ֆերմերային համայնքները թվագրվում էին մ.թ.ա. 6-րդ հազարամյակի սկզբին: Այնուամենայնիվ, այս տեղանքները վերագրվում են Ուշ նեոլիթին և ցուցադրում են մեզ սննդամթերքի արտադրության կայացած տնտեսություններ (Badalyan et al. 2007; Arimura et al. 2010): Այսպիսով, Հայաստանի տարածքի և ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանի հնագիտական հիմնական խնդիրներից մեկն է նեոլիթիզացման գործընթացի վերակառուցումը: Սակայն, ցավոք, այդպիսի վերակառուցման համար անհրաժեշտ Ուշ Պլեյստոցենին / Վաղ Հոլոցենին թվագրվող հնագիտական տեղանքները շատ քիչ էին ներկայացված: Բարեբախտաբար, վերջին տասնամյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են երկրում առաջին ուշ շրջանի պլեյստոցենի և վաղ շրջանի հոլոցենի տեղանքներ: 19-րդ դարի վերջին կատարված զարգացումների վրա հիմնված այս նոր հայտնագործությունները նոր տեսանկյուններ են բացում Նեոլիթի ժամանակաշրջանի մասին: Ընդհանուր առմամբ, Հայաստանի Նեոլիթի վերաբերյալ ուսումնասիրությունների պատմությունը կարելի է բաժանել երեք փուլերի:

**Առաջին փուլը (20-րդ դարի սկիզբ - 1960 թ.)** բնութագրվում է մակերևույթի հավաքածուներով, գտածոների սահմանմամբ և Եվրոպական միջազգային Քարե դարի շրջանաբաժանական սխեմաների հիման վրա կատարված ժամանակագրական տեղադրման շրջանով (Ժ. դե Մորգան, Ա. Պոտապով, Յ. Բայբության, Ս. Չամյատնին, Մ. Պանիչկինա, Մ. Սարդարյան):

**Երկրորդ փուլը (1960–2000)** հիմնված է նեոլիթյան ժամանակաշրջանի կոնկրետ հնագիտական տեղանքների հայտնաբերման և հետազոտության վրա: Դրանց թվում են Ակնաշեն-Խաթունարխ (Ռ. Թորոսյան) և Մասիս Բլուր (Գ.Ե. Արեշյան) հնավայրերը Արարատյան դաշտում և Հատիս-10 բացօթյա տեղանքը, որը մեծ արհեստանոց է Կոտայքի սարավանդում առկա վանակատի գոյացությունների մոտակայքում (Ն. Ղազարյան): Հետազոտության այս փուլում ներառված էր Նեոլիթյան շերտի նյութերի ուսումնասիրությունը և դրանց տեղական բնութագրիչների և ժամանակագրական դիրքի սահմանումը՝ համեմատած հարավային Կովկասի և Մերձավոր Արևելքի նմանատիպ տեղանքների հետ:

**Երրորդ փուլը (2000–2014)** նշանակալի է Նեոլիթի տեղանքների թիրախավորված և համակարգված հետազոտություններով, որոնք իրականացվում են տեղացի և օտարերկրյա մասնագետների կայացած ցանցի կողմից, և ամենակարևորը՝ պեդոմային և վերլուծական ժամանակակից մեթոդների կիրառմամբ: Այս փուլում է, որ Հայաստանի ամբողջ տարածքում հայտնաբերվեցին Վաղ հոլոցենի մի քանի տեղանքներ (Բ. Գասպարյան): Չուգահեռաբար նոր և նշանակալի արդյունքների հասանք Արարատյան դաշտի Ուշ նեոլիթյան երեք բնակավայրեր՝

Արատաշենը, Ակնաշեն-Խաթունարխը (Ռ. Բաղայան) և Մասիս Բլուրը (Պ. Ավետիսյան և Գ.Ե. Արեշյան) վերապեղելիս:

Վաղ հողոցների տեղանքներն առաջին անգամ հայտնաբերվել են Ապարանի խոռոչում՝ հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի (ղեկավարներ՝ Բ. Գասպարյան, ՀՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, և Ք. Շաքեներ, Maison de l'Orient et de la Méditerranée, Լիոն) ուսումնասիրությունների արդյունքում, ինչը նախորդ աշխատանքներից գտնված նման նյութերի պակասի պատճառով, մեծ թվով տեղեկություններ հաղորդեց այս ժամանակաշրջանի վերաբերյալ: Չնայած վերջին տարիներին Հայաստանի այլ մարզերում հայտնաբերվել են Վաղ հողոցների այլ տեղանքներ (Արարատի, Շիրակի և Լոռու խոռոչներ, Աղստև գետի հովիտ և այլն), հենց Ապարանի խոռոչի սահմաններում առկա տեղանքներն են, որ ցույց են տալիս կայուն մշակութային երևույթ մեկ գեոմորֆոլոգիական միավորի շրջանակներում: Ուստի հենց այդ տեղանքներն են կազմում մեր քննարկման կմախքը:

## 2. Ափնագյուղ-8/Կնդո-2 քարայր

Ափնագյուղ-8/Կնդո-2-ը տեղակայված է Արագածի լեռնագանգվածի արևելյան կողմում՝ Քասաղ գետի հովտի միջին հոսքում գտնվող փոքր վտակի հետ միացման կետում: Բազալտային լավայի հոսքում բացված քարայրի բացարձակ բարձրությունը կազմում է ծովի մակարդակից մոտ 1700 մ: Ներքին Էրոզիայի պատճառով քարայրի մեծ մասը ենթարկվել է դեգրադացիայի, չնայած, հավանաբար, երկրաշարժերն էին պատասխանատու մուտքի վերջնական փլուզման համար (Նկար 1): Տեղանքը հայտնաբերվել է 2002 թ.-ին հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից Քասաղ գետի հովտում համակարգված ուսումնասիրության ընթացքում: Փորձնական խրամատի շնորհիվ պարզվեց, որ քարայրում առկա էին վանակատի նմուշներ և կենդանական մնացորդները: Պեղումները սկսվել են 2003 թ.-ին, և դաշտային հաշորդ չորս սեզոններին պեղվել է մոտ 10 մ<sup>2</sup> (Նկար 2):

Քամուց առաջացած Էոլյան նստվածքները գոյացել են ժայռային գանգվածի վրա: Վերին շերտ 1-ը, որը գտնվում է ենթահորիզոնական դիրքում և համապատասխանում է միջնադարյան շրջանին, ցավոք, մեծապես խաթարել է հնագիտական հարուստ հիմքում ընկած նախնադարյան 2-5 շերտերի վերին հատվածը (Նկար 2): Այս շերտերում կան կոշտացած հատակի գնդեր, որոնք լի են վանակատի նմուշներով և կենդանական մնացորդներով, ինչը, հավանաբար, քարայրում առկա օրիգինալ տեղում մնացած նախնադարյան մշակույթի միակ վկայությունն է:

Բացառությամբ տնային ոչխարների՝ բուսական և կենդանական մնացորդները պատկանում են բացառապես վայրի տեսակներին: Սակայն կարևոր է նշել, որ մի քանի ոչխարի ոսկորների շերտագրական դիրքը նույն է, քանի որ երկրաշարժի հետևանքով մուտքի փլուզումը կարող էր պատճառ հանդիսանալ, որ որոշ նյութեր սողոսկեին ներքև քարերի միջով և վերջնականորեն կանգ առնեին ավելի քան 1 մ խորության վրա: Հետևաբար, նախնադարյան շերտերի գտածոները հնարավոր է իրար հետ խառնված և տեղահանված լինեն:

Տարբեր շերտերից վերցված C14 տարեթվերը կարող են խմբավորվել չորս ժամանակային փուլերի (Աղյուսակ 1): Առաջին խումբը ներառում է մ.թ.ա. մոտ 12–ից 10-րդ հազարամյակներ, երկրորդը՝

մ.թ.ա. մոտ 10-ից 8-րդ հազարամյակներ, երրորդը՝ մ.թ.ա. մոտ 6-ից 5-րդ հազարամյակներ, և, վերջապես, վերջինը՝ միջնադարյան ժամանակաշրջանը:

Լիթիկական արդյունաբերությունը հաստատում է այս բաժանումը մշակութային երեք վաղ փուլերի:

1. Միկրոլիթների ամենահաճախ հանդիպող տեսակներն են հենակով փոքր շեղբերը (backed bladelets) և անհավասարակողմ եռանկյունի (ուղիղ-հենված և անուղղակիորեն կարճացված) փոքր շեղբերը, որոնք նման են Կալավան-1-ի Ուշ վերին պալեոլիթի մշակութային կառույցին և Վրաստանի մ.թ.ա. 10-ից 9-րդ հազարամյակի Մեգոլիթ տեղանքներին, օրինակ՝ Կոտիաս Կոլեինը (Meshvelianiet al. 2007; Montoya et al. 2013),

2. Այսպես կոչված «Կմլո գործիքները», որոնք սահմանվում են որպես շերտավոր (լամելարային) գուգահեռ ռետուշ ունեցող գործիքներ՝ ստեղծված ճնշման միջոցով շերտավորմամբ, ինչը կտրուկ անկյունավորված եզր է կազմում՝ ատամնանման ուրվագծով: Ռետուշի դիրքը լինում է ինչպես վերին, այնպես էլ ստորին մակերևույթի վրա: Ռետուշը հաճախ ավարտվում է սայրին մոտ, որն ունի կարթի կամ երկու ընդգծված եզրերի տեսք (Նկար 3): Նմանատիպ գործիքներ հայտնաբերվել են և՛ Մերձավոր Արևելքի, և՛ հյուսիսարևմտյան Կովկասի նախախեցեղենային Նեոլիթի (մ.թ.ա. 8-7-րդ հազարամյակներ) տեղանքներից: Այս գործիքները առկա են եղել մ.թ.ա. 9-րդ հազարամյակի առնվազն առաջին կեսից նաև Ափնագյուղ-8/Կմլո-2 քարայրում (Նկար 3):

3. Լայն նետածայրերը բնորոշ են շատ մեծ տարածաշրջանի Ուշ նեոլիթին և Էնեոլիթին, քանի որ դրանք հայտնվել են Մերձավոր Արևելքում մ.թ.ա. 7-րդ հազարամյակի վերջին (Մաբի Աբյադ, Միրիա), ապա տարածվել են Մերձավոր Արևելքի հյուսիսային մասում և տարածվել դեպի հարավային Եվրոպա (Copeland and Akkermans 1994; Wechler 2001): Հայաստանում մեծ թվով լայն նետածայրեր են հայտնաբերվել մ.թ.ա. 5-րդ հազարամյակի վերջին թվագրվող տեղանքում (Օաղկահովիտ-1 քարանձավ), որը գտնվում է Ափնագյուղ-8/Կմլո-2-ից ոչ հեռու, Արագած լեռան հյուսիսային կողմում (Arimura et al. 2012):

Անկախ մշակութային փուլից, Ափնագյուղ-8/Կմլո-2-ի բոլոր լիթիկական նմուշները ունեն որոշ նման հատկություններ՝

ա) Որպես հումք հիմնականում օգտագործվում է վանակատ: Ավելի քան 6000 բեկորներ վանակատից են, այլ հումքերը, ինչպիսիք են կայծքարը և դացիտը, բավականին քիչ են:

բ) Միջուկները հիմնականում փոքր են: Միջուկի կարճեցման գլխավոր միջոցը հիմնված էր սեկ ուղղությամբ ուղիղ հարվածներով ձևափոխելու վրա:

գ) Գերակշռում է միկրոլիթային բաղադրիչը: Կան նաև որոշ խոշոր շեղբեր, որոնք ունեն ավելի քան 2 սմ լայնություն և 10 սմ երկարություն, բայց շատ հազվադեպ:

Ափնագյուղ-8/Կմլո-2 տեղանքը ցույց է տալիս Արագած լեռնազանգվածի տարածաշրջանում չոլոցենի սկզբում մարդկային խմբերի առկայությունը: Քարայրի և միկրոլիթիկական մշակույթին

պատկանող գործիքներով, Ափնագյուղ-8 / Կմլո-2-ում ներկայացված մշակույթը կարող է կապված լինել Միջին քարե դարի հետ: Բայց գտածոների որոշակի դասակարգ («Կմլո գործիքներ») կտրուկ և կանոնավոր ճնշումային ռետուշով հիշեցնում է ինչպես «Չատոնու գործիքները», որոնք առկա էին հյուսիսային Միջագետքում մ.թ.ա. 8-րդ և 7-րդ հազարամյակների միջև, այնպես էլ «Պալուրի-Նագուսնի» մշակույթի «Կարթանման գործիքները», որոնք առաջացել են Մեծ Կովկասի հարավարևմտյան կողմում, իսկ հետագա ժամանակաշրջաններում՝ Վրաստանի հարավի բարձր սարավանդներում (Grigolia 1977; Caneva et al. 1998): Կմլո-2-ի և այս մշակույթների միջև կապը կլինի հետագա ուսումնասիրությունների առարկա:

Հետագա հետազոտությունները հատկապես պետք է կենտրոնացվեն Վաղ հոլոցենի տեղանքների վրա, ինչը հնարավորություն կտա ավելի լավ հասկանալ այս ժամանակաշրջանում Հայաստանի տարածքում մարդու բնակության, ինչպես նաև հարավային Կովկասում բուսական և կենդանական աշխարհի ընտելացման գործընթացը (Chataigner et al. 2012, p. 57):

### 3. Քուչակ-1 քարանձավ

Քուչակ-1 քարանձավը գտնվում է համանուն գյուղի հյուսիս-արևմուտքում՝ Ապարանի ջրամբարի հյուսիսային ափին՝ ծովի մակարդակից մոտ 1855 մ բարձրության վրա: Այն փոքր բնական խորշ է (12 × 6 × 2 մ), որը ձևավորվել էր Արագած լեռան արևմտյան եզրին: Քուչակ-1 քարանձավը ընկած է Քասաղ գետի և նրա վտակների հատման կետում՝ Վերին պլեյստոցենի անդեզիտային հոսքի վրա: Հնարավոր է, որ նախքան մուտքի փլուզումը այդտեղ քարայր է եղել (Նկար 4):

Տեղանքը հայտնաբերվել և ուսումնասիրվել է 2004 թ.-ին հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից: Այստեղ համակարգված պեղումներ սկսվել են 2007 թվականից: 2007-2010 թթ. սեզոնների ընթացքում Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար՝ Բ.

Գասպարյան) պեղել է ապաստարանի տակ և քարանձավի դիմաց առկա լանջին գտնվող մոտ 60 մ<sup>2</sup> տարածք: Փորձական խրամատներ նույնպես տեղադրվել էին ուղիղ տեղանքի միջով անցնող ժամանակակից ճանապարհի հակառակ կողմում՝ տարածքի սահմանները գծելու համար (Նկար 5):

Բացահայտվել են երկրաբանական հորիզոնների կամ շերտերի հետևյալ շերտագրությունը (վերևից ներքև, Նկար 6)՝

Շերտ 1: Ժամանակակից հողը: Ընդհանուր միջին հաստությունը 0,35 մ է, որը բաժանված է երեք հորիզոնի:

1ա) Մոխրագույնոտ շագանակագույն (10YR 5/2) հումուս՝ սահմանափակ ենթանկյունային բեկորներով (ժամանակակից հողի առաջին հորիզոն, 0,20 մ):

1բ) Շատ մուգ շագանակագույն (10YR 3/2) հումուս՝ ենթանկյունային բեկորներով (ժամանակակից հողի երկրորդ հորիզոն, 0,10 մ)

1գ) Մուգ մոխրագույնոտ շագանակագույն (10YR 4/2) հումուս՝ ենթանկյունային բեկորներով, մոխրով և փայտածուխով (ժամանակակից հողի երրորդ հորիզոն, 0,06 մ):



Շերտ 2: Հումուսի երկրորդ շերտը: Ընդհանուր միջին հաստությունը 0,20 մ է, որը բաժանվում է՝

2ա) Մոխրագույնոտ շագանակագույն (10YR 5/2) հումուս՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ և մեծ քարեր (pedogenesis=հողագոյացում), 0,08 մ;

(pit), 0.07 m;

2բ) Մոխրագույնոտ շագանակագույն (10YR 5/2) հումուս՝ ենթանկյունային բեկորներով և մեծ քարերով՝ ներառյալ սահմանափակ այլովիալ գետաքարերն ու մանր ավազը (փոս), 0,07 մ:

2գ) Մոխրագույնոտ շագանակագույն (10YR 5/2) հումուս՝ ենթանկյունային բեկորներով՝ ներառյալ սահմանափակ այլովիալ գետաքարերն ու մանր ավազը (բիոտուրբացիայի փոս), 0,05 մ:

Շերտ 3: Շագանակագույն (10YR 4/3) ավազակավ՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ, այլովիալ գետաքարեր և փոքր ավազ (գետային և էոյան ողողատներ, 0,25 մ)

Շերտ 4: Շագանակագույն (10YR 4/3) հումուս և ավազակավ՝ ներառյալ սահմանափակ ենթանկյունային բեկորներ (պալեոսոլ, 0,20 մ):

Շերտ 5: Անդեզիտադացիտային հիմնաքար

Պեղված տարածքներում ողողատների ընդհանուր հաստությունը 0.20–1.01 մ-ի սահմաններում է: Նստվածքների ամբողջական հաջորդականությունը գոյություն ունի պեդումների միայն մի քանի հատվածներում (Նկար 6 և 7՝ 2), քանի որ հիմնաքարը, որն անցնում է պեղված տարածքների մեծ մասի մոտով, գտնվում է մակերևույթի մոտակայքում: Շերտ 1-ի ձևավորումը հավանաբար տեղի է ունեցել Ուշ հոլոցենում, մինչդեռ շերտ 2-ը հավանաբար առաջացել է Վաղ հոլոցենի ժամանակաշրջանում: Շերտ 3-ը, ամենայն հավանականությամբ, պատկանում է Ուշ Դրիասին և նշում է Ապարանի խոռոչի Պլեյստոցենի ու Հոլոցենի ժամանակաշրջանների միջև սահմանը: Այն ձևավորվել է կլիմայական նկատելի տեղաշարժերի (չոր և սառից դեպի տաք և խոնավ) և տեղական հնամիջավայրի արագ փոփոխության պայմաններում: Շերտ 4-ի ձևավորումը համարվում է Ուշ Պլեյստոցենը, ինչը հաստատվում է ուշ Միջին պալեոլիթային նմուշների առկայությամբ: Այստեղ կատարված պեդումները արձանագրել են տարբեր ժամանակաշրջանների մշակութային մնացորդների նկատելի խտություն:

Վաղ Հոլոցենի մշակութային մնացորդների մեծ մասը գտնվում են 2-րդ և 3-րդ շերտերից: Շերտ 1-ը, բացի աղբից և վերջին ժամանակների գործունեության այլ ցուցանիշներից, պարունակում է խեցեղենի բազմաթիվ բեկորներ Միջնադարյան ժամանակաշրջանից (մ.թ. 4-րդ - 13-րդ դարեր) և Ուշ բրոնզե դարից (մ.թ.ա. 15/14-րդ - 13-րդ դարեր): Դժբախտաբար Միջնադարի և Բրոնզե դարի շերտերը խախտել են Վաղ հոլոցենի մշակութային մնացորդների օրիգինալ շերտերի մեծ մասը: Վաղ Հոլոցենի բնակչությունները նույնպես պատասխանատվություն են կրում ավելի վաղ հուշարձանները խաթարելու համար, քանի որ փոսերը և այլ շինությունները անցել էին Շերտ 4-ում առկա Միջին պալեոլիթի մշակութային մնացորդներ: Ապաստանի դիմաց հայտնաբերված քարե շինությունը շատ

վատ է պահպանված և մեծապես վնասված է վերջերս կատարված գործունեության արդյունքում: Մակայն, սա դեռ Հայաստանում գրանցված ամենավաղ նման երևույթն է, որը ցույց է տալիս, որ քարանձավների դինաց առկա արհեստական կառույցները թվագրվում են առնվազն Վաղ հոլոցենին (Նկար 7՝ 1): Ամփոփելով՝ մշակութային մնացորդների շերտագրական դիրքը համեմատաբար հասկանալի է և դրանց բաշխումը համապատասխան է տեղանքի երկրաբանական շերտագրության հետ:

Լիթիքային արդյունաբերությունը, որը ներկայացված է ավելի քան 3000 քարե գործիքներով, սկիզբ է առնում գլխավորապես շերտեր 2ա-ից 4-ը, և Վաղ հոլոցենի ու Միջին պալեոլիթի բնակչությունների գործունեության արդյունք է: Իրերը պատրաստվում են հիմնականում վանակատից: Հումքի այլ տեսակներից (բազալտ, անդեզիտ, դացիտ, կրաքար և այլն) պատրաստված գործիքները հազվադեպ են և ներկայացված են բնական խճաքարերով ու սալիկներով, որոնք օգտագործվում էին հիմնականում որպես քարե մուրճեր և ռետուշի գործիքներ: Գտածոների մեջ կան նաև սիդերիտի ուլունքների երկու օրինակ և բազալտային անդեզիտից «ձող ուղղեցնող գործիքի» բեկոր: Վաղ Հոլոցեն ժամանակաշրջանի վանակատից գործիքները ներկայացնում են մեկ արդյունաբերության ոլորտ: Միջուկները ստանում են տարբեր չափերի վանակատի գետաքարերից, որոնք Օադկունյաց աղբյուրներից ափ էին հասնում Քասաղ գետով: Միջուկների դասակարգերն են՝ մեկ միակողմանի հարթակային, միակողմանի երկհարթակային և սկավառականման, ինչպես նաև պրոտոպրիզմատիկ և պրիզմատիկ, որոնք համապատասխանում են հարվածներով ձևափոխված գործիքներին (մեծ և զանգվածային բեկորներ և շեղբեր, տարբեր տեսքի փոքր և բարակ շեղբիկներ) և դրանց հիման վրա ստեղծված գործիքներին: Գործիքների մեջ առկա են ռետուշացված բեկորներ և շեղբեր, քերիչներ, բնական հենակներով դանակներ, բուրիաններ, խազված և ատամնավոր գործիքներ, հարպուններ, անհամաչափ և հասարակ ծայրեր, նետածայրեր, երկրաչափական միկրոլիթներ և հենակներով շեղբեր: Առավել նշանակալից են վերոհիշյալ «Կմլո գործիքները»: Դրանք արտադրվել են հաստ և երկար բեկորների վրա՝ ճնշումային տեխնոլոգիայով նմուշի ստորին կողմի վրա կտրուկ շերտավոր ռետուշի կիրառմամբ (Նկար 8): Այլ օրինակներ լավ հայտնի են Ապարանի խոռոչի նմանատիպ տեղանքներից և Հայաստանի այլ տարածքներից (Chataigner et al. 2007, pp. 31-32; Arimura et al. 2009; 2010, pp. 77-80): Հետաքրքիր է նշել, որ Քուչակի հավաքածուում առկա են գործիքների այլ դասակարգեր՝ հիմնականում նետածայրեր, որոնք նույնպես ձև են ստանում կտրուկ շերտավոր ճնշումային ռետուշով, ինչից կարելի է ենթադրել, որ բացի այս «Կմլո գործիքներին» ձև տալուց, այս մեթոդն օգտագործվել է նաև այլ նպատակներով (Նկար 8): Հարկ է նշել, որ սահմանափակ քանակությամբ վատ պահպանված կենդանական մնացորդներ, որոնցից ճանաչվել են վայրի ոչխարը, այծը և այծյանը, նույնպես հայտնաբերվել են իրենց օրիգինալ վայրում (որոշները՝ շինության ներսում):

#### 4. Գեղարոտ-1 բացօթյա տարածք

Գեղարոտ-1-ը բացօթյա տարածք է համանուն գյուղի արևմտյան արվարձաններում՝ Փամբակ լեռնաշղթայի հարավային լանջին՝ ծովի մակարդակից մոտ 2127 մ բարձրության վրա: Տեղանքը հայտնաբերվել է 2002 թ.-ին հայ-ֆրանսիական համատեղ արշավախմբի կողմից Քասաղ գետի հովտում համակարգված ուսումնասիրության ընթացքում (Arimura et al. 2009, p. 19): Այն տեղակայված է փոքր բլրի լանջին, որը հանդիսանում է Պավեոցեն դարաշրջանի՝ խիստ հողմահարված գրանիտային լեռնազանգված: Փոքր ձորակներում, բլրի աջ և ձախ կողմերում տարածված փոքր կիրճերում,

կարելի է տեսնել տորֆաճահճային գոյացություններ, որոնցից որոշները ծածկված են եղանակից քայքայված գրանիտե ավազից կազմված բերուկային (ալյուվիալ) ողողատներով: Հենց տեղանքը հավանաբար զբաղեցրել է բլրի գագաթը Հոլոցենի պեդոգենեզի վաղ շրջաններում: Հետագայում, լանջի ակտիվացման արդյունքում գոյացած մշակութային մնացորդները խանգարվել և հետագայում խառնվել են հողի տարբեր մակարդակներում կամ քայքայված հողի մակերևույթի վրա:

Ընդհանուր ավելի քան 100 լիթիկային նմուշներ են հավաքվել մակերևույթից և հողի ծածկույթի քայքայված մասերից:

Լիթիկային արդյունաբերությունը հիմնված է հիմնականում վանակատի վրա (մոտ 90%), և այլ հումքից (քվարցիտ, բազալտ, դացիտ, կայծքար) պատրաստված գործիքները եզակի են: Գեղարոտ-1-ի գտածոների փոքր հավաքածուի մեջ կան այնպիսի բեկորներ, որոնք բավականին նման են Ափնագյուղ-8 / Կմլո-2 արդյունաբերությունում եղածներին՝ «Կմլո գործիքներ» (հավաքածուի ամենաբնութագրիչ նմուշը, մոտ 17 հատ), ճնշումով անջատված շեղբեր, երկրաչափական միկրոլիթներ, քերիչներ և բուրիներ: Գեղարոտ-1-ի «Կմլո գործիքները» (Նկար 9-12) բնութագրվում են հետևյալ կերպ՝

— Կիսահումք. բոլոր բեկորները պատրաստված են պարզ մեծ շեղբերի վրա, մոտ 20 մմ լայնությամբ և 8 մմ հաստությամբ:

— Քերծման հետքով: Սա հաճախ հանդիպող բնութագրիչ է Գեղարոտ-1-ի «Կմլո գործիքների» մեջ: Քերծվածքները սովորաբար առաջանում են ռետուլացված մակերևույթների փորի կողմում: Ընդհանուր առմամբ, քերծման հետքերը լավ զարգացած են նախնադարյան հոտերի մեջ, բայց որոշ դեպքերում քերծման շատ փոքր հետքեր կարող են լինել նաև ստորին մակերևույթի վրա: Քերելու հետքերը առաջացել էին ճնշման միջոցով ռետուլից առաջ, քանի որ դրանց միջով անցել է վերջինս:

— Ծայրի ձևափոխմամբ: Սա նույնպես հաճախ հանդիպող բնութագրիչ է Գեղարոտ-1 տեղանքում: Կողային սուր ծայրը հաճախ ձևափոխվում է բուրիների հարվածով: Հավաքածուի մեջ առկա է «Կմլո գործիքից» հանված բեկոր: Հաճախ նկատվում է նաև վերջնամաս(եր)ի կարճեցում:

Ինչպես նշվել էր վերևում, «Կմլո գործիքի» ֆունկցիան դեռ անհայտ է, բայց դրանցից որոշները հավանաբար օգտագործվել են կոշտ օգտակար հանածոների մշակման համար: Հավաքածուի մեջ կա քերծման հետքերով բեկորային գործիք, ինչը նշանակում է, որ օգտակար հանածոների մշակումը Գեղարոտ-1-ում ինչ-որ չափով կարևոր գործունեություն էր (Նկար 12՝ 2): Գեղարոտ-1-ի ամենահետաքրքիր գտածոներից է օձից պատրաստված փոքրիկ «ձող ուղղեցնող գործիքը», որը, Քուչակ-1 քարանձավի նմանատիպ գտածոների հետ մեկտեղ, ամենահինն է այդպիսի նմուշներից ամբողջ Հայաստանում (Նկար 12՝ 3):

Գեղարոտ-1-ում գտնված կենդանական մնացորդները քիչ են լիթիկական իրերի համատեքստում, ինչը ներկայացված է կուլանի կամ Equus hemionus-ի ատամներով (Հ-Պ. Ուերպմանի նույնականացում):

Ելնելով «Կմլո գործիքների» տեխնո-տիպաբանական բնութագրերից՝ Գեղարտ-1 հավաքածուն կարելի է վերագրել Վաղ հոլոցենին, որը հնարավոր է ժամանակային առումով նոտիկ լինի վերը նշված Ապարանի խոռոչի տեղանքների հետ (Ափնագյուղ-8 / Կմլո-2 քարանձավ, Քուչակ-1 քարանձավ և այլն):

## 5. Եզրափակիչ դիտողություններ

Վերջին տասնամյակի ուսումնասիրությունները ի հայտ են բերել Հայաստանի Վաղ հոլոցենյան դարաշրջանին թվագրվող առաջին մեգոլիթային և/կամ պրոտո-նեոլիթյան տեղանքները: Այս տեղանքները կենտրոնացած են Ապարանի խոռոչի և Քասաղ գետի հովտի սահմաններում (Ափնագյուղ-8 / Կմլո-2 քարայրը, Քուչակ-1 քարանձավը, Գեղարտ-1, Ռյա Թագա-2, Արագած-1 և 2 բացօթյա տարածքներ): Նման այլ վայրեր հայտնաբերվել են Արարատյան խոռոչում գտնվող Արագած լեռան հարավային լանջերին (Արուճ-1, Վահագնի-1, Սատանի Դար, Աշնակ-1 և Կաթնաղբյուր-1 բացօթյա տարածքներ), Շիրակի խոռոչում (Շիրակավան-1, Աղվորիկ-1 բացօթյա տարածքներ), Լոռու խոռոչում (Կրուգլայա Շիշկա-1 քարայր, Պաղաղբյուր-1 բացօթյա տարածք), Աղստև գետի հովտում (Ենոքավան-2 քարայր) և այլնում, ինչպես նաև «Կմլո գործիքները» լիթիկական արդյունաբերության արտադրանքի մեջ հաճախ հանդիպող իրեր են (Նկար 13) (Gasparyan and Sargsyan 2003; Gasparyan 2007; Gasparyan et al. 2005; Yeritsyan et al. 2009): Այդ տեղանքների նախնական ուսումնասիրությունները պարզեցին Վաղ հոլոցենի որսորդական և հավաքչական շատ փոքր շարժական խմբերի առկայությունը, ովքեր գետի կիրճերում քարայրներ և քարանձավներ, ինչպես նաև բարձր լեռնային խոռոչներում գետային դարավանդներ և սարավանդներ էին զբաղեցնում: Այդ վայրերի համեմատաբար բարակ մշակութային նստվածքը չնայած հարուստ է լիթիկական գտածոներով, որոնք ցույց են տալիս վանակատի տարբեր աղբյուրների շահագործումը, չունեն հարուստ կենսահնագիտական տեղեկություններ: Այնուամենայնիվ, սահմանափակ կենսահնագիտական նյութերը, գործիքների կազմի հետ միասին, ցույց են տալիս վայրի կենդանական տեսակների որս (ոչխարներ, այծեր, եղջերուներ և կուլաններ), ձկնորսություն և վայրի բույսերի հավաք: Ներքին տնտեսության և սննդամթերք արտադրող տնտեսությունների նշանները հիմնականում բացակայում են, ինչը բացառում է Վաղ հոլոցենի այս տեղանքների տեղադրումը Նեոլիթի շրջանակներում, և ընդհակառակը, անհրաժեշտ է դարձնում դրանք դիտարկել որպես Մեգոլիթ և/կամ Պրոտո-նեոլիթում՝ մ.թ.ա. մոտ 12,000-7,500 ժամանակային միջակայքով (ելնելով ռադիոածխածնային ուսումնասիրության ամսաթվերի նախնական խմբից): Սա ժամանակագրական խնդիր և մշակութային առանցք է ապահովում այս Վաղ հոլոցենի և Ուշ նեոլիթյան տեղանքների միջև (այսպես կոչված «Արատաշեն-Շուլավերի-Շոմոտեպե» մշակույթը):

Վաղ հոլոցենի տեղանքների լիթիկական գտածոները բնութագրվում են մեծ թվով երկրաչափական միկրոլիթների (անհավասարակողմ եռանկյունի, հավասարասրուն սեղաններ), ինչպես նաև շատ հատուկ գործիքներ՝ շարունակական գուգահեռ ռետուշով կողային եզրերին, ինչը կատարվում է ճնշման միջոցով շերտավորման տեխնոլոգիայով: Այս եզակի նմուշները, որոնց անվանում են «Կմլո գործիքներ», նշում են ժամանակաշրջանի մշակութային հատկանիշները: Նրանք արտաքին նմանություններ ունեն Մերձավոր Արևելքի նախախեցեգործական Նեոլիթի տեղանքներից հայտնի այսպես կոչված «Չատոնու գործիքների» հետ, սակայն շատ առումներով տարբերվում են վերջինիս տեխնո-մորֆոլոգիական նախագծման կոնցեպտից և Հայաստանում հայտնվել են առնվազն մ.թ.ա.

---

9-րդ հազարամյակ առաջին կեսից: Այս «Կմլո գործիքների» գործնական նպատակը դեռ պարզ չէ: Երկրորդային ձևավորում ունեցող նմանատիպ գործիքներ հայտնաբերվել են Կովկասի և Մերձավոր Արևելքի տարածաշրջաններում առկա Վադ հողոցների քարայրներում և նեոլիթյան հնավայրերում, որոնք թվագրվում են մ.թ.ա. 8-ից 7-րդ հազարամյակներ (Mortensen 1970; Redman 1982; Fujii 1988; Bader 1989; Bader and Tseretelli 1989; Anderson 1994; Balkan-Atlı 1994; Caneva et al. 1994; Rosenberg 1999; Nishiaki 2000; Kozłowski and Aurench 2005, pp. 65-73; Cauvin et al. 2011, pp. 6-7, 11, 29, 35): Ինչպես արդեն նշվել էր, «Կմլո գործիքների» վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատող եզրերը շատ հաճախ հանվում կամ թարմացվում են բուրին-հարվածային մեթոդով, հետևաբար, այս տեսակի գործիքները հազվադեպ են վերառետուշավորվել և վերափոխվել գործիքների նախկին տեսքի:

Չնայած այս վայրերի վերաբերյալ մեր ուսումնասիրություններից ստացվել են Հայաստանում առկա Ուշ պլեյստոցենի /Վադ հողոցների տեղանքների առաջին ապացույցները, այս ժամանակաշրջանի շատ պահեր, ինչպիսիք են կենսապահովման համար տնտեսությունը և հասարակական կազմակերպությունը, դեռ անհայտ են: Հայ հնագիտության կարևոր ապագա առաջադրանքներն են նոր պեղումներ «Կմլո տեսակի» տեղանքներում՝ հատկապես ավելի հարուստ կենսահնագիտական հաջորդականություն ունեցողներում, որոնք, հավանաբար, տեղակայված կլինեն օրգանական նյութերի պահպանմանը նպաստող Հայաստանի հյուսիսային կարստկական միջավայրում:



Fig.1

Figure1 — Նկար 1

1. Քասաղ գետի տեսքը Ափնագյուղ-7 և 8/Կմլո-1 և 2 քարայրների ստոսակայքում գտնվող վտակի հետ միանալու կետից:

2. Ափնագյուղ-8/Կմլո-2 քարայրների տեսքը հարավ-արևելքից:




Fig.2

Figure2 — Նկար 2

Ափնագյուղ-8/Կմլո-2 քարայրի տեղագրական հաստակագիծը և շերտագրական հատվածը (2005 թ. պեղումներ):

Apnaghyugh-8/Kmlo-2 cave. Plan—Ափնագյուղ-8/Կմլո-2 քարայր: Հաստակագիծ Excavations—Պեղումներ

Stratigraphic section from 2005 excavations—2005 թ. պեղումներից շերտագրական հատված:

- 1—Modern zoogenic humus=>Ժամանակակից կենդանական հումուս
- 2—Grayish brown, partly carbonated humus=>Մոխրագույնոտ շագանակագույն, մասամբ գազավորված (ածխածնային) հումուս
- 3—Dark gray, loam with albites containing charcoals=> Մուգ մոխրագույն, ավազակավ՝ փայտածուխ պարունակող ալբիտներով
- 4—Brown ash, loam with albites and debris=> Շագանակագույն մոխիր, ավազակավ՝ ալբիտներով և բեկորներով
- 5—Big blocks of basaltic andesite, mud from the river, including volcanic slabs=> Բազալտային անդեզիտի մեծ քարեր, գետից ցեխ՝ ներառյալ հրաբխային սալաքարեր
- 6—Ash colored soil, big blocks of basaltic andesite=> Մոխրագույն հող, բազալտային անդեզիտի մեծ քարեր
- 7—Dark brown, big blocks of basaltic andesite and loam=> Մուգ շագանակագույն, բազալտային անդեզիտի և ավազակավի մեծ քարեր
- 8—Light yellow, mud from the river with big blocks of basaltic andesite and loam=> Բաց դեղին, բազալտային անդեզիտի և ավազակավի մեծ քարերով գետի տիղմ
- 9—Light yellow, mud from the river with big blocks of basaltic andesite=> Բաց դեղին, բազալտային անդեզիտի մեծ քարերով գետի տիղմ:




Fig.3

Figure 3 —Նկար 3

Implements prepared with steep lamellar retouch from Apnagyugh-8/Kmlo-2 cave excavations (1-3: “Kmlo tools”; 4-5: Retouched blades)

Ափնագյուղ-8 / Կմլո-2 քարայրների պեղումներից ստացված կտրուկ շերտավոր (լամելարային) ռետուշով պատրաստված գործիքներ (1-3՝ «Կմլո գործիքներ», 4-5՝ ռետուշացված շերտեր)



Fig.4

Figure 4 —Նկար 4

1. Main view of the Kuchak-1 rock-shelter from south-west;

1. Քուչակ-1 քարանձավի տեսքը հարավ-արևմուտքից:

2. Main view of the Kuchak-1 rock-shelter from south-east.

2. Քուչակ-1 քարանձավի տեսքը հարավ-արևելքից:




Fig.5

Figure 5 —Նկար 5

Topographic plan of Kuchak-1 rock-shelter showing the areas included under excavations.

Քուչակ-1 քարանձավի տեղագրական հատակագիծը, որը ցույց է տալիս պեղումների անցկացման տարածքները:

Kuchak-1 rock shelter—Քուչակ-1 քարանձավ

2004, 2007-2010 excavations. Plan.—2004 թ., 2007-2010 թթ. պեղումներ:

Հատակագիծ:

Trench—Խրամատ

Spring—Աղբյուր

Kuchak-Yeghipatrush road—Քուչակ-Եղիպատրուշ ճանապարհ

Legend—Բացատրագիր

Excavated squares by years—Պեղված հատվածներ ըստ տարիների

Bedrock formations—հիմնաքարի կազմավորումներ

Construction—Շինարարություն




Fig.6

Figure 6 — Նկար 6

Stratigraphic section of the Kuchak-1 rock-shelter from 2010 excavations.

Քուչակ-1 քարանձավի շերտագրություն հաստվածը 2010 թ. պեղումներից:

1a: 10YR 5/2 grayish brown humus with limited sub-angular debris (first horizon of modern soil)

1ա) 10YR 5/2 մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ սահմանափակ ենթանկյունային բեկորներով (ժամանակակից հողի առաջին հորիզոն):

1b: 10YR 3/2 very dark brown humus with sub-angular debris (second horizon of modern soil)

1բ) 10YR 3/2 շատ մուգ շագանակագույն հումուս՝ ենթանկյունային բեկորներով (ժամանակակից հողի երկրորդ հորիզոն)

1c: 10YR 4/2 dark grayish brown humus with sub-angular debris including ash and charcoal.

1գ) 10YR 4/2 մուգ մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ ենթանկյունային բեկորներով, ներառյալ մոխիր և փայտածուխ:

2a: 10YR 5/2 grayish brown humus including sub-angular debris and big blocks (pedogenesis);

2ա) 10YR 5/2 մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ և մեծ քարեր (pedogenesis հողագոյացում):

2b: 10YR 5/2 grayish brown humus with sub-angular debris and big blocks, including limited alluvial pebbles and small sand (pit);

2բ) 10YR 5/2 մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ ենթանկյունային բեկորներով և մեծ քարերով՝ ներառյալ սահմանափակ ալյուվիալ գետաքարերն ու մանր ավազը (փոս):

2c: 10YR 5/2 grayish brown humus with sub-angular debris, including limited alluvial pebbles and small sand (bioturbation pit);

2գ) 10YR 5/2 մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ ենթանկյունային բեկորներով՝ ներառյալ սահմանափակ ալյուվիալ գետաքարերն ու մանր ավազը (բիոտուրբացիայի փոս):

3) 10YR 4/3 brown loam, including sub-angular debris, alluvial pebbles, and small sand (fluvial and aeolian sediments);

3) 10YR 4/3 շագանակագույն ավազակավ՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ, ալյուվիալ գետաքարեր և մանր ավազ (գետային և էոլյան ողողատներ):

4) 10YR 4/3 brown humus and loam, including limited sub-angular debris (paleosol);

4) 10YR 4/3 շագանակագույն հումուս և ավազակավ՝ ներառյալ սահմանափակ ենթանկյունային բեկորներ (պալեոսոլ):

5) Andesitadacite bedrock.

5) Անդեզիտադացիտային հիմնաքար:





Fig.7

Figure 7—Նկար 7

1. Kuchak-1 rock-shelter at the final phase of the excavations, where traces of small construction are visible (on the left end of the Trench);

1. Քուչակ-1 քարանձավը պեղումների վերջին փուլում, որտեղ տեսանելի են փոքր շինարարության հետքեր (Խրանատի ձախ ծայրում):

2. Most complete sediment section in Kuchak-1 rock-shelter preserved under a huge block collapsed from the roofing.

2. Քուչակ-1 քարանձավում ամենաամբողջական ողողատի հատվածը, որը պահպանվել է տանիքի փլուզումից ընկած հսկայական քարի տակ:




Fig.8

Figure 8—Նկար 8

Implements prepared with steep lamellar retouch from Kuchak-1 rock-shelter excavations (1-3: “Kmlö tools”; 4-5: Arrowhead).

Քուչակ-1 քարանձավի պեղումներից ստացված կտրուկ շերտավոր (լամելարային) ռետուշով պատրաստված գործիքներ (1-3՝ «Կմլո գործիքներ», 4-5՝ Նետածայր):



Fig.9

Figure 9—Նկար 9

“Kmlö tools” from Gegharot-1 open-air site.

«Կմլո գործիքներ» Գեղարոտ-1 բացօթյա տեղանքից:




Fig.10

Figure 10—Նկար 10

“Kmló tools” from Gegharot-1 open-air site.

«Կմլո գործիքներ» Գեղարոտ-1 բացօթյա տեղանքից:



Fig.11

Figure 11—Նկար 11

“Kmló tools” from Gegharot-1 open-air site.

«Կմլո գործիքներ» Գեղարոտ-1 բացօթյա տեղանքից:




Fig.12

Figure 12—Նկար 12

Implements from Gegharot-1 open-air site (1-2: “Kmló tools”; 3: Small “shaft straightener”)

Գործիքներ Գեղարոտ-1 բացօթյա տեղանքից (1-2՝ «Կմլո գործիքներ», 3՝ փոքր «նող ուղղեցող գործիք»)




Fig.13

Figure 13—Նկար 13

“Kmlu tools” from other archaeological sites of Armenia (1: Aghvorik-1 open-air site; 2-Yenokavan-2 cave).

«Կմլու գործիքներ» Հայաստանի այլ հնագիտական տեղանքներից (1՝ Աղվորիկ-1 բացօթյա տեղանք, 2՝ Ենոքավան-2 քարայր):

Table.1

| Phase | Code           | Material   | Date BP uncalibrated | Date AD/BC calibrated (2 sigmas) |
|-------|----------------|------------|----------------------|----------------------------------|
| I     | LTL-5736A      | charcoal   | 679 ± 50             | 1250 – 1400 AD                   |
| I     | Ly-13663       | charcoal   | 975 ± 30             | 1014 – 1155 AD                   |
| I     | Ly-12512       | charcoal   | 1095 ± 35            | 887 – 1017 AD                    |
| II    | Ly-2761 (OxA)  | burnt bone | 5515 ± 30            | 4450 – 4328 BC                   |
| II    | Ly-2817 (SacA) | charcoal   | 5555 ± 60            | 4520 – 4269 BC                   |
| II    | UGAMS-4077     | burnt bone | 5610 ± 30            | 4499 – 4360 BC                   |
| II    | Ly-2762 (OxA)  | tooth      | 6640 ± 40            | 5631 – 5491 BC                   |
| III   | UGAMS-6457     | bone       | 8480 ± 40            | 7587 – 7498 BC                   |
| III   | Poz-19666      | bone       | 8500 ± 50            | 7596 – 7492 BC                   |
| III   | UGAMS-6456     | charcoal   | 8830 ± 30            | 8201 – 7759 BC                   |
| III   | UGAMS-6455     | bone       | 8980 ± 40            | 8286 – 7976 BC                   |
| III   | UGAMS-6458     | bone       | 9050 ± 40            | 8304 – 8226 BC                   |
| III   | LTL-5735A      | bone       | 9311 ± 50            | 8720 – 8420 BC                   |
| III   | UGAMS-6459     | charcoal   | 10020 ± 40           | 9794 – 9366 BC                   |
| IV    | UGAMS-5797     | bone       | 8790 ± 30            | 8165 – 7728 BC                   |
| IV    | UGAMS-5798     | charcoal   | 9420 ± 30            | 8778 – 8626 BC                   |
| IV    | LTL-5737A      | charcoal   | 9507 ± 60            | 9140 – 8640 BC                   |
| IV    | UGAMS-4076     | bone       | 9840 ± 30            | 9354 – 9252 BC                   |
| IV    | AA-68562       | bone       | 10024 ± 91           | 10012 – 9300 BC                  |
| IV    | AA-68563       | bone       | 10184 ± 93           | 10425 – 9446 BC                  |
| V     | Poz-20231      | bone       | 10900 ± 50           | 10976 – 10680 BC                 |
| V     | Ly-6990 (SacA) | bone       | 10990 ± 60           | 11131 – 10732 BC                 |
| V     | UGAMS-5799     | bone       | 11310 ± 30           | 11344 – 11165 BC                 |
| V     | UGAMS-5800     | charcoal   | 11600 ± 30           | 11645 – 11363 BC                 |

**Օգտագործված գրականություն**

- Anderson, P. (1994) Reflection on the significance of two PPN typological classes in light of experimentation and microware analyses: Flint "Sickles" and obsidian "Cayönü" tools. In: Gebel, H.G.G. and Kozłowski, S.K. (eds.), *Neolithic chipped stone industries of the Fertile Crescent*. Berlin: ex orient, pp. 61-82.
- Arimura, M., Chataigner, C. and Gasparyan, B. (2009) Kmlo-2, An Early Holocene Site in Armenia. *Neo-Lithics* 2/2009, pp.17-19.
- Arimura, M., Badalyan, R., Gasparyan, B. and Chataigner, C. (2010) Current Neolithic Research in Armenia. *Neo-Lithics* 1/2010, pp. 77-85.
- Arimura, M., Gasparyan, B. and Chataigner, C. (2012) Prehistoric sites in Northwest Armenia: Kmlo-2 and Tsaghkahovit. In: Matthews, R. and Curtis, J. (eds.), *Proceedings of the 7th International Congress of the Archaeology of the Ancient Near East, 12 April - 16 April 2010, The British Museum and UCL, London, Volume 3: Fieldwork and Recent Research Posters*. Glatz C., Simpson St.J., Taylor H., Tubb J. and Chapman R., Wiesbaden: Harrassowitz Verlag, pp. 135-149.
- Badalyan, R., Lombard, P., Avetisyan, P., Chataigner, Ch., Shabot, J., Vila, E., Hovsepyan, R., Willcox, G. and Pessin, H. (2007) New Data on the Late Prehistory of the Southern Caucasus. The excavations at Aratashen (Armenia): Preliminary report. In: Lyonnet, B. (ed.), *Les Cultures du Caucase (VIe-IIIe Millénaires avant notre ère). Leurs relations avec le Proche Orient*. Paris: CNRS Editions, pp. 37-61.
- Bader, N.O. (1989) *Drevneyshiye zemledel'tsi Severnoy Mesopotamii (Ancient farmers of the Northern Mesopotamia)*. Moscow: "Nauka" Publishing House (in Russian).
- Bader, N.O. and Tseretelli, L.D. (1989) *Mezolit Kavkaza (The Mesolithic of the Caucasus)*. In: Kol'tsov, L.V. (ed.), *Mesolithic of USSR. Archaeology of the USSR series*. Moscow: "Nauka" Publishing House, pp. 93-105 (in Russian).
- Balkan-Ath N. (1994) *La Néolithisation de l'Anatolie. Varia Anatolica VII*. Paris: Institut français d'études anatoliennes d'Istanbul.
- Caneva, I., Conti, A., Lemorini, C. and Zampetti, D. (1994) The lithic industry at Çayönü: A Preliminary Overview of the Aceramic Sequence. In: Gebel, H.G. and Kozłowski, S.K. (eds.), *Neolithic Chipped Stone Industries of the Fertile Crescent*. Berlin: ex orient, pp. 253-266.
- Caneva, I., Lemorini, C. and Zampetti, D. (1998) Chipped stone at Aceramic Çayönü: Technology, Activity, Tradition, Innovations. In: Arsebuk, G, Mellink, M.J. and Schirmer, W. (eds), *Light on top of the Black Hill. Studies presented to Halet Cambel*. Istanbul: Ege Yayinlari, pp. 199-206.
- Cauvin, J., Arenche, O., Cauvin, M.-C. and Balkan-Atl, N. (2011) The Pre-Pottery Site of Cafer Höyük. In: Basgelen N., Ozdogan M., Kuniholm P. (eds.), *The Neolithic in Turkey: New Excavations & New Research volume 2. The Euphrates Basin*. Istanbul, Galatasaray: Archaeology & Art Publications, pp. 1-40.
- Chataigner, C., Arimura, M. and Gasparyan, B. (2007) *La néolithisation de L'Arménie. Les Dossiers d'archéologie* N321, pp. 30-35.
- Chataigner, C., Gasparyan, B., Montoya, C., Arimura, M., Melikyan, V., Liagre, J., Petrosyan, A., Ghukasyan, R., Colonge, D., Fourloubey, K., Arakelyan, D., Astruc, L., Nahapetyan, S., Hovsepyan, R., Balasescu, A., Tome, K. and Radu, V. (2012) From the Late Upper Palaeolithic to Neolithic in North-Western Armenia: Preliminary results. In: Avetisyan, P. and Bobokhyan, A (eds.), *Archaeology of Armenia in Regional Context, Proceedings of the International Conference dedicated to the 50th Anniversary of the Institute of Archaeology and Ethnography Held on September 15-17, 2009 in Yerevan*. Yerevan: National Academy of Sciences of the Republic of Armenia "Gitutyun" Publishing House, pp. 52-63.
- Copeland, L. and Akkermans, P.M.M.G. (1994) A cache of 56 flint transverse arrowheads from Tell Sabi Abyad, Balikh valley, Syria. In: Gebel, H.G. and Kozłowski, S.K. (eds.), *Neolithic Chipped Stone Industries of the Fertile Crescent. Proceedings of the First Workshop on PPN Chipped Lithic Industries*. Berlin: ex oriente, pp. 379-382.
- Fujii, S. (1988) Typological Reassessment and Some Discussions on "Beaked Blades". *Bulletin of the Okayama Orient Museum* 7, pp. 1-16.
- Gasparyan, B. and Sargsyan, G. (2003) *Kasakhi kirchi hmagitakan hushardzanneri usumnasirutyan nakhnakan ardyunknery (Preliminary results of investigation of the archaeological monuments in the Kasakh River Canyon)*. In: *The Jubilee Conference "Aragatsoin. Spiritual and Cultural Heritage"*, dedicated to the 1700th anniversary of the unktion of the Mother Temple of Holy Ejmiatsin. Theses of the Conference. Oshakan, pp. 58-59 (in Armenian).
- Gasparyan, B. (2007) *Dans les montagnes d'Arménie, 500 000 ans d'histoire avant notre ère*. Fichet de Clairfontaine, F. (ed.). Rouen: Musée archéologique de Saint-Raphael; Musée départemental des antiquités, pp. 47-51, 130-133.
- Gasparyan, B., Nahapetyan, S., Sargsyan, G. and Gabrielyan, I. (2005) *Kamennyi vek Tashirskogo plato (The Stone Age of the Tashir*

- 
- Plateau). In: Kalantaryan, A.A., Badalyan, R.S. and Avetisyan, P.S. (eds.), *Hin Hayastani mshakuyty XIII (The Culture of Ancient Armenia XIII)*. Materials of the Republican conference. Yerevan: "Mughni" Publishing House, pp. 17-27 (in Russian).
- Grigolia, G.K. (1977) *Neolit Tsentral'noy Kolkhidi. Paluri (The Neolithic of Central Kolkhida. Paluri)*. Tbilisi: "Metsniereba" Publishing House (in Georgian with Russian Resume).
- Kozłowski, S.K. and Aurenche, O. (2005) *Territories, Boundaries and Cultures in the Neolithic Near East*. BAR International Series 2005. Oxford: Archaeopress.
- Meshveliani, T., Bar-Oz, G., Bar-Yosef, O., Belfer-Cohen, A., Boaretto, E., Jakeli, N., Koridze, I. and Matskevich, Z. (2007) Mesolithic hunters at Kotias Klde, Western Georgia: Preliminary results. *Paléorient* 33/2, pp. 47-58.
- Montoya, C., Balasescu, A., Joanic, S., Ollivier, V., Liagre, J., Nahapetyan, S., Ghukasyan, R., Colonge, D., Gasparyan, B. and Chataigner, C. (2013) The Upper Paleolithic site of Kalavan-1 (Armenia): An Epigravettian settlement in the Lesser Caucasus. *Journal of Human Evolution* 65, pp. 621-640.
- Mortensen, P. (1970) *Tell Shimshara, The Hassuna period*. Kobenhavn.
- Nishiaki, Y. (2000) *Lithic technology of Neolithic Syria*. BAR international series 850. Oxford.
- Rosenberg, M. (1999) *Hallan emi*. In: Özdoğan, M. and Başgelen, N. (eds.), *Neolithic in Turkey. The cradle of civilizations*. New Discoveries. Istanbul: Arkeoloji ve Sanat Yayınları, pp. 9-18, 25-33.
- Redman Ch.L. (1982) The Cayönü Tepesi chipped stone industry: 1968 and 1970 excavation seasons. In: Braidwood, L.S. and Braidwood, R.J. (eds.), *Prehistoric village Archeology in South-Eastern Turkey*. BAR International Series 138. Oxford, pp. 17-71.
- Wechler, K.P. (2001) *Studien zum Neolithikum der osteuropäischen Steppe*. Mainz: von Zabern.
- Yeritsyan, B., Petrosyan, A. and Gasparyan, B. (2009) *Vahagni-1 karedaryan batsotya hnayayri usumnasirutyan nakhnakan ardyunknery (Preliminary results of investigation of Vahagni-1 Stone Age open-air Site)*. In: *Collection of Scientific articles, Yerevan-2, Scientific session dedicated to the key issues of Yerevan history*. Yerevan: Yerevan History Museum Press, pp. 33-39 (in Armenian).

# Անտառների շահագործումը Հյուսիսարևելյան Հայաստանի Աղստև հովտում՝ Հողոցների Ժամանակաշրջանում Մակրոտո Արինուրա, Բորիս Գասպարյան, Սամվել Նահապետյան և Ռոն Փինհասի

## 1. Նախաբան

Ներկայիս Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհում՝ տեղակայված Աֆրիկա և Եվրասիա մայրցամաքների Հանրապետության տարածքին բնորոշ է բազմազան լանդշաֆտը: Այն ձևավորվել է բարդ ռեյեֆային գոյացությունների՝ այդ թվում ծալքավոր լեռների, հրաբխային լեռնազանգվածների, խոր հովիտների, բարձր լեռնային սարավանդների և միջլեռնային խոռոչների պատճառով (Gasparian 2010, p. 162): Փոքր Կովկասը, որը տեղակայված է հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք, ձևավորվել է արաբական և եվրասիական պլատֆորմների մայրցամաքային բախումից: Այն բաղկացած է լեռնաշղթաներից և բազմաթիվ գետային կիրճերից: Փոքր Կովկասի լեռները ձևավորում են Կուրի ավազանի շրջափակը՝ Հարավային Կովկասի ամենամեծ բերուկային (այլուվիալ) հարթավայրը:

Աղստև գետը տեղակայված է Հայաստանի հյուսիս-արևելքում գտնվող Տավուշի մարզում: Այն սկիզբ է առնում Փոքր Կովկասում և թափվում է Կուր գետը: Գետի երկարությունը 130 կմ է, իսկ ավազանը զբաղեցնում է մոտ 2500 կմ<sup>2</sup>: Հայաստանի Հանրապետության տարածքում Աղստև գետի մեծ մասը հոսում է նեղ և երկար հովիտներով՝ 2 կմ-ից պակաս լայնությամբ գետի ավազանով: Ելնելով Աղստևի հովիտի ներկայիս ջրահեռացման տարածքից՝ այն նախապատմական ժամանակաշրջանում պետք է որ օգտագործված լիներ որպես կարևոր ճանապարհ Փոքր Կովկասի, Կուրի ավազանի և Հայկական լեռնաշխարհի հրաբխային լանդշաֆտների միջև: Հետևաբար, զարմանալի չէ ավազանի երկայնքով բազմաթիվ նախնադարյան տեղանքների հայտնաբերումը:

Տվյալ հոդվածում ներկայացվում է Աղստևի հովտում առկա հնագիտական տեղանքների արձանագրությունների համատեքստը՝ ընդգրկելով Ուշ Պլեյստոցենից մինչև Միջին Հողոցեն ընկած դարաշրջանները:

## 2. Նախնադարյան տեղանքները Աղստևի հովտում և հարակից տարածքներում

Վերջին տասնամյակի ընթացքում տարբեր խմբեր՝ ներառյալ այս հոդվածի հեղինակները, պեղումների և հետազոտությունների միջոցով ուսումնասիրել են այստեղ նշված տեղանքները: Որոշ տեղանքների վրա կատարվել են փորձնական պեղումներ՝ նախնական շերտագրական մշակութային հաշորդականությունը ստանալու համար: Հաջորդող քննարկման մեջ, բացառությամբ որոշ տեղանքների հստակ սահմանված համատեքստերի միջոցով և ռադիոածխածնային ուսումնասիրությամբ ստացված մի քանի ամսաթվերի, բոլոր ժամանակագրական որոշումները հարաբերական են և հիմնված են նմուշների տիպաբանական և տեխնոլոգիական հատկանիշների վրա (հիմնականում լիթիկների): Այդ պատճառով, ստորև բերված ժամանակագրական համակարգը պետք է ընդունվի որպես նախնական և հետագայում կարող է ենթարկվել փոփոխությունների:

## 2.1 Բարեպատ-1

Բարեպատ-1-ը լեռնային փոքրիկ քարայրային տեղանք է, որը գտնվում է Բարեպատ գետի (Գետիկ գետի վտակ) ձախ կողմում՝ Սևանա լճի հյուսիսում, ծովի մակարդակից 1700 մ բարձրության վրա (Cherkinsky and Chataigner 2010): Այստեղ 2007 թ.-ին փորձնական պեղումներ են անցկացվել հայ-ֆրանսիական խմբի (ղեկավարներ՝ Բորիս Գասպարյան և Քրիստին Շաթեներ) կողմից, որին հաջորդել են ավելի երկար դաշտային աշխատանքներ 2008–2009թթ.-ին Աղստև գետի ավազանի Քարե դարի տեղանքներն ուսումնասիրող Հնագիտության և ազգագրության ինստիտուտի խմբի կողմից (Նկար 1): Պեղումների արդյունքում քարայրում հայտնաբերվել է 1 մ խորություն ունեցող մշակութային շերտ, որը պարունակում էր մի քանի խեցեղենի բեկորներ, հղկված քարեր, վանակատի նմուշներ, ոսկորներից գործիքներ և կենդանական մնացորդներ (Նկար 2): Փորձարկման խրամատից գտնված ոսկորների նմուշներից մեկը թվագրվում է մ.թ.ա. մոտ 4,273–4,146 թթ. (UGAMS-2818, 5360 ± 40 BP):

Վանակատի նմուշները համեմատաբար խիտ են, և դրանցից են սովորական շեղբով գործիքները (ըստ երևույթի արտադրված ճնշման միջոցով շերտավորման տեխնիկայի օգտագործմամբ), մեծ միջուկներ (նուկլեուս) և բեկորային գործիքները (Նկար 3): Բացի այդ, հայտնաբերվել է վանակատից ախտորոշիչ (diagnostic) գործիք՝ կիսաշրջանաձև միկրոլիտ (lunate) (Նկար 3՝ 8): Այս գործիքի ետևի մասը հղկվել է երկկողմանի ռետուշով: Միկրոլիտի այս տեսակը հայտնի է Էնեոլիթային տեղանքներից, որոնցից է Արագած լեռան վրա գտնվող Ծաղկահովիտ-1 քարանձավը (Arimura et al. 2012): Բարեպատ-1 և Ծաղկահովիտ-1 տեղանքներից ռադիոածխածնային ուսումնասիրությամբ ստացված թվականները բոլորն ընկնում են Ուշ Էնեոլիթի մ.թ.ա. 5-րդ հազարամյակի շրջանի քառորդ:

## 2.2 Հովքի քարանձավներ

Աղստևի հովտում Քարե դարի քարայրների և քարանձավների մեկ այլ խմբավորում էր հայտնաբերվել հայ-բրիտանա-իռլանդական համատեղ խմբի (ղեկավարներ՝ Բորիս Գասպարյան և Ռոն Փինհասի) կողմից, ներկայիս Հովք գյուղից հյուսիս-արևմուտք՝ Դիլիջանից 20 կմ դեպի արևելք՝ Իջևանի լեռնաշղթայի հարավ-արևելյան հատվածում (Pinhasi et al. 2006): Այս տեղանքները գտնվում են համեմատաբար բարձրադիր դիրքերում՝ ծովի մակարդակից մոտ 1800–2000 մ հարաբերական բարձրության վրա: Տարածքի տեղանքներից մեկը՝ 2005-ից 2009 թթ. պեղված Հովք-1 քարայրը, նոր տեղեկություններ հաղորդեց Հարավային Կովկասի բարձր հարաբերական բարձրության վրա գտնվող շրջաններում Միջին պալեոլիթի մարդու բնակության և գործունեության մասին (Pinhasi et al. 2011):

Հայտնաբերված տեղանքներից Հովք-1 և Հովք-3 քարանձավները փորձնական պեղվել են (Նկար 4-6): Հովք-1 քարանձավի պեղումները ցույց տվեցին մարդկային մշակույթները տարբեր նախնադարյան ժամանակաշրջաններում՝ Էնեոլիթից մինչև Բրոնզե դար (մ.թ.ա. 5-ից 2-րդ հազարամյակներ) և Միջնադար (մ.թ. 10-11-րդ դարեր), ինչը ներկայացված է ավելի քան 1 մետրանոց շերտով, որը պարունակում է մի քանի խեցեղենի բեկորներ, վանակատի նմուշներ, ուլունքներ, մետաղադրամներ, մի քանի կենդանական մնացորդներ և մոխրի նստվածքներ: Այս արդյունքը ցույց է տալիս, որ մարդիկ երկար ժամանակ անընդմեջ այցելում էին բարձրադիր տարածք, հավանաբար որսորդության, իսկ հետագայում՝ անասուններին տեղափոխելու նպատակով:

Կոնկրետ ժամանակաշրջաններին բնորոշ շատ գտածոներ չկան, ինչը մեզ թույլ կտար ճշգրիտ որոշել մինչև Բրոնզե դարը Հովք-1 և Հովք-3 քարանձավների մշակույթների համեմատական ժամանակագրությունը:

Չովք-1-ում և Չովք-3-ում գտնված վանակատային նմուշների մեջ կան մի քանի ուսումնասիրված բեկորներ, որոնք կարող են վերագրվել կոնկրետ ժամանակահատվածի (Նկարներ 7-8): Սակայն, այս տեղանքներում լուսնաձև միկրոլիտի առկայությունը նշանակալի է (Նկար 8՝ 7-8, 11) և, ինչպես վերը նշված է, այս տեսակը Էնեոլիթում օգտագործվում էր որպես նետածայրի բաղադրիչ: Լուսնաձև միկրոլիտի առկայությունը կարող է նշանակել, որ և՛ Չովք-1, և՛ Չովք-3 քարանձավները, հավանաբար, բնակեցվել են նույն ժամանակահատվածում՝ մասնավորապես Ուշ Էնեոլիթում:

Աղստև գետի հին դարավանդում հայտնաբերվել է բացօթյա տեղանք «Չովք-1 հնավայր» (Նկար 9՝ 1): Դարավանդը երկու մասի է բաժանված ներկայիս մայրուղու պատճառով և հայտնաբերվել էր, երբ որոշ վանակատի նմուշներ էին նկատվել պալեոսոլի (paleosol) շերտում: Կատարվել էր փոքր հատվածի մաքրում (Նկար 9՝ 2), որի արդյունքում հայտնաբերվել էին վանակատային և կայծքարային նմուշներ, շատ սահմանափակ և վատ պահպանված կենդանական մնացորդներ և մի քանի փայտածուխ: Վանակատի գտածոների թվին էին պատկանում կոնաձև միջուկը, շեղբանման բեկորները, սովորական շեղբերը և ճնշման միջոցով ռետուշացված շեղբից գործիքները (Նկար 10): Այս մասնիկները, արդյունքում ստացված գտածոների շերտագրական դիրքի հետ մեկտեղ, ցույց են տալիս, որ այս տեղանքը բնակեցված է եղել Վաղ և Միջին հոլոցենի ընթացքում: Սակայն պարզ չէ, թե այս տեղանքը մեկ ժամանակաշրջանի է պատկանում, թե՞ մի քանի, թեև պեղումներից վերցված փայտածուխի նմուշներից մեկի ռադիոածխածնային ուսումնասիրությամբ այն թվագրում է մ.թ.ա. 5-րդ հազարամյակի առաջին քառորդին (4,894–4,888 Cal BC: UGAMS-2288, 5880 ± 50 BP), որը համապատասխանում է Վաղ Էնեոլիթին:

### 2.3 Ենոքավան-1 և -2 քարայրներ

Ենոքավան-1 և -2 քարայրները տեղակայված են համեմատաբար ցածր բարձունքի վրա՝ Աղստև գետի վտակ Խաչաղբյուր գետի խոր կիրճում: Գետն անցնում է Ենոքավան և Գետահովիտ գյուղերի մոտակայքում գտնվող Իջևանի լեռնաշղթայի կրաքարային կազմավորումների միջով: Այս երկու կարստային քարայրները փորձնական պեղվել են հայ-բրիտանական խմբի (ղեկավարներ՝ Բորիս Գասպարյան և Ռոն Փինհասի, Նկար 11 և 13) կողմից: Երկու տեղանքներում պեղումներ անցկացվել են 2007–2008 թվականներին: Երկուսի խրամատներից էլ ստացվեցին հնագիտական նյութեր տարբեր մշակութային ժամանակաշրջաններից (Նկար 12 և 14): Հատկապես ավելի մեծ Ենոքավան-2 քարայրում հնագիտական շերտերն ավելի լավ են պահպանվել և ներկայացված են ավելի քան 2,5 մ մշակութային շերտերով՝ ներառյալ մոխրի շերտերով օջախ և դամբարաններ (Նկար 13՝ 2): Դրանք բաժանված են Միջնադարի, Երկաթի դարի, Ուշ բրոնզե դարի, Վաղ բրոնզե դարի և ավելի վաղ մշակույթների ժամանակների: Ամենատպավորիչը Վաղ բրոնզե դարի 1 մետրից ավել հաստությամբ շերտն է՝ խեցեղենի բեկորների, կենդանական մնացորդների և եղնիկի եղջյուրից պատրաստված գործիքի մեծ քանակությամբ գտածոներով: Քարայրի վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի բնակիչների պատրաստած հորերն ու օջախները մասամբ վնասել են ավելի վաղ մշակութային շերտը, որը բացվել էր սահմանափակ հատվածներում 2008 թ. սեզոնի վերջում: Այս շերտից ստացվել են վանակատից և տեղական կայծքարից պատրաստված մոտ 30 լիթիկական գործիքներ (Նկար 14), ինչպես նաև կենդանական մնացորդներ: Դրանց թվում առկա վանակատից պատրաստված այսպես կոչված «Կմր գործիք» (նկար 14՝ 7) բավականին կարևոր է, քանի որ այդ նմուշը կարող է լինել Վաղ հոլոցենից: Հարավային Կովկասում և հատկապես Հայաստանում առկա Վաղ հոլոցենի տեղանքները սովորաբար հանդիպում են քիչ հայտնի հրաբխային միջավայրերում, որտեղ խիստ սահմանափակ են կենդանական մնացորդները: Հետագա ուսումնասիրություն է անհրաժեշտ Ենոքավան-2 քարայրում, որտեղ առկա կենդանական աշխարհի պահպանումը թույլ կտա ճշգրիտ թվագրել այս մշակութային



երևույթը:

Ենթադրվում է, որ կատարված պեղումների արդյունքում հույս է կապված շերտից հայտնաբերվեցին վանակատային և կայծքարային որոշ նմուշներ, այդ թվում՝ փոքր քանակությամբ խեցեղենի բեկորներ և որոշ կենդանական մնացորդներ: Դրանք պատկանել են տարբեր ժամանակաշրջանների և քարայրային շերտերի բնական թեքության պատճառով ունեն խառը շերտագրական համատեքստ: Տեղական կայծքարից փոքր սուր շեղբի միջուկը, վանակատային և կայծքարային փոքր սուր շեղբերը և գործիքները (որոնցից ամենաէականն է կլորավուն վանակատից քերիչը), ըստ տիպաբանական դասակարգման, պատկանում են Էնեոլիթի ժամանակաշրջանին (Նկար 12՝ 16):

### 3. Քննարկում և եզրափակիչ դիտարկումներ

Այս հոդվածում նշված բոլոր քարայրները և քարանձավները փոքր են, և հավանաբար օգտագործվել են որպես կարճաժամկետ ճամբարներ: Բացառությամբ Հովքի տեղանքների, մյուսները գտնվում են անտառապատ տարածքում՝ ծովի մակարդակից 900–2000 մ բարձրության վրա (Նկար 15): Հարկ է նշել, որ այս տեղանքները գտնվում են լեռների ստորին լանջերին, որտեղից լավ երևում է հովտի ստորոտը: Նման վայրերից կարելի է ենթադրել, որ այդ քարանձավների հիմնական բնակիչները եղել են որսորդները: Լուսնածաղիկի միկրոլիտի հայտնաբերումը, որը որսորդական գենքի տեսակներից մեկի բաղկացուցիչ մասն է կազմում, սատարում է այս վարկածը:

Մյուս կողմից, մենք չենք բացատրելու այս տեղանքներից որոշներում այլ գործունեությունների անցկացումը: Հնարավոր է, որ բույսերի, ծառերի, մրգերի, օգտակար հանածոների և այլ օրգանական ռեսուրսների հավաքումը հնադարյան մարդկանց անտառային ռեսուրսների շահագործման մաս էր կազմում: Օրինակ՝ կայծքարի գոյացությունները (ելուստները), որոնք հայտնաբերվել են Ենթադրված գյուղի մոտակայքում: Աղստևի հովտում գտնվող Կարստ լեռները ունեն կայծքարերի բազմաթիվ աղբյուրներ, որոնք գրավիչ էին նախնադարյան «քար ջարդողների» համար:

Մարդու գործունեության հետքերի առկայությունը Հովքի քարայրում և ծովի մակարդակից 2000 մետրից ավել բարձրության վրա գտնվող քարանձավներում ցույց են տալիս, որ անտառային սահմանից վերև գտնվող տարածքը նույնպես հաճախ շահագործվում էր նախնադարյան մարդկանց կողմից: Սակայն, նրանց այցերի ճշգրիտ նպատակը մնում է անհայտ: Հովք-1 քարայրի Միջին պալեոլիթյան համատեքստից վերականգնված կենդանական հարուստ մնացորդներից՝ հատկապես խոշոր կաթնասունների (վայրի այծ և կարմիր եղջերու), կարելի է ենթադրել, որ այս բարձրադիր շրջանը վայրի կենդանիներին թակարդը զգելու և որսալու համար օգտագործվող տարածք էր: (Bar-Oz et al. 2012).

Ինչպես նշված էր վերևում, Աղստևի հովտում գտնվող բոլոր քարայրային / քարանձավային տեղանքները համեմատաբար փոքր են և հավանաբար զբաղեցված էին կարճ ժամանակահատվածներով: Մարդիկ, ովքեր ժամանակ առ ժամանակ զբաղեցնում էին այդ տեղանքները, հնարավոր է եկել էին այլ շրջաններից: Այլ կողմից, Աղստև գետի դարավանդում գտնվող Հովք-1 հնավայրի հետագա պեղումները կարող են լույս սփռել հենց Աղստևի հովտում գտնվող գլխավոր ճամբարի տեղանքի (Հովք-1 հնավայրի) և կարճաժամկետ ճամբարների (այլ լեռնային քարայրներ ) միջև կապի վրա:

Ռ-ադիոածխածնային ուսումնասիրությամբ ստացված տարեթվերը ցույց են տալիս, որ տեղանքների մեծ

մասը զբաղեցվել են մ.թ.ա. 5-րդ հազարամյակում (Բարապատ-1 քարայր, Հովք-1 հնավայր): Եթե լուսնան միկրոլիտի ժամանակագրական դիրքի վերաբերյալ մեր ենթադրությունը ճիշտ է, ապա մենք կարող ենք Հովք-1 և -3 քարանձավները վերագրել որպես Ուշ Էնեոլիթային նշակույթի տեղանքներ: Բացի այդ, վերջերս հայ-ֆրանսիական համատեղ «Առաքելություն Կովկաս» ծրագրի (Kalantaryan et al. 2012) շրջանակներում Ադստե գետի վտակ Խաչաղբյուր գետի շնորհիվ ձևավորված փոքրիկ հովտում գտնվող Գետահովիտ-2-ում իրականացված պեղումները նույնպես տրամադրել են նմանատիպ քարայրներ՝ զբաղեցված մ.թ.ա.5-րդ հազարամյակի վերջին: Տեղանքում պեղվել է նաև երկու վանակատի լուսնան միկրոլիտներ: Գետահովիտ-2-ի հետ կապված առաջացող մեկ հարց վերաբերում է այս տեղանքը զբաղեցրած մարդկային խմբերի տիպերին: Դրանք կարող էին լինել որսորդներ, կամ հովվական քոչվոր ցեղեր (մեկօրյա հովիվություն կամ անասունների տեղավորտող): Գետահովիտ-2-ն ունի հնագիտական գրառումների հարուստ պատմություն, և քարայրի հետագա ուսումնասիրությունները ավելի շատ տեղեկություններ կտան Էնեոլիթային ժամանակաշրջանում այս լեռնային տարածքում մարդկային գործունեության մասին:

Հետևաբար, մենք եզրակացնում ենք, որ Էնեոլիթյան ժամանակաշրջանում մարդիկ ակտիվորեն շահագործում էին Ադստե հովտի անտառային տարածքները: Ինչպես նշված էր վերևում, Ենոքավան-2 նյութի առկայությունը կարող է նշանակել մարդկության ավելի վաղ հաստատում այս տեղանքում (Վաղ հոլոցեն): Ինչպես երևում է Միջին պալեոլիթի Հովք-1 քարայրի ապացույցներից, անտառային տարածքը, նույնիսկ ներառելով 2000 մետրից ավել բարձրադիր գոտին, արդեն շահագործվել էր Վերին Պլեյստոցենի սկզբում, և զարմանալի չէ, որ այս տարածքը շարունակաբար օգտագործվում էր տարբեր խմբերի կողմից Վաղ և Միջին հոլոցենի ժամանակաշրջանում:

Հողագործական տնտեսությունն առաջին անգամ հաստատվել էր հարավային Կովկասի ցածրադիր վայրերում (Կուրի ավազան, Արարատյան դաշտ) մ.թ.ա. 6-րդ հազարամյակում (Նեոլիթ): Հետևաբար, մնում է ուսումնասիրել՝ ինչպե՞ս և ե՞րբ գյուղատնտեսության տարածումն առաջին անգամ ազդեց Ադստե հովտի նման լեռնային շրջանների վրա: Հետազոտման այս կարևոր թեման ավելի խորը կուսումնասիրվի առաջիկա տարիներում:




Fig.1

Figure 1—Նկար 1

1. Main view of the Barepat-1 cave from north-east;

1. Բարեպատ-1 քարայրի տեսքը հյուսիս-արևելքից

2. Trench opened in Barepat-1 cave by the end of 2009 excavations.

2. 2009 թ. պեղումների վերջում բացված խրամատ Բարեպատ-1 քարայրում




Fig.2

Figure 2—Նկար 2

Barepat-1 cave. Profile drawing of the eastern wall of the trench in 2008 excavation.  
 Բարեպատ-1 քարայրն է: Խրամատի արևելյան պատի ուղիվազմային նկար 2008 թ-ի պեղումներից:

0—7.5YER 4/2 brown humus including fine sand ash and charcoal=>շագանակագույն հումուս՝ ներառյալ մանր ավազե մոխիր և փայտածուխ  
 1—7.5YER 4/1 dark gray fine sand and aleurite including angular debris=>Մուգ մոխրագույն մանր ավազ և ալերիտ՝ ներառյալ անկյունային բեկորներ  
 2—10YR 4/2 dark grayish brown sub-angular debris with sand=> մուգ մոխրագույնոտ շագանակագույն ենթանկյունային բեկորներ ավազով  
 2a—10YR 4/2 dark grayish brown angular debris including sand=> մուգ մոխրագույնոտ շագանակագույն անկյունային բեկորներ՝ ներառյալ ավազ  
 3—10YR 3/2 very dark grayish brown fine sand with aleurite including sub-angular debris=> շատ մուգ մոխրագույնոտ շագանակագույն մանր ավազ ալերիտով՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ  
 4—10YR 4/1 dark gray loam=>մուգ մոխրագույն ավազակավ  
 4a—7.5 YER 5/2 brown loam including sub-angular debris, carbonated=> շագանակագույն կավ՝ ներառյալ ենթանկյունային բեկորներ, ածխաթթու գազով հագեցած  
 4b 10YR 6/4 light yellowish brown zoogenic humus and ash  
 5 10YR 3/3 brown loam including limited debris  
 5a 10YR 3/1 very dark gray loam  
 5b 10YR 4/2 dark grayish brown humus with sand  
 6 10YR 2/2 very dark brown loam including ash and charcoal  
 7 10YR 3/1 very dark gray sub-angular debris including sand and aleurite  
 7a 10YR 4/3 brown sandy clay  
 8 10YR 3/2 very dark grayish brown humus including angular debris and sand  
 9 10YR 3/2 very dark grayish brown humus  
 10 10YR 3/2 very dark grayish brown sub-angular debris including limited aleurite

- 4b—10YR 6/4 light yellowish brown zoogenic humus and ash=> բաց դեղնավուն շագանակագույն գոռգեն հումուս և մոխիր
- 5—10YR 3/3 brown loam including limited debris=> շագանակագույն ավազակավ, ներառում է բեկորներ
- 5a—10YR 3/1 very dark gray loam=> շատ մուգ մոխրագույն ավազակավ
- 5b—10YR 4/2 dark grayish brown humus with sand=> մուգ մոխրագույնոտ շագանակագույն հումուս ավազով
- 6—10YR 2/2 very dark brown loam including ash and charcoal=> շատ մուգ շագանակագույն ավազակավ՝ ներառյալ մոխիր և փայտածուխ
- 7—10YR 3/1 very dark gray sub-angular debris including sand and aleurite=> շատ մուգ մոխրագույն ենթանկյունային բեկորներ՝ ներառյալ ավազ և ալերիտ
- 7a—10YR 4/3 brown sandy clay=> շագանակագույն ավազոտ կավ
- 8—10YR 3/2 very dark grayish brown humus including angular debris and sand=> շատ մուգ մոխրագույնոտ շագանակագույն հումուս՝ ներառյալ անկյունային բեկորներ և ավազ
- 9—10YR 3/2 very dark grayish brown humus=> շատ մուգ մոխրագույն շագանակագույն հումուս
- 10—10YR 3/2 very dark grayish brown sub-angular debris including limited aleurite=> շատ մուգ մոխրագույնոտ շագանակագույն ենթանկյունային բեկորներ՝ ներառյալ սահմանափակ ալերիտ




Fig.3

Figure 3—Նկար 3

Late Chalcolithic selected obsidian artifacts from the excavations of Barepat-1 cave.

Ուշ Էնեոլիթի ընտրված վանակատից իրեր հայտնաբերված Բարեպատ-1 քարայրի պեղումներից:

1-1a. Point; 2-2a. Side scraper; 3-3a. Burin; 4-5. Retouched blades; 6. Chisel or pièce esquillée; 7. Black bladelet; 8. Lunate

1-1ա՝ Ծայր, 2-2ա՝ կողային քերիչ, 3-3ա՝ Փորիչ, 4-5. Ռետուշացված շեղբեր; 6. Շատիչ կամ կտորներ; 7. Սև փոքր սուր շեղբ; 8. Լուսնաձև միկրոլիտ



Fig.4

Figure 4—Նկար 4

1. Main view of the Hovk-1 rock-shelter from east;

1. Հովք-1 քարանձավի տեսքը արևելքից,

2. Trench opened in Hovk-1 rock-shelter by the end of 2009 excavations.

2. 2009 թ. պեղումների վերջում բացված խրամատ Հովք-1 քարանձավում:




Fig.5

Figure 5—Նկար 5

1. Plan of Hovk-1 rock-shelter. Red color is marking the excavated squares;  
 1. Հովք-1 քարանձավի հատադի: Կարմիր գույնով նշված են պեղված հատվածները.:

2. Profile drawing of the north-eastern wall of the trench from 2007 excavations.  
 2. Խրամատի հյուսիս-արևելյան պատի հատկագրային նկար 2007 թ.-ի պեղումներից:

Plan of Hovk-1 rock-shelter — Հովք-1 քարանձավի հատադի

0—modern humus=> Ժամանակակից հումուս

1—debris, aleurite, dark grey=> Ավերակներ, ալերիտ, մուգ մոխրագույն

2— debris, aleurite, sand, yellowish brown=> Ավերակներ, ալերիտ, ավազ, դեղնավուն շագանակագույն

2b — debris, aleurite, sand, with humus, yellowish brown=> Ավերակներ, ալերիտ, ավազ, հումուսով, դեղնավուն շագանակագույն

3—gravel, aleurite, dark grey=>Մանրախիճ, ալերիտ, մուգ մոխրագույն

4— debris, aleurite, dark yellowish brown=> Ավերակներ, ալերիտ, մուգ դեղնավուն շագանակագույն

5— debris, aleurite, zoogenic humus, with charcoal, greyish black=> Ավերակներ, ալերիտ, գոռգենիկ հումուս, փայտածուխով, մոխրագույնոտ սև

5b — debris, aleurite, light yellowish brown=> Ավերակներ, ալերիտ, բաց դեղնավուն շագանակագույն,

6—gravel, debris, aleurite, sand, with charcoal, greyish black=> Մանրախիճ, ավերակներ, ալերիտ, ավազ, փայտածուխով, մոխրագույնոտ սև

6b—debris, aleurite, sand, yellowish grey=> Ավերակներ, ալերիտ, ավազ, դեղնաբուն մոխրագույն

7—gravel, sand, aleurite, light yellowish brown=>Մանրախիճ, ավազ, ալերիտ, բաց դեղնավուն շագանակագույն

8—gravel, sand, light yellowish brown=>Մանրախիճ, ավազ, բաց դեղնավուն շագանակագույն

9—gravel, aleurite, with charcoal, grey=>Մանրախիճ, ալերիտ, փայտածուխով, մոխրագույն

10—gravel, aleurite, sand, yellowish grey=>Մանրախիճ, ալերիտ, ավազ, դեղնավուն մոխրագույն

11—unexcavated area=>Չպեղված տարածք

Limestone bedrock—Կրաքարի հիմք



Fig.6

Figure 6—Նկար 6

1. Main view of the Hovk-3 rock-shelter from north-east;

Հովք-3 քարանձավի տեսքը հյուսիս-արևելքից

2. Test sounding at the Hovk-3 rock-shelter from 2008 պեղումներ.

2. Հովք-3 քարանձավում արված փորձական փորում 2008 թ.-ի պեղումներից:




Fig.7

Figure 7—Նկար 7

Late Chalcolithic selected obsidian artifacts from the excavations of Hovk-1 rock-shelter.

Ուշ Էնեոլիթի ընտրված վանակատից իրեր հայտնաբերված Հովք-1 քարանձավի պեղումներից:

1-6. Small cores; 7-9. Small flakes; 10-11. Bladelets; 12-13. Retouched bladelets; 14-16. Notched tools.

1-6. Փոքր միջուկներ, 7-9. Փոքր թեփուկներ, 10-11. Փոքր սուր շեղք, 12-13. Ռետուշացված փոքր սուր շեղք, 14-16. Խազված գործիքներ:




Fig.8

Figure 8—Նկար 8

Late Chalcolithic selected obsidian artifacts from the excavations of Hovk-1 (1-8) and Hovk-3 (9-12) rock-shelters.

Ուշ Էնեոլիթի ընտրված վանակատից իրեր, հայտնաբերված Հովք-1 (1-8) և Հովք-3 (9-12) քարանձավի պեղումներից:

1-2, 10. Points; 3, 12. Arrowheads; 4-6. Chisels or pièce esquillées; 7-8, 11. Lunates; 9. Small prismatic core.

1-2, 10. Ծայրեր, 3, 12. Նետածայրեր, 4-6. Հատիչներ կամ փշրված կտորներ: 7-8, 11. Լուսնաձև միկրոլիտ, 9. Փոքր պրիզմատիկ միջուկ:



Fig.9

Figure 9—Նկար 9

1. Section of Hovk-1 settlement opened by the highway construction (view from east);

1. Հովք-1 հնավայրի հատված, որը բացվել էր մայրուղու կառուցման հետևանքով (տեսքը՝ արևելքից),

2. Section of 2006 test trench at Hovk-1 settlement.

2. Հովք-1 հնավայրում առկա 2006 թ-ի փորձնական խրամատի հատված:




Fig.10

Figure 10—Նկար 10

Selected Early Chalcolithic obsidian artifacts from Hovk-1 settlement.

Վաղ Էնեոլիթի ընտրված վանակատից նմուշներ, հայտնաբերված Հովք-1 հնավայրից:

1. Conical core (refitting); 2. Bladelet core on flake; 3-4. Retouched blades; 5. Point; 6. Endscraper; 7-8. Chisels or pièce esquillées; 9. Arrowhead; 10. Transverse arrowhead.

1. Կոնանկ միջուկ (նորոգված), 2. Փոքր սուր շերտի միջուկ թեփուքի վրա, 3-4. Ռետուշացված շերտեր, 5. Ծայր, 6. Քերիչ, 7-8. շատիչ կամ փշրված կտորներ; 9. Նետածայր, 10. Լայն նետածայր:



Fig.11

Figure 11—Նկար 11

1. The entrance of Yenokavan-1 cave from west;

1. Ենոքավան-1 քարայրի մուտքը արևմուտքից:

2. Test sounding at Yenokavan-1 cave from 2008 excavations.

2. 2008 թ. պեղումների ժամանակ Ենոքավան-1 քարայրում անցկացված փորձնական փորումներ:



Fig.12

Figure 12—Նկար 12

Selected artifacts from the excavations of Yenokavan-1 cave.

Ընտրված գտածոներ, հայտնաբերված Ենոքավան-1 քարայրի պեղումներից:

1. Prismatic core (flint); 2-3. Small flakes (flint); 4, 7. Blades (4: flint, 7: Obsidian); 5, 8. Retouched flakes. (5. Flint, 8. obsidian); 6. Retouched bladelet (flint); 9. Sickle element (obsidian); 10. Double scraper (flint); 11. Partial scraper (flint); 12. Scraper-burin (green chalcedony); 13-15. Chisels or pièce esquillées; 16. Rounded scraper (obsidian).

1. Պրիզմատիկ միջուկ (կայծքար), 2-3. Փոքր բեկորներ (կայծքար), 4, 7 Շերտեր (4. կայծքարային, 7. Վանակատի), 5, 8. Ռետուշացված բեկորներ (5. կայծքար, 8. Վանակատ), 6. Ռետուշացված փոքր սուր շերտ (կայծքար); 9. Մանգաղան մասնիկ (վանակատ), 10. Կրկնակի քերիչ, 11. Մասնակի քերիչ (կայծքար), 12. քերիչ-բուրին (կանաչ խալցեդոն), 13-15. շատիչ կամ փշրված կտորներ; 16. Կլորան քերիչ (վանակատ):




Fig.13

Figure 13—Նկար 13

1. Main view of Yenokavan-2 cave from south;

1. Ենոքավան-2 քարայրի տեսքը հարավից;

2. Trench opened inside of the Yenokavan-2 cave by the end of 2008 excavations.

2. 2008 թ. պեղումների վերջում բացված խրամատ Ենոքավան-2 քարայրում:



Fig.14

Figure 14—Նկար 14

Selected Early Holocene (1-7) and Early Bronze Age (8) artifacts from Yenokavan-2 cave.

Վաղ հոլոցենի (1-7) և Վաղ Բրոնզե դարի (8) գտածոներ, հայտնաբերված Ենոքավան-2 քարայրի պեղումներից:

1. Small flake (flint); 2. Retouched flake (flint); 3-5. Retouched blades (obsidian); 6. Burin (obsidian); 7. “Kmló tool” (obsidian); 8. Spindle whorl (clay, 2,400-2200 Cal BC).

1. Փոքր բեկոր (կայծքար), 2. Ռետուշացված բեկոր (կայծքար), 3-5. Ռետուշացված շեղբեր (վանակատ); 6. Բուրին (վանակատ), 7. «Կմլո գործիք» (վանակատ), 8. Իլիկի պտուտակ (կավ, մ.թ.ա. 2400-2200 թթ.):



Figure 15—Նկար 15

Schematic diagram for locations of sites mentioned in the text.

Տեքստում նշված տեղանքների դիրքերի սխեմատիկ գծապատկեր:

Over the forest line: >2000m—Անտառային սահմանից վերև՝ 2000 մետրից բարձր

Forested area: 900-2000 m—Անտառային տարածք՝ 900-2000 մ

Aghstev River—Աղստև գետ

West—Արևմուտք

East—Արևելք

Hovk rock-shelter (2040 m)—Հովք քարանձավ (2040 մ)

Barepat-1 cave (1700 m)—Բարեպատ-1 քարայր (1700 մ)

Yenokavan caves (1200 m)—Ենոքավան քարայրներ (1200 մ)

Getahovit-2 cave (960 m)—Գետահովիտ-2 քարայր (960 մ)

Hovk-1 settlement (800 m)—Հովք-1 հնավայր (800 մ)




Fig.15

## Օգտագործված գրականություն

Arimura, M., Gasparian, B. and Chataigner, C. (2012) Prehistoric sites in northwest Armenia: Kml0-2 and Tsaghkahovit. In: Matthews, R. and Curtis, J. (eds.), Proceedings of the 7th International Congress on the Archaeology of the Ancient Near East. Volume 3. Wiesbaden: Harrassowitz Verlag, pp. 135-149.

Bar-Oz, G., Weissbrod, L., Gasparian, B., Nahapetyan, S., Wilkinson, K. and Pinhasi, R. (2012) Taphonomy and zooarchaeology of a high-altitude Upper Pleistocene faunal sequence from Hovk-1 cave, Armenia. *Journal of Archaeological Science* 39, pp. 2452-2463.

Chataigner, C. (ed.) (2013) Mission Caucase, rapport scientifique 2013.

Cherkinsky, A. and Chataigner, C. (2010) 14C ages of bone fractions from Armenian prehistoric sites. *Radiocarbon* 52/2, pp. 569-577.

Gasparian, B. (2010) Landscape organization and resource management in the Lower Palaeolithic of Armenia TÜBA-AR 13, pp. 159-183.

Kalantaryan, I., Arimura, M., Hovsepyan, R. and Chataigner, C. (2012) The Archaeological Investigations of Getahovit-2 cave (Armenia) in 2011-2012: The Preliminary Results. *Aramzd* 7 (1), pp. 7-23.

Pinhasi, R., Gasparian, B., Wilkinson, K., Schreve, D., Branch, N. and Nahapetyan, S. (2006) The archaeology of Hovk, north-east Armenia: A preliminary report. *Project Gallery, Antiquity* 80 (308), <http://antiquity.ac.uk/projgall/pinhasi308/>, 09/02/2014 accessed).

Pinhasi, R., Gasparian, B., Nahapetyan, S., Bar-Oz, G., Weissbrod, L., Bruch, A.A., Hovsepyan, R. and Wilkinson, K. (2011) Middle Palaeolithic human occupation of the high altitude region of Hovk-1, Armenia. *Quaternary Science Reviews* 30, pp. 3846-3857.





ARMENIA / JAPAN

